

Ստամբուլի կոնվենցիայի վավերացման ուղին Հայաստանում

ԱՌԱՋԸՆԹԱՑ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Ստամբուլի կոնվենցիայի
վավերացման ուղին
Հայաստանում

ԱՌԱՋԸՆԹԱՑ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Լուիզ Հուփեր,
Սերգեյ Ղազիսյան

Սույն աշխատությունում ներկայացված կարծիքները
հեղինակների պատասխանատվությամբ են և
պարտադիր չէ որ դրանք արտահայտեն
Եվրոպայի խորհրդի պաշտոնական
քաղաքականությունը:

Սույն փաստաթղթերի ամբողջական կամ
մասնակի վերարտադրման կամ թարգմանության
վերաբերյալ բոլոր հարցումները պետք է
հասցեագրվեն հաղորդակցությունների
տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ
publishing@coe.int):

Սույն փաստաթղթին վերաբերող բոլոր
այլ նամակները պետք է հասցեագրվեն
Ժողովրդավարության հարցերով գլխավոր
տնօրինության գեներալին հավասարության
բաժնին (F-67075 Strasbourg Cedex կամ
gender.equality@coe.int).

Cover design and layout: Publications and Visual Identity
Division, Council of Europe

This publication has not been copy-edited by the
SPDP Editorial Unit to correct typographical and
grammatical errors.

© Council of Europe, September 2025

Printed at the Council of Europe

Բովանդակություն

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՄՔ	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7
Շրջանակը և մեթոդաբանությունը	7
ԳԼՈՒԽ 1 – ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՈՉ ԽՏՐԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	9
Ստամբուլի կոնվենցիայի ընդհանուր սկզբունքները	9
Կոնվենցիայի կիրառության ոլորտը (Հոդվածներ 2 և 3)	10
Հիմնարար իրավունքները, հավասարությունն ու ոչ խտրական վերաբերմունքը (Հոդված 4)	11
Պետությունների պարտավորությունները և պատշաճ զգուշավորությունը (Հոդված 5)	12
Գենդերային խնդիրները հաշվի առնող քաղաքականությունը (Հոդված 6)	12
ԳԼՈՒԽ 2 – ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ	15
Համապարփակ և համակարգված քաղաքականությունը (Հոդված 7)	15
Ֆինանսական ռեսուրսները (Հոդված 8)	16
Հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական հասարակությունը (Հոդված 9)	17
Համակարգող մարմինը (Հոդված 10)	17
Տվյալների հավաքագրումը և հետազոտությունը (Հոդված 11)	19
ԳԼՈՒԽ 3 – ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ	21
Ընդհանուր պարտավորությունները (Հոդված 12)	21
Իրազեկվածության բարձրացումը (Հոդված 13) (մասնավորապես վավերացման համատեքստում)	21
Կրթությունը (Հոդված 14)	23
Մասնագետների վերապատրաստումը (Հոդված 15)	24
Կանխարգելիչ միջամտության և ռեաբիլիտացման ծրագրերը (Հոդված 16)	25
Մասնավոր ոլորտի և լրատվամիջոցների մասնակցությունը (Հոդված 17)	27
ԳԼՈՒԽ 4 – ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ և ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	29
Պաշտպանություն և օժանդակություն	29
Ընդհանուր պարտավորությունները (Հոդված 18)	29
Տեղեկատվությունը (Հոդված 19)	30
Ընդհանուր աջակցության ծառայությունները (Հոդված 20)	31
Մասնագիտացված աջակցության ծառայությունները (Հոդված 22)	34
Ապաստարանները (Հոդված 23)	36
Օգնության թեժ գծերը (Հոդված 24)	37
Աջակցությունը սեռական բռնության ենթարկված անձանց համար (Հոդված 25)	38
Բռնությանն ականատես երեխաների պաշտպանությունը և աջակցությունը (Հոդված 26)	39
Հաղորդում ներկայացնելը (Հոդված 27) և մասնագետների կողմից հաղորդում ներկայացնելը (Հոդված 28)	40
ԳԼՈՒԽ 5 – ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	43
Պետական մարմինների դեմ քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցները և պատշաճ զգուշավորությունը (Հոդված 29)	43
Փոխհատուցումը (Հոդված 30)	43
Խնամակալությունը, տեսակցության իրավունքը և անվտանգությունը (Հոդված 31)	44
Հոգեբանական բռնությունը (Հոդված 33)	46
Հետամտումը (Հոդված 34)	47
Ֆիզիկական բռնությունը (Հոդված 35)	48
Սեռական բռնությունը, ներառյալ՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները (Հոդված 36)	48
Հարկադիր ամուսնությունը (Հոդված 37)	50
Կանանց սեռական օրգանների խեղումը (Հոդված 38)	50
Հղիության հարկադիր արհեստական ընդհատումը կամ հարկադիր ամլացումը (Հոդված 39)	51

Սեռական ոտնձգությունը (Հոդված 40)	51
Պատժամիջոցները և միջոցառումները (Հոդված 45)	52
Ծանրացնող հանգամանքները (Հոդված 46)	53
Վեճերի պարտադիր այլընտրանքային լուծման ընթացակարգերի կամ պարտադիր այլընտրանքային պատիժների արգելումը (Հոդված 48)	53
ԳԼՈՒԽ 6 – ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ, ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ, ԳԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ և ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ	55
Ընդհանուր պարտավորությունները, անհապաղ արձագանքումը, կանխարգելումը և պաշտպանությունը (Հոդված 49 և 50)	55
Ռիսկերի գնահատումը և ռիսկերի կառավարումը (Հոդված 51)	58
Արգելող անհետաձգելի կարգադրությունները (Հոդված 52)	60
Սահմանափակող կամ պաշտպանական որոշումները (Հոդված 53)	61
Միակողմանի և ի պաշտոնե վարույթները (Հոդված 55)	63
Բռնության ենթարկված անձի աջակցությունը վարույթներում (Հոդված 55)	63
Պաշտպանության միջոցները (Հոդված 56)	64
Իրավաբանական օգնությունը (Հոդված 57)	64
ԳԼՈՒԽ 7 – ՄԻԳՐԱՑԻԱՆ և ԱՊԱՍՏԱՆԸ	65
Կացության կարգավիճակը (Հոդված 59)	65
Գենդերային հիմքով ապաստան ստանալու հայցերը (Հոդված 60)	65
Արտաքսման արգելքը (Հոդված 61)	67
Վերապահումները	67
Եզրակացություն	67
ՀՂՈՒՄՆԵՐ	69

Երախտագիտության խոսք

Ը եղինակները ցանկանում են իրենց խորին երախտագիտությունը հայտնել Եվրոպայի խորհրդի ծրագրի թիմին՝ ամբողջ գործընթացի ընթացքում ցուցաբերած հետևողական աջակցության և աշխատանքների համակարգման համար: Նրանք ցանկանում են նաև շնորհակալություն հայտնել Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության հարցերով բաժնին վերանայման և ներդրում ունենալու համար:

Հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում նաև բոլոր այն շահագրգիռ կողմերին, որոնք նպաստել են սույն զեկույցի մշակման գործընթացին, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի, արդարադատության, ներքին գործերի, արտաքին գործերի նախարարությունների, ՀՀ Ազգային ժողովի Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի, Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներին, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ), մասնավորապես՝ Կանանց աջակցման կենտրոնին: Փաստահավաք այցերի և հետագա աշխատանքների ընթացքում նրանց արժեքավոր գաղափարներն էական դերակատարություն են ունեցել սույն զեկույցում ներկայացված եզրակացությունների և առաջարկությունների ձևավորման համար:

Ներածություն

Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում» ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում Հայաստանի իշխանությունները դիմել են Եվրոպայի խորհրդին Հայաստանում ընտանեկան բռնության առնչվող օրենքների և քաղաքականությունների՝ Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիային (Եվրոպայի խորհուրդ, 2011թ.) (այսուհետ՝ Ստամբուլի կոնվենցիա) համապատասխանեցման ուղղությամբ արձանագրված առաջընթացը գնահատելու և հետագա գործողությունների համար անհրաժեշտ առաջարկություններ ներկայացնելու խնդրանքով:

Հայաստանը բազմիցս հայտարարել է Ստամբուլի կոնվենցիան վավերացնելու իր պատրաստակամության մասին և դրա ստորագրումից ի վեր ձեռնարկել է զգալի քայլեր՝ կանանց ու աղջիկների նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտում օրենքները, քաղաքականություններն ու գործելակերպերը փոփոխելու ուղղությամբ: Ընտանեկան բռնության և քրեական օրենսգրքի առնչությամբ ընդունվել են մի շարք կարևոր օրենսդրական փոփոխություններ՝ պաշտպանության շրջանակ մշակելու, համապատասխան սահմանումներ ներառելու, կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը դատապարտելու և դրա կանխարգելումը, հետապնդումն ու պաշտպանությունը բարելավելու նպատակով: Այդ փոփոխությունները հարակից իրավական ակտերի հետ միասին պետք է օգնեն ապահովել պաշտպանության միջոցների արդյունավետ իրականացումը:

Սույն զեկույցում ներկայացված են երկրի օրենքներն ու քաղաքականությունները Ստամբուլի կոնվենցիային համապատասխանեցնելու ուղղությամբ Հայաստանի իշխանությունների ձեռնարկած քայլերի գնահատումները, վերհանված են բարելավման ենթակա ոլորտները և ներկայացված են հուսադրող գործելակերպի այնպիսի օրինակներ, որոնցում Կոնվենցիան վավերացրած երկրների օրենքներն ու քաղաքականություններն առավել մանրամասն համապատասխանեցված են Կոնվենցիայի պահանջներին: Զեկույցում փորձ է կատարվում հասցեագրել նաև Ստամբուլի կոնվենցիայի վավերացման գործընթացին դեմ հանդես եկող անձանց կողմից հնչեցված քննադատությունները: **Սույն զեկույցը ֆորմալ մշտադիտարկման զեկույց չէ և չպետք է ընդունվի որպես Կոնվենցիային համապատասխանությունը փաստաթղթավորող կամ Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի փորձագետների խմբի (ԳՐԵՎԻՈ) կամ Եվրոպայի խորհրդի տեսակետները որևէ կերպ ներկայացնող զեկույց:** Կոնվենցիայի վավերացումից հետո ԳՐԵՎԻՈ-ի կողմից իրականացվելիք լիարժեք գնահատման արդյունքում հնարավոր է, որ արձանագրվեն այլ եզրակացություններ:

Շրջանակը և մեթոդաբանությունը

Մեթոդաբանությունը ներառում է փաստաթղթային ուսումնասիրություններ, շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններ և կոնկրետ երկրի համար նախապես մշակված հարցաթերթիկի հիման վրա իրականացվող թիրախային հարցումներ: Մասնավորապես՝ այս ուսումնասիրությամբ.

- ▶ անդրադարձ է կատարվում Ստամբուլի կոնվենցիայի հետևյալ չորս հենասյուների ուղղությամբ կատարված օրենսդրական և քաղաքականության փոփոխություններին՝ **կանխարգելում, պաշտպանություն, հետապնդում և համակարգված քաղաքականություն.**
- ▶ իրականացվում է այս օրենսդրական և քաղաքականության միջոցների գործնական իրականացման, այդ թվում՝ կատարման, արդարադատության հասանելիության և ինստիտուցիոնալ համակարգման հետ կապված մարտահրավերների **արագ** գնահատում.
- ▶ իրականացվում է համապատասխան շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի, Արդարադատության, Ներքին գործերի, Արտաքին գործերի նախարարությունների, Ազգային ժողովի Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի, Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի, ինչպես նաև ԲՀԿ-ների, մասնավորապես՝ Կանանց աջակցման կենտրոնի իրազեկվածության և ընկալման մակարդակի **նախնական ուսումնասիրություն:**

Վերլուծությունն իրականացվել է գործող իրավական տեքստերի, քաղաքականության փաստաթղթերի և համապատասխան զեկույցների համապարփակ ուսումնասիրության, ինչպես նաև հիմնական շահագրգիռ կողմերին

տրամադրված հարցաթերթիկների միջոցով հավաքագրված տվյալների հիման վրա: Լրացուցիչ հարցումներ անցկացվել են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ՝ կոնկրետ հարցեր պարզաբանելու նպատակով:

Ուսումնասիրվել են Հայաստանի իրավական շրջանակը, այդ թվում՝ «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքը, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը, ինչպես նաև այլ համապատասխան ներպետական օրենսդրական ակտերը, որոնք նպաստում են ընտանեկան բռնության կանխարգելմանն ու դրան արձագանքմանը: Զեկույցում դիտարկվում են նաև Կառավարության այն առանցքային որոշումները, քաղաքականության փաստաթղթերը և ՀՀ կառավարության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի ու Ոստիկանության (ՀՀ ներքին գործերի նախարարություն) կողմից ընդունված իրավակարգավորումները, որոնք ազդում են Հայաստանի՝ գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի մոտեցման վրա:

Ընթացիկ կարգավիճակը համակարգված գնահատելու համար կիրառվելու է **կարմիր-դեղին-կանաչ** վարկանշային համակարգը՝

Կարմիր. օրենսդրական կամ քաղաքականության լուրջ բացեր
Դեղին. առաջընթաց արձանագրվել է, սակայն որոշ ոլորտներում դեռևս կան չլուծված խնդիրներ
Կանաչ. արձանագրվել է էական առաջընթաց

Այս կառուցվածքային մոտեցումն ընդհանուր պատկերացում կտա արձանագրված առաջընթացի վերաբերյալ և կընդգծի այն գերակա ոլորտները, որտեղ անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ միջոցառումներ:

Առաջարկվող միջոցառումներն իրականացնելու մոտեցումն այն միջոցառումներին առաջնահերթություն տալն է, որոնք Հայաստանը կարող էր ձեռնարկել՝ առկա հուսադրող գործելակերպերի իրականացումը շարունակելու համար: Այս առաջարկվող միջոցառումները չպետք է համարվեն համապարփակ կամ սպառիչ, այլ պետք է համարվեն Կոնվենցիայի Կողմերի կողմից հուսադրող ճանաչված միջոցառումներ և բարեփոխումներ: (ԳՐԵՎԻՌ, 2022թ.) Այդ միջոցառումներից շատերն արդեն ներառված են ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների նոր ռազմավարության և Միջոցառումների ծրագրում (այսուհետ՝ Գենդերային ռազմավարություն և Միջոցառումների ծրագիր):

Հղումների ամբողջական ցանկը կարելի է գտնել սույն փաստաթղթի վերջում:

Գլուխ 1

Նպատակները, հասկացությունները, հավասարություն ու ոչ խտրական վերաբերմունքը. ընդհանուր պարտավորություններ

Ստամբուլի կոնվենցիայի ընդհանուր սկզբունքները

Ստամբուլի կոնվենցիան՝ կատարման համար պարտադիր առաջին եվրոպական փաստաթուղթն է՝ մարդու իրավունքների և քրեական իրավունքի պայմանագիր, որն ամրագրում է կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերից նրանց պաշտպանության և կանանց նկատմամբ բռնության ու ընտանեկան բռնության կանխարգելման, հետապնդման և վերացման, բռնության ենթարկված անձանց պաշտպանության և բռնություն գործադրած անձանց պատժի չափանիշներ: Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2014 թվականի օգոստոսի 1-ին և վավերացվել ու ստորագրվել է 39 պետությունների և եվրոպական միության կողմից:

Հայաստանը Կոնվենցիան ստորագրել է 2018 թվականի հունվարի 20-ին, սակայն այն դեռևս չի վավերացրել: (Մեթոդական ցանկ. Պայմանագրերի գրասենյակ, ամսաթիվը նշված չէ): Ստորագրելիս Հայաստանը վերապահում է արել՝ կապված Կոնվենցիայի հետևյալ հոդվածների դրույթները չկիրառելու իր իրավունքի հետ՝ 30-րդ հոդվածի 2-րդ կետ՝ Փոխհատուցում, 35-րդ հոդվածի համաձայն սահմանված ոչ մեծ ծանրության հանցանքների առնչությամբ 55-րդ հոդվածի 1-ին կետ՝ Միակողմանի և ի պաշտոնե վարույթներ, 37-րդ հոդվածի առնչությամբ 58-րդ հոդված՝ Վաղեմության ժամկետներ, 59-րդ հոդված՝ Կացության կարգավիճակ:

2019 թվականի հուլիսի 25-ին Հայաստանի արդարադատության նախարար Ռուստամ Բադալյանը դիմել է Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով)՝ Հայաստանի համար Ստամբուլի կոնվենցիայի վավերացման սահմանադրական հետևանքների առնչությամբ եզրակացություն տրամադրելու խնդրանքով: Վենետիկի հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրել է մտահոգությունների պատճառ դարձած որոշ առանցքային եզրույթներ, ինչպիսիք են գենդերը, գենդերային ինքնությունը, ընտանիքը, ամուսնությունը և սեռական կողմնորոշումը: Հանձնաժողովը նաև ուսումնասիրել է միասեռ ամուսնությունների, կրթության ապահովման և մասնագետների կողմից հաղորդում ներկայացնելու ոլորտներում օրենսդրական փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը և եզրակացրել է, որ նշված ոլորտներից ոչ մեկի կարգավորումը Հայաստանից չի պահանջում ընդունել այնպիսի օրենսդրական ակտեր, որոնք կխախտեն Կոնվենցիան:

Վենետիկի հանձնաժողովը նշել է հետևյալը. «Ամփոփելով կարելի է ասել, որ, թեև Հայաստանի Սահմանադրական դատարանին է վերապահված որոշել Ստամբուլի կոնվենցիայի՝ ՀՀ Սահմանադրության հետ համապատասխանությունը, այնուամենայնիվ, Վենետիկի հանձնաժողովն այն կարծիքին է, որ Ստամբուլի կոնվենցիայում չկա որևէ դրույթ, որը կարելի է համարել ՀՀ Սահմանադրությանը «հակասող»: Ընդհակառակը, Ստամբուլի կոնվենցիայով նախատեսված հիմնական պարտավորությունը, այն է՝ կանխարգելել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության ցանկացած ձև ու պայքարել դրանց դեմ, արդեն իսկ բխում է ՀՀ Սահմանադրությունից և մարդու իրավունքների վերաբերյալ այն պայմանագրերից, որոնց Կողմ պետություն է համարվում Հայաստանը»: (Վենետիկի հանձնաժողով, Անաստաս և այլք, 2019թ.)¹

1. **Վենետիկի հանձնաժողով**, *Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլի կոնվենցիա) վավերացման սահմանադրական հետևանքների վերաբերյալ եզրակացություն*, Եզրակացություն թիվ 961/2019, CDL-AD(2019)018, Ստրասբուրգ, 2019 թվականի հոկտեմբերի 14, ընդունվել է 120-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2019 թվականի հոկտեմբերի 11-12), Եզրակացություն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2019\)018-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)018-e):

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախքան միջազգային պայմանագրի վավերացման մասին օրենքի նախագիծն Ազգային ժողովի վավերացմանը ներկայացնելը Կառավարությունը դիմում է Սահմանադրական դատարան: Սա արվում է՝ որոշելու համար, թե արդյոք պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով: Մինչ օրս Սահմանադրական դատարանը չի քննել Ստամբուլի կոնվենցիայի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, և Կառավարությունն այս գործընթացը նախաձեռնելու նպատակով որևէ պաշտոնական դիմում չի ներկայացրել: Հետևաբար, Կոնվենցիայի վավերացումը մնում է առկաիված, իսկ դրա դրույթները, թեև որպես միջազգային չափանիշներ համարվում են կարևոր, Հայաստանի իրավական համակարգում դեռևս չունեն կատարման համար պարտադիր իրավաբանական ուժ:

Ի լրումն Վենետիկի հանձնաժողովի եզրակացության՝ վավերացման նախապատրաստման գործընթացի շրջանակներում իրականացվել է օրենսդրական և քաղաքականության բարեփոխումների լուրջ ծրագիր: Ընտանեկան բռնության վերաբերյալ Հայաստանի իրավական շրջանակը հիմնականում կարգավորվում է «**Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին**» ՀՀ օրենքով (այսուհետ՝ «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին» օրենք): Օրենքն ընդունվել է 2017 թվականին և ենթարկվել է էական փոփոխությունների, մասնավորապես՝ 2024 թվականի ապրիլին: Սույն օրենքը կարևոր քայլ է Հայաստանի ներպետական իրավական համակարգի զարգացման գործում՝ ընտանեկան բռնությունը որպես մարդու իրավունքների խախտման առանձնահատուկ և ծանր ձև հասցեագրելու, ինչպես նաև տուժածների պաշտպանությունն ու աջակցությունն ապահովելու նպատակով:

2024 թվականի ապրիլի փոփոխություններով Հայաստանի 2021 թվականի քրեական օրենսգիրքը² (այսուհետ՝ 2024 թվականի փոփոխություններ) տրամադրում է կանանց նկատմամբ բռնության քրեականացման բավականին արդյունավետ շրջանակ՝ որոշ բացառություններով: Այդ բացառություններին անդրադարձ կկատարվի ստորև:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի օրենսդրական շրջանակն այժմ ցույց է տալիս պետության՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ համապարփակ ու մարդու իրավունքների վրա հիմնված արձագանքման մեխանիզմներ ստեղծելու հանձնառությունը: Այնուամենայնիվ, դրա իրականացման և հասարակական ընկալման հարցում դեռևս կան որոշ մարտահրավերներ:

Մինչև կոնվենցիայի վավերացումը, այն պետք է իշխանությունների կողմից ներկայացվի Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանը պարտավորությունների համապատասխանությունը հաստատելու համար:

Օրենսդրական կամ քաղաքականության կարևոր բացեր	
Միջոցառում	Գերակայություն
Դիմել Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանը Կոնվենցիայի համապատասխանության հարցը քննելու համար:	Բարձր ներպետական իրավունքի համաձայն՝ Կոնվենցիան չի կարող վավերացվել, քանի դեռ այս քայլը չի իրականացվել:

Կոնվենցիայի կիրառության ոլորտը (Հոդվածներ 2 և 3)

Ստամբուլի Կոնվենցիան կիրառվում է կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի, այդ թվում՝ ընտանեկան բռնության նկատմամբ, և Կողմերին խրախուսվում է սույն Կոնվենցիան կիրառել ընտանեկան բռնության ենթարկված բոլոր անձանց, այդ թվում՝ տղամարդկանց ու տղաների նկատմամբ: (Հոդված 2) Կոնվենցիայի նպատակների համար «կանանց նկատմամբ բռնություն», «ընտանեկան բռնություն», «գենդեր», «կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնություն» հասկացությունների սահմանումները ներկայացված են 3-րդ հոդվածում:

Ինչպես նշվում է Վենետիկի հանձնաժողովի կողմից՝ ՀՀ Սահմանադրության մեջ գենդերի մասին որևէ նշում չկա, սակայն դրանով երաշխավորվում է տղամարդկանց և կանանց միջև հավասարությունը (հոդված 30), ինչպես նաև որպես պետության քաղաքականության նպատակներից մեկը նախատեսվում է «կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը» (86-րդ հոդվածի 4-րդ կետ): Կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ գենդերային հիմքով բռնության վերացումը, ինչպես նաև դրան հասնելուն ուղղված միջոցառումների, այդ թվում՝ վնասակար գենդերային կարծրատիպերը փոխելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների խթանումն ամբողջությամբ համապատասխանում են այս սահմանադրական նորմին: (Վենետիկի հանձնաժողով, Անաստաս և այլք, 2019թ.)

2. Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգիրքը, որն ընդունվել է 2024 թվականի ապրիլի 12-ին, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=9204&lang=arm> [հայերեն]:

Այն փաստը, որ Հայաստանի իրավական շրջանակը ճանաչվել է որպես Կոնվենցիայի հասկացություններին համապատասխանող, և որ դրա հետ որևէ ակնհայտ անհամատեղելիություն չի արձանագրվել, պետք է նպաստի վավերացման առնչությամբ իրագրվածության մակարդակի բարձրացմանը և հանրային աջակցության ձևավորմանը:

«Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին» օրենքում 2024 թվականին կատարված փոփոխություններից հետո ընտանեկան և զուգընկերոջ նկատմամբ բռնությունն այժմ ճանաչվում է որպես բազմաշերտ երևույթ, որը ներառում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական և տնտեսական բռնության ձևեր, ինչպես նաև անտեսում և չի պահանջում համակեցություն: Կարևոր է նշել, որ Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներում (օրինակ՝ սպանությունը, ինքնասպանության հասցնելը, մարմնական վնասվածք պատճառելը, հիլոսթիան սպորինի արհեստական ընդհատում (աբորտ) կատարելը, մարդու թրաֆիքինգը և շահագործումը, առևանգումը, ազատությունից ապօրինի զրկելը, ֆիզիկական ներգործությունը) զուգընկերների կամ նախկին զուգընկերների կողմից կատարված հանցագործությունները համարվում են ծանրացնող հանգամանքներ: Ընդհանուր առմամբ, օրենսդրությունն այժմ արտացոլում է Ստամբուլի կոնվենցիայի հասկացությունները:

2024 թվականին Քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններով³ սեռը խտրական շարժառիթի դրույթների շրջանակներում ներմուծվել է որպես խտրականության արգելքով պաշտպանված հիմք, ինչը հետագայում դիտարկվում է որպես պատժի ծանրացնող հանգամանք: Սա հնարավորություն է տվել որոշ հանցագործություններ որակել որպես զենդերային հիմքով հանցագործություններ՝ այդպիսով առավել լավ արտացոլելով կանանց նկատմամբ բռնության դեպքերում հաճախ առկա խոր շարժառիթներն ու ուժի գործոնները:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Դիտարկել իրագրվածության բարձրացման նյութերում այդ փոփոխություններն առավել արդյունավետ օգտագործելու եղանակները՝ Կոնվենցիայի վավերացման առնչությամբ առկա մտահոգությունները հասցեագրելու համար:	Միջին

Հիմնարար իրավունքները, հավասարությունն ու ոչ խտրական վերաբերմունքը (Հոդված 4)

4-րդ հոդվածի 1-ին կետով հաստատվում է այն սկզբունքը, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ապրելու առանց բռնության՝ ինչպես հանրային, այնպես էլ անձնական ոլորտներում, և Կողմերը պետք է դատապարտեն կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերը և վերացնեն խտրական բնույթ կրող օրենսդրությունը և գործելակերպերը (Հոդված 4, կետ 2): Երբ օրենքով կանանց պաշտպանությունը չի իրականացվում տղամարդկանց հետ հավասար հիմունքներով, դա կարող է հանգեցնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ և 14-րդ հոդվածներով նախատեսված պաշտպանության գործառնական պահանջների խտրական խախտման:⁴ Ստամբուլի կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Կոնվենցիայի միջոցառումները պետք է իրականացվեն առանց որևէ խտրականության:

Հավասարությունը և ոչ խտրական վերաբերմունքն այն հիմնարար սկզբունքներն են, որոնք ամրագրված են թե՛ Սահմանադրությամբ, թե՛ «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին» օրենքում: Գենդերային անհավասարության հարցը հասցեագրվում է նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Նոր ընդունված Գենդերային ռազմավարությունը ներառում է միջոցառումներ՝ ուղղված կառուցվածքային անհավասարության, այդ թվում՝ կանանց քաղաքական ներկայացվածության, տնտեսական հնարավորությունների ընդլայնման և գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության, մաթեմատիկայի ուսուցման ոլորտում առկա խնդիրների հաղթահարմանը:⁵

Առկալիված կարևոր օրենսդրական նախաձեռնություններից մեկը վերաբերում է «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի ընդունմանը: Օրենքի նախագծով նախատեսվում է ներմուծել ուղղակի և անուղղակի խտրականության, խտրականության հրահրման,

3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը, որն ընդունվել է 2024 թվականի ապրիլի 12-ին, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://parliament.am/legislation.php?sel-show&ID=9204&lang=arm> [հայերեն]:

4. *Օպուզն ընդդեմ Թուրքիայի գործով* [ՄՊ] (2009թ.) վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննարկել է կանանց նկատմամբ խտրականության և բռնության միջև առկա կապը և գտել է, որ գենդերային հիմքով բռնությունը խտրականության ձև է, քանի որ այն հիմնականում դրսևորվում է կանանց նկատմամբ, և օրենքով կանանց պաշտպանությունը չի իրականացվել տղամարդկանց հետ հավասար հիմունքներով: Ավելին, Դատարանը գտել է, որ կայացված դատական որոշումները չեն ունեցել որևէ նկատելի կանխարգելիչ կամ զսպող ազդեցություն, և ավելին՝ ցուցաբերել են որոշ հանդուրժողականություն ամուսնու նկատմամբ, որը վրաերթի համար դատապարտվել է կարճաժամկետ ազատազրկման (որը փոխարինվել է տուգանքով), իսկ առավել մտահոգիչ է, որ դիմումատուին յոթ անգամ դանակահարելու համար նշանակվել է փոքր չափի տուգանք, որը վճարվել է մասերով:

5. Հայաստանի կառավարություն, Հայաստանի կառավարության 2025 թվականի ապրիլի 23-ի թիվ 482-Լ որոշում, Հայաստանի Հանրապետության 2025-2028 թվականների գենդերային ռազմավարություն, պարբերություններ 41, 77 և 114, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=206364>:

ուոնձգության, սեգրեգացիայի (խտրազատում) և զոհականացման հատակ սահմանումները՝ հասկացություններ, որոնք կարևոր են ընտանեկան միջավայրում խտրական դինամիկան բացահայտելու և լուծելու համար: Ավելին, ընդլայնելով Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները և ստեղծելով Խտրականության հարցերով խորհուրդ՝ օրենքը նպատակ ունի ամրապնդելու ինստիտուցիոնալ վերահսկողությունը, որը կարևորագույն նշանակություն ունի բռնության ձևերի մշտադիտարկման և դրանց արձագանքման համար, այդ թվում՝ ընտանիքի մասնավոր ոլորտում: Այնուամենայնիվ, սույն նախագծի փաթեթի ընդունման գործընթացում առկա են ձգձգումներ և անորոշություն:

Ինչպես շատ եվրոպական երկրների օրենսդրությունների, այնպես էլ ՀՀ օրենսդրության մեջ հատվող խտրականությանն ուղղակի հղում չի արվում⁶ (Ստամբուլի կոնվենցիա, 2011թ., Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, (ԿՆԽՎԿ), 2010թ.): Վերը նշված խտրական վերաբերմունքի դեմ պայքարի շրջանակն օրենսդրական հիմք է ստեղծում խոցելիության բազմաթիվ հիմքերի ճանաչման համար: Գենդերային ռազմավարության մեջ⁷ նույնպես հիշատակվում է խտրականության բազմաթիվ հիմքերի և հանգամանքների պատճառով խոցելի դարձած որոշ խմբերի առկայության մասին:

«Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի ընդունումն էական բարելավում կլինի և կապահովի միասնական շրջանակ՝ խտրականության բոլոր ձևերի, այդ թվում՝ հատվող և բազմակի խտրականության դեմ պայքարի համար:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Ընդունել «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագիծը:	Միջին

Պետությունների պարտավորությունները և պատշաճ զգուշավորությունը (Հոդված 5)

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի իրականացման հայեցակետերը քննարկվում են սույն զեկույցի 5-րդ և 6-րդ գլուխներում:

Գենդերային խնդիրները հաշվի առնող քաղաքականությունը (Հոդված 6)

6-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը պետք է ապահովեն գենդերային հայեցակետերի հաշվառումը Ստամբուլի կոնվենցիայի միջոցառումների մշակման և իրականացման, ինչպես նաև դրանց ազդեցության գնահատման ժամանակ: Նշված հոդվածի համաձայն՝ գենդերային ազդեցության գնահատումը պետք է իրականացվի ցանկացած միջոցառման պլանավորման փուլում, որը Կողմն իրականացնում է Կոնվենցիայի իրականացման ժամանակ, իսկ գնահատման փուլում՝ պետք է գնահատվի, թե արդյոք դրույթների ազդեցությունը տարբեր գենդերների դեպքում տարբեր է: (Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույց, 2011թ.)

Հայաստանը գենդերային հավասարությունը խթանելու և գենդերային հիմքով բռնությունը կանխարգելելու ներպետական քաղաքականության շրջանակի մշակման գործում գրանցել է աստիճանական, սակայն շոշափելի առաջընթաց: Այս զարգացումները տեղի են ունեցել մարդու իրավունքների միջազգային մեխանիզմների հետ ներգրավվածության ընդլայնման համատեքստում: Գենդերային ռազմավարությունը⁸ մշակվել է ՔՀԿ-ների ու կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպությունների հետ համագործակցությամբ և հանդիսանում է համակարգված աշխատանքի լավ օրինակ:

2025-2028 թվականների Գենդերային ռազմավարությունը նպատակ ունի զարգացնելու նախորդ (2019-2023 թվականների⁹) քաղաքականությունը և ամբողջ տեքստում ճանաչում է կանանց և աղջիկների «կրկնակի խոցելիությունը»: Այն ապահովում է համապարփակ շրջանակ տարբեր ոլորտներում գենդերային հավասարությունը խթանելու համար՝ հարկ եղած դեպքում առանձնացնելով այն ոլորտները, ինչպես օրինակ՝ մանկավարժությունը,

6. Ինչպես սահմանված է միջազգային չափանիշներում, մասնավորապես՝ ԿՆԽՎԿ-ի թիվ 28 ընդհանուր առաջարկությունում կամ Ստամբուլի կոնվենցիայում:
 7. Հայաստանի կառավարություն, Հայաստանի կառավարության 2025 թվականի ապրիլի 23-ի թիվ 482-Լ որոշում, Հայաստանի Հանրապետության 2025-2028 թվականների գենդերային ռազմավարություն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=206364>:
 8. Հայաստանի կառավարություն, Հայաստանի կառավարության 2025 թվականի ապրիլի 23-ի թիվ 482-Լ որոշում, ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թթ. ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=206364>:
 9. Հայաստանի կառավարություն, Հայաստանի կառավարության 2025 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1334-Լ որոշում, ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թթ. ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134904>:

որտեղ անհրաժեշտ է ընդլայնել տղամարդկանց ներկայացվածությունը: Վեց ռազմավարական գերակայություններից երկուսը հատուկ ուղղված են կանանց և աղջիկների նկատմամբ բռնության խնդրի լուծմանը.

1. Գենդերային բռնության կանխարգելում. այս գերակայությունն ուղղված է կանանց և աղջիկների համար առավել անվտանգ միջավայրի ստեղծմանը՝ կանխարգելելով գենդերային բռնության բոլոր ձևերը և աջակցություն տրամադրելով բռնություն վերապրածներին:

2. Ընտանեկան բռնության կանխարգելում. այս գերակայության նպատակն է կանխարգելել ընտանեկան բռնությունը և ապահովել ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն ու աջակցությունը:

Արձանագրվել է էական առաջընթաց

Գլուխ 2

Միասնական քաղաքականություն և տվյալների հավաքագրում

Համապարփակ և համակարգված քաղաքականությունը (Հոդված 7)

7-րդ հոդվածի համաձայն՝ անհրաժեշտ է մշակել օրենսդրական և արդյունավետ, համապարփակ ու համակարգված համապետական քաղաքականություն, որը կներառի Ստամբուլի կոնվենցիայի գործողության ոլորտում ընդգրկվող բոլոր բնույթի ծրագրերը կանխելու և դրանց դեմ պայքարելու միջոցառումները: Նպատակը համապարփակ արձագանք ապահովելն է՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց իրավունքները դնելով բոլոր միջոցառումների հիմքում և ապահովելով միջգերատեսչական համագործակցություն: Պետք է ներգրավել բոլոր համապատասխան դերակատարներին՝ ներառելով պետական մարմինները, ազգային, տարածաշրջանային և տեղական պաշտամենտներն ու մարմինները, մարդու իրավունքների ազգային ինստիտուտները և ՔՀԿ-ները, սակայն չսահմանափակվելով դրանցով:

Հայաստանը կարևոր քայլեր է ձեռնարկել ընտանեկան և գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի առավել համակարգված մոտեցում ձևավորելու ուղղությամբ: Գենդերային ռազմավարությունը նախատեսում է միջոցառումներ, այդ թվում՝ միջգերատեսչական համագործակցության գործելակարգերի մշակումը, մասնագիտացված աջակցության ծառայությունների (այդ թվում՝ ապաստարանների, ճգնաժամային կենտրոնների և հոգեբանական աջակցության) ընդլայնումը, իրավապահ մարմինների ծառայողների, սոցիալական և առողջապահության ոլորտի աշխատողների կարողությունների զարգացումը, իրազեկվածության բարձրացմանն ուղղված ջանքերը և ընտանեկան բռնության հարցերի ներառումը կրթության և մասնագիտական վերապատրաստման ոլորտներում: Միջոցառումների ծրագիրը ներառում է նաև տվյալների հավաքագրման համակարգերի կատարելագործումը և օրենսդրական շրջանակի, մասնավորապես՝ Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին 2017 թվականի օրենքի լրամշակումը՝ այն միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով:

Ավելին, ՀՀ կառավարության «Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունը և դրանից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» (2023 թվականի թիվ 1674-Լ խմբագրությամբ) որոշմամբ սահմանվում են մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդման ազգային գերակայությունները, այդ թվում՝ ընտանեկան և գենդերային հիմքով բռնության հետ կապված կոնկրետ գործողությունները: Սույն ռազմավարությամբ ընտանեկան բռնությունը ճանաչվում է որպես մարդու իրավունքների լուրջ խախտում: Այն ներառում է պարտավորություններ՝ ուղղված օրենսդրության կատարելագործմանը, համակարգման մեխանիզմների ամրապնդմանը և բռնության ենթարկված անձանց պաշտպանության ու աջակցության ծառայությունների զարգացմանը: Այն գերակայություն է տալիս նաև իրազեկվածության բարձրացմանն ու մասնագիտական վերապատրաստումներին և բացահայտ կերպ աջակցում է Եվրոպայի խորհրդի Ստամբուլի կոնվենցիայի վավերացմանը:

«Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարությունը և դրանից բխող 2024-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1803-Լ որոշմամբ ներդրվել է ոստիկանության համակարգի գործունեության և հաշվետվողականության բարձրացման ճանապարհային քարտեզ: Թեև ռազմավարությունը ներառում է բարեփոխումների լայն գերակայություններ, այնուամենայնիվ, այն ունի ընտանեկան բռնության հետ կապված կոնկրետ նպատակներ: Դրանք են իրավապահ մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդումը՝ նման դեպքերին արդյունավետորեն արձագանքելու համար, ռիսկի գնահատման ընթացակարգերի ներդրումը, բռնությունից տուժած անձանց ուղղորդման մեխանիզմների ստանդարտացումը և աջակցության ծառայությունների ու ապաստարանների հետ առավել սերտ գործընկերությունների խթանումը: Ռազմավարությունը նաև նախատեսում է ոստիկանության նկատմամբ հանրային վստահության բարձրացում՝ մարդու իրավունքների վրա հիմնված և բռնություն վերապրածների վրա կենտրոնացած մոտեցումների միջոցով:

Թեև ռազմավարություններն ունեն համընդգրկուն շրջանակ, այնուամենայնիվ, դրանց տեքստերում հաճախ բացակայում են ֆինանսավորման կոնկրետ աղբյուրների վերաբերյալ հղումները: Փոխարենը, համապատասխան պետական մարմինները պարտավորվում են իրենց տարեկան բյուջեների հայտերում ներառել ընտանեկան բռնության հետ կապված միջոցառումներ: Ռազմավարությունների իրականացումը հաճախ մեծապես կախված է միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող ֆինանսավորումից և աջակցությունից: Հատուկ և պաշտպանված բյուջետային հատկացումների բացակայությունը մտահոգություններ է առաջացնում ֆինանսավորման կայունության և հուսալիության առնչությամբ, հատկապես այնպիսի կարևորագույն ծառայությունների համար, ինչպիսիք են ապաստարանները, աջակցության կենտրոնները և կանխարգելմանն ուղղված ծրագրերը: Այսպիսով, այդ պարտավորությունների կատարումը կախված է ապագա ֆինանսական և քաղաքական որոշումներից և պահանջում է մանրամասն մշտադիտարկում (տե՛ս ստորև):

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Շարունակել մշակել և բարելավել ազգային ու տարածաշրջանային քաղաքականությունն ու համակարգումը:	Միջին
Հիմնվել առկա աշխատանքի վրա և ապահովել, որ գործելակարգերը մշակվեն ու ինտեգրվեն՝ միջգերատեսչական, այդ թվում՝ ոստիկանության, սոցիալական ծառայությունների, առողջապահական ծառայություններ մատուցողների և հատկապես տեղական մակարդակում ՔՀԿ-ների հետ լիարժեք համագործակցություն ծավալելու համար:	Միջին
Մշտադիտարկել և գնահատել Գենդերային ռազմավարության և Միջոցառումների ծրագրի իրականացումը:	Միջին

Ֆինանսական ռեսուրսները (Հոդված 8)

Կողմերը պետք է տրամադրեն համապատասխան ֆինանսական և մարդկային ռեսուրսներ՝ 7-րդ հոդվածում նշված միասնական քաղաքականությունն ու միջոցառումները պատշաճ կերպ իրականացնելու համար: Այս միջոցառումները ներառում են հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող գործունեությունը: Հաշվի առնելով անդամ պետությունների տարբեր տնտեսական իրավիճակները՝ Կոնվենցիան մշակողներն այս պարտավորության շրջանակը սահմանափակել են «համապատասխան ռեսուրսներով», ինչը նշանակում է, որ հատկացվող ռեսուրսները պետք է համապատասխանեն սահմանված թիրախի կամ իրականացվելիք միջոցառմանը:¹⁰

«Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին» օրենքով սահմանվում է բռնության ենթարկված անձանց պաշտպանությանը և ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված ծառայությունների ֆինանսավորման իրավական շրջանակը: 21-րդ հոդվածի համաձայն՝ աջակցության կենտրոնների և ապաստարանների ֆինանսավորումն իրականացվում է աղբյուրների համադրության, այդ թվում՝ հիմնադրների միջոցների, պետական բյուջեի հատկացումների և օրենքով չարգելված այլ աղբյուրների, մասնավորապես՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունների միջոցով: Ֆինանսական աջակցություն տրամադրելու ընթացակարգերը հետագայում հստակեցվել են Կառավարության (2025 թվականի հունվարի 16-ի) թիվ 51-Ն որոշմամբ:

Ավելին, 14-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով ներդրվել է բռնության ենթարկվածներին ժամանակավոր աջակցություն ցուցաբերելու նպատակով հատուկ պետական հաշվեհամար, որի միջոցները ձևավորվում են պետական հատկացումներից և նվիրատվություններից: Օրենքի համաձայն՝ Կառավարությունը պետք է հաստատի նաև ծառայությունների գործառնական չափանիշները, ինչպես նաև աջակցությունը պետք է տրամադրվի մրցակցային գործընթացների միջոցով: Ֆինանսական աջակցություն տրամադրելու ընթացակարգերը հետագայում հստակեցվել են Կառավարության (2025 թվականի հունվարի 16-ի) թիվ 51-Ն որոշմամբ: Այս որոշմամբ կարգավորվում է հաշվեհամարի բացման և տնօրինման կարգը՝ նախատեսելով, որ դրա միջոցները կարող են ձևավորվել պետական բյուջեի հատկացումներից, ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվություններից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից: Հաշվեհամարի տնօրինումն իրականացվում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, որը նաև պատասխանատու է ժամանակավոր աջակցության, մասնավորապես՝ անհետաձգելի օգնության, կացարանով ապահովման կամ վերաինտեգրման աջակցությանն ուղղված հատկացումների կառավարման համար:

Այս գործիքներն էական առաջընթաց են Ստամբուլի կոնվենցիայի 8-րդ հոդվածի պահանջների կատարման ուղղությամբ: Այնուամենայնիվ, ինչպես նշվել է վերևում, պետական ֆինանսավորման փաստացի ծավալն ու կանխատեսելիությունը մնում են մտահոգիչ, և բազմաթիվ ծառայություն մատուցողներ շարունակում են ապավինել

10. «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական գեկույց (2011թ.), պարբերություն 67:

արտաքին դոնորների աջակցությանը: Բյուջետային հատկացումների մեծացումը և պետական ֆինանսավորմամբ աջակցության համակարգի հասանելիության ընդլայնումը, հատկապես գյուղական համայնքներում, կարևոր կլինեն բռնության ենթարկված բոլոր անձանց համար՝ համապարփակ պաշտպանություն և աջակցություն ապահովելու նպատակով: Հայաստանը պետք է ձգտի ապահովել կայուն, համարժեք և թափանցիկ պետական ֆինանսավորում, մասնավորապես՝ ընտանեկան բռնության արմատական պատճառները հասցեագրող մասնագիտացված ծառայությունների և միջամտությունների համար:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Իրականացնել Գենդերային ռազմավարության և Միջոցառումների ծրագրի, ինչպես նաև միջամտության այլ ոլորտների ֆինանսական պահանջների մշտադիտարկում՝ ֆինանսական միջոցների ցանկացած պակաս հայտնաբերելու համար:	
Տե՛ս նաև մասնագիտացված կազմակերպությունների ֆինանսավորման համակարգը փոխելու վերաբերյալ առաջարկությունը՝ ֆինանսավորման պայմանագրերի ժամկետը մեկ տարուց դարձնելով երեքից հինգ տարի՝ կայունություն ապահովելու և ՔՀԿ-ների համար տարեկան կտրվածքով մրցույթներին մասնակցելու հետ կապված ֆինանսական ծախսերը նվազեցնելու համար՝ այդպիսով հնարավորություն ստեղծելով այդ միջոցներն ուղղելու ծառայությունների մատուցմանը:	

Հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական հասարակությունը (Հոդված 9)

Ծառայությունների ճնշող մեծամասնությունն ընտանեկան բռնության ենթարկված անձանց և կանանց նկատմամբ բռնության այլ ձևերի ենթարկվածներին հաճախ տրամադրվում է կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների և այլ մասնագիտացված հասարակական կամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից: Ի նշան այդ կազմակերպությունների դերակատարության և կատարած ներդրման՝ Ստամբուլի կոնվենցիան պահանջում է, որ Կողմերը ճանաչեն, խրախուսեն և սատարեն այս աշխատանքն ու արդյունավետ համագործակցություն հաստատեն այդ կազմակերպությունների հետ: Թեև այս հոդվածը հստակորեն վերաբերում է կանանց նկատմամբ բռնությանը, այնուամենայնիվ, այն չպետք է խանգարի Կողմերին կատարել առավել լայնածավալ միջոցառումներ և նպաստել իրականացվող աշխատանքին՝ ներառելով ընտանեկան բռնության ավելի լայն դրսևորումները, այդ թվում՝ տղամարդկանց և տղաների նկատմամբ:

Ներկայումս Հայաստանում ՔՀԿ-ների և պետական մարմինների բոլոր մակարդակներում առկա է համագործակցության բարձր մակարդակ: Այդ համագործակցության հաստատմանը նպաստում են Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 14-րդ հոդվածն ու դրա կիրառությունը, ինչպես նաև ազգային համակարգման մեխանիզմներին, մասնավորապես՝ Ընտանեկան բռնության կանխարգելման խորհրդին մասնակցությունը:

Սրա մասին վկայում են այն ՔՀԿ-ները, որոնք ակտիվ համագործակցություն են ծավալում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ոստիկանության հետ, նշում են, որ ֆորմալ գործելակարգերը գործում են արդյունավետ, ֆինանսավորումը կայուն և ներկայումս կանխատեսելի է (թեև ոչ բավարար):

Համակարգող մարմինը (Հոդված 10)

Կոնվենցիայի համաձայն՝ անհրաժեշտ է ստեղծել համակարգող մարմին, որը պատասխանատու կլինի Կոնվենցիայի գործողության ոլորտում ընդգրկվող բռնության բոլոր ձևերի կանխարգելման և դրանց դեմ պայքարի համար մշակված քաղաքականության ու միջոցառումների համակարգման, իրականացման, մոնիթորինգի և գնահատման համար: Համակարգող մարմինը պատասխանատու է տվյալների հավաքագրման գործընթացի համակարգման (տե՛ս 11-րդ հոդվածը) և արդյունքների վերլուծության ու տարածման համար: Քաղաքականության գնահատումը պետք է վստահվի այն կազմակերպությանը կամ կազմակերպություններին, որոնք կարող են այս խնդիրը լուծել ինքնուրույն, իսկ իդեալական տարբերակում ցանկալի կլինի, որ այդ կառույցն առանձին լինի կանանց նկատմամբ բռնության համակարգման համար պատասխանատու կառույցից:¹¹ Համակարգող մարմինը պետք է կարողանա նաև հաղորդակցվել և համագործակցային հարաբերություններ ստեղծել այլ Կողմերի համակարգող մարմինների հետ:

11. Բեզգիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՌ-ի ելակետային գնահատման զեկույցներ, պարբերություն 42, Հյուսիսային Մակեդոնիա, պարբերություն 59, Սերբիա, պարբերություն 42, Համակարգող մարմինների վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի քաղաքականության համար պատասխանատու համակարգող մարմինների ստեղծում. Ստամբուլի կոնվենցիայի 10-րդ հոդված»: (Անդրասեթ, 2023թ.).

Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է ազգային ռազմավարությունների մշակման և իրականացման, կանխարգելմանն ուղղված ծրագրերի վերահսկման, տվյալների հավաքագրման գործընթացի համակարգման և մասնագիտական վերապատրաստումների կազմակերպման համար:

Հարկ է նշել, որ նախարարությունը կառավարում է նաև Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման բազմաշահառու խորհուրդը¹², որը հասարակական հիմունքներով գործող խորհրդատվական մարմին է՝ միջգերատեսչական միջոցառումները համաձայնեցնելու, ռազմավարական պլանավորման և բարեփոխումների վերաբերյալ առաջարկությունների իրականացմանը նպաստելու, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը խթանելու համար: *Վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1685-Ս որոշմամբ* հաստատվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն առընթեր գործող՝ Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման խորհրդի անհատական կազմը:¹³ Այս խորհրդի կազմում ընդգրկված են պետական մարմինների և ՔՀԿ-ների, մասնավորապես՝ Կանանց ռեսուրսային կենտրոնի¹⁴, Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի¹⁵, ինչպես նաև երեխաների ու ընտանիքների աջակցության ոլորտում աշխատող այլ կազմակերպությունների տարբեր ներկայացուցչություններ: Շահագրգիռ կողմերի հետ անցկացված հարցազրույցների արդյունքները ցույց են տալիս, որ Խորհրդի կազմը, ամենայն հավանականությամբ, էլ ավելի կընդլայնվի՝ ներառելով ավելի մեծ թվով ՔՀԿ-ներ, ապահովելով առավել մեծ մասնակցություն և բազմակարծություն, մասնավորապես՝ շրջաններից և խոցելի բնակչության հետ աշխատող խմբերից:

Խորհրդի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները հրապարակվում են նախարարության պաշտոնական կայքում՝ նպաստելով թափանցիկությանն ու հաշվետվողականությանը:

Համակարգող մարմնից բացի ստեղծվել են նաև այլ մեխանիզմներ, այդ թվում՝ Գենդերային թեմատիկ խումբը, Գենդերային հիմքով բռնության հարցերով ենթաաշխատանքային խումբը և Միջգերատեսչական նորաստեղծ աշխատանքային խումբը (հավելյալ տեղեկությունների համար տե՛ս 18-րդ հոդվածը):

Մշտադիտարկում և գնահատում

Գենդերային հավասարության ռազմավարությամբ նախատեսվում է, որ Միջոցառումների ծրագրով սահմանված յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու պետական մարմինները պետք է զեկույց ներկայացնեն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որը կհամակարգի մշտադիտարկման աշխատանքները և կարող է վերջնական զեկույցի նախագիծը ներկայացնել անկախ փորձագիտական եզրակացության: Կանանց հարցերով խորհրդի կամ իր աշխատանքային խմբի գործունեության շրջանակներում կիրականացվի շարունակական մշտադիտարկում և գնահատում: Ռազմավարության գնահատումը կարող է նաև իրականացվել հետևյալի միջոցով՝ մշտադիտարկման ցուցանիշներ և պաշտոնական ազգային վիճակագրությունից դուրս բերված գենդերային ցուցանիշների, քաղաքացիական հասարակության կողմից իրականացված հետազոտությունների և զեկույցների հիման վրա մշակված վերլուծություն:¹⁶

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը դիմել է Եվրոպայի խորհրդին, գնահատման գործընթացի մշակման հարցում աջակցություն տրամադրելու խնդրանքով, և սկսել է իրականացնել «Ընտանեկան բռնության մասնագիտացված աջակցության ծառայությունները Հայաստանում. կարողությունների, որակի և շարունակական բարելավման ապահովում» զեկույցում ներկայացված առաջարկությունները (Զեյմա և Հովակիմյան, 2024թ.):

12. Հայաստանի կառավարություն, Հայաստանի կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի թիվ 786-Լ որոշում, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=202687>:

13. Խորհրդի կազմը հաստատում է վարչապետը և ներառում է մինչև 29 անդամ: Խորհրդի կազմում ընդգրկված են համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների (մասնավորապես՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի, Առողջապահության, Արդարադատության, Ներքին գործերի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների), իրավապահ մարմինների, Սարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, և որ ամենակարևորն է, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Մասնավորապես՝ Խորհրդի կազմում 8 տեղ է հատկացված առնվազն երեք տարվա համապատասխան փորձ ունեցող ՔՀԿ-ներին և 11 տեղ՝ ընտանեկան բռնություն վերապրածներին օրենքով սահմանված ծառայություններ մատուցող աջակցության կենտրոններին և ապաստարաններին:

14. 2003 թվականին հիմնադրված **Կանանց ռեսուրսային կենտրոնը (ԿՌԿ)** Հայաստանում մասնագիտացված ՔՀԿ է, որը զբաղվում է կանանց և աղջիկների իրավունքների ընդլայնմամբ, գենդերային խտրականության և բռնության դեմ պայքարով, ինչպես նաև շահերի պաշտպանության, կրթության և աջակցության ծառայությունների միջոցով համակարգային ու մշակութային փոփոխությունների խթանմամբ:

15. 2008 թվականին հիմնադրված **Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը (ՍԲՃԿ)** մասնագիտացված ՔՀԿ է, որը զբաղվում է Հայաստանում սեռական բռնության ենթարկված անձանց աջակցությամբ և իրավունքների պաշտպանությամբ: ՍԲՃԿ-ն մատուցում է համապարփակ ծառայություններ, այդ թվում՝ հոգեբանական, իրավաբանական և սոցիալական աջակցություն, ինչպես նաև 24/7 ռեժիմով գործում է թե՛ զօր ծառայություն: Կազմակերպությունն իրականացնում է նաև հանրային իրազեկման աշխատանքներ, մասնագիտացված վերապատրաստումներ և շահերի պաշտպանության նախաձեռնություններ, որոնք ուղղված են գենդերագային քաղաքականությունների մշակմանը և գրհակենտրոն արդարադատության համակարգի խթանմանը: ՍԲՃԿ-ն նպաստել է սեռական բռնության և աշխատավայրում սեռական ոտնձգության կանխարգելմանն ուղղված օրենսդրական բարեփոխումների իրականացմանը:

16. Հայաստանի կառավարություն, Հայաստանի կառավարության 2025 թվականի ապրիլի 23-ի թիվ 482-Լ որոշում, Հայաստանի Հանրապետության 2025-2028 թվականների գենդերային ռազմավարություն, պարբերություններ 221-224՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=206364>

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Ամբողջությամբ իրականացնել միջգերատեսչական համագործակցության գործելակարգերի մշակման առնչությամբ Ջեյմսի և Հովակիմյանի զեկույցում ներկայացված առաջարկությունները:	Միջին
Ապահովել, որ գնահատումն իրականացվի մշտադիտարկումից անկախ:	Միջին

Տվյալների հավաքագրումը և հետազոտությունը (Հոդված 11)

11-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը պետք է հավաքագրեն Կոնվենցիայի գործողության ոլորտում ընդգրկվող բռնության բոլոր ձևերի վերաբերյալ տարաբաժանված վիճակագրական տվյալներ, օժանդակելն կանանց նկատմամբ բռնության ոլորտում հետազոտությունների անցկացմանը և կատարեն բնակչության շրջանում հարցումներ՝ կանանց նկատմամբ բռնության տարածվածությունն ու զարգացման միտումները գնահատելու համար:¹⁷

i. Վարչական տվյալների հավաքագրում

«Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պետք է ապահովի ընտանեկան բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման իրականացումը: Համապատասխան ընթացակարգերը լրացուցիչ սահմանվում են Կառավարության 2019 թվականին ընդունված թիվ 1381-Ն որոշմամբ, որը կարգավորում է տվյալների հավաքագրման, անանունացման, համակարգման և վիճակագրորեն մշակման եղանակը:

2024 թվականին օրենսդրական փոփոխություններից հետո ստեղծվեց տվյալների կենտրոնացված շտեմարան՝ ընտանեկան բռնության դեպքերի հաշվառման և մշտադիտարկման համար: Հայաստանի կառավարության համաձայն՝ համակարգի ներդրման նպատակն է ունենալ միասնական տվյալների շտեմարան և օպտիմալացնել ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության համար պատասխանատու մարմինների գործունեությունը: Համակարգի միջոցով ստացվող քանակական և որակական տվյալները հիմք կծառայեն հետագա ռազմավարական ծրագրերի և գործողությունների մշակման համար: Կենտրոնացված գրանցամատյանում ընդգրկված են մի շարք ցուցանիշներ, այդ թվում՝ բռնության ենթարկված անձանց և բռնություն գործադրած անձանց բնութագրերը, բռնության տեսակներն ու հաճախականությունը, պաշտպանության միջոցները և դատական վարույթի արդյունքները, և ներառված են մի շարք հիմնական կառույցների, այդ թվում՝ Ոստիկանության, Քննչական կոմիտեի և Դատական դեպարտամենտի տվյալները: Ուշագրավ է, որ տվյալների համակարգում ներառված են նաև աջակցության կենտրոններից և ապաստարաններից ստացված տեղեկությունները, որոնք կարող են ուղղակիորեն կապված չլինել այդ պետական մարմինների հետ: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պետք է վեց ամիսը մեկ անգամ իր պաշտոնական կայքում հրապարակի այդ տվյալները՝ այդպիսով խթանելով ընտանեկան բռնության նկատմամբ պետական արձագանքի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Սա ողջունելի զարգացում է, սակայն դեռևս առկա են բացեր և սահմանափակումներ՝ կապված կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության այլ ձևերի հետ, որոնք կարող են տեղի ունենալ հասարակական վայրերում, աշխատավայրերում կամ այլ սոցիալական համատեքստերում: Սա սահմանափակում է ազգային տվյալների շրջանակը և բռնության մյուս լուրջ դրսևորումները թողնում է չարձանագրված և չհաղթահարված:

ii. Բնակչության շրջանում հարցումներ

Սա ներառում է ազգային հարցումները, իրավական վերլուծությունները, կարիքների գնահատումներն ու մշտադիտարկման զեկույցները: Թեև Հայաստանի վիճակագրական կոմիտեն իրականացրել է որոշ թեմատիկ հարցումներ, մասնավորապես՝ Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության 2021 թվականի ազգային հետազոտությունը, այնուամենայնիվ՝ դրանք չեն իրականացվել համակարգված ձևով: Բնակչության շրջանում կանոնավոր հետազոտությունների բացակայությունը սահմանափակում է միտումների վերհանման և իրավական ու քաղաքականության միջոցառումների երկարաժամկետ ազդեցությունը գնահատելու կարողությունը: Հարցման տվյալները կարևոր են, քանի որ բազմաթիվ բռնության ենթարկվածներ չեն դիմում գերատեսչությունների աջակցությանը, հետևաբար, նրանց վերաբերյալ տվյալները չեն ներառվում պաշտոնական տվյալներում:

iii. Հետազոտություն

Վերջին տարիներին Հայաստանում իրականացվել են կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ մեծ թվով հետազոտություններ: Բռնության տարածվածության, ձևերի, ռիսկի գործոնների և հետևանքների վրա լույս սփռելու նպատակով իրականացվել են տարբեր որակական և քանակական ուսումնասիրություններ: Վերը նշված ազգային հարցումներից բացի, ՔՀԿ-ների, մասնավորապես՝ Կանանց աջակցման կենտրոնի, Կանանց

17. Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության մասին տվյալների հավաքագրման և հետազոտության ապահովումը. Ստամբուլի կոնվենցիայի 11-րդ հոդված» զեկույցը, (Ուլբի, 2016թ.):

ռեսուրսային կենտրոնի և Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի կողմից իրականացվել են բազմաթիվ ուսումնասիրություններ: Ակադեմիական ինստիտուտները նույնպես իրենց ներդրումն են ունեցել գենդերային հարցերին նվիրված թեզերի, ատենախոսությունների և հետազոտական հրապարակումների միջոցով:

Պետությունը չի ինստիտուցիոնալացրել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ հետազոտությունների կանոնավոր ֆինանսավորման կամ պատվիրման մեխանիզմը: Արդյունքում, հետազոտության ուղղությունները հաճախ ձևավորվում են ոչ թե երկարաժամկետ ազգային ռազմավարություններով, այլ դոնորների գերակայություններով: Պետական ֆինանսավորմամբ իրականացվող հետազոտությունների բացակայությունը նույնպես սահմանափակում է արդյունքների ինտեգրումը քաղաքականության մշակման և ծառայությունների մատուցման գործընթացներում և մտահոգություններ է առաջացնում սպացույցների ստեղծման կայունության և շարունակականության առնչությամբ: Այս ոլորտում թիրախային հետազոտությունների համար պետական միջոցների հատկացումը նշանակալի քայլ կլիներ միջազգային չափանիշներին համապատասխանելու և տեղական մակարդակով գենդերացված տվյալների ու վերլուծությունների վրա հիմնված քաղաքականությունների մշակման ուղղությամբ:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
<p>Ընդլայնել տվյալների շտեմարանի օգտագործումը՝ ներառելով կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերաբերյալ տվյալների հավաքագրումը: Առկա տեղեկությունների համաձայն՝ տվյալների բազան դեռևս գտնվում է ձևավորման փուլում: Նպատակահարմար կլինի ապահովել, որ այն ծառայի սահմանված նպատակին՝ մինչև դրա ընդլայնումն ու լրացուցիչ ոլորտների ընդգրկումը: Կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերաբերյալ տվյալների հավաքագրումը դեռևս կարելի է իրականացնել այլ միջոցներով: Անհրաժեշտ է մշտադիտարկել նոր տվյալների շտեմարանում մուտքագրվող տվյալների հետևողականությունն ու ամբողջականությունը՝ տվյալների շտեմարանի ճիշտ օգտագործումն ապահովելու համար: Խնդիրների ի հայտ գալու դեպքում պետք է կազմակերպել վերապատրաստումներ և (կամ) տրամադրել լրացուցիչ ցուցումներ:</p>	Միջինից ցածր
<p>Ապահովել բնակչության շրջանում կանոնավոր հարցումների անցկացումը՝ գենդերային հիմքով բռնության և ընտանեկան բռնության տարածվածությունը գնահատելու համար:</p>	Միջին

Գլուխ 3

Կանխարգելում

Սույն գլուխը ներկայացնում է կանխարգելման ոլորտում մի շարք ընդհանուր և առավել կոնկրետ պարտավորություններ: Դրանք են վաղ կանխարգելման միջոցառումները, ինչպիսիք են՝ կանանց և տղամարդկանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելներում փոփոխությունը, նախապաշարմունքների և գենդերային կարծրատիպերի վերացումը, ինչպես նաև գենդերային հավասարության հասնելու և կանանց նկատմամբ բռնության կանխարգելման գործում հասարակության բոլոր անդամներին, այդ թվում՝ տղամարդկանց և տղաներին ներգրավելու ուղղված միջոցառումները: Այն նաև ներառում է ավելի կոնկրետ կանխարգելիչ միջոցառումներ, ինչպիսիք են՝ իրազեկվածության բարձրացումն ու արշավները, բոլոր մասնագետների համապատասխան վերապատրաստումը, դպրոցներում ու այլ միջավայրերում կրթությունը, և վերջինը, սակայն ոչ պակաս կարևորը, այնպիսի միջոցառումները, ինչպիսիք են բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերը՝ հետագա կրկնագրհացումը կանխելու համար:

Ընդհանուր պարտավորությունները (Հոդված 12)

12-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը պետք է ձեռնարկեն միջոցառումներ՝ կանանց և տղամարդկանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելներում փոփոխությունները խթանելու համար՝ կանանց ստորադասության կամ կանանց և տղամարդկանց կարծրատիպային դերաբաժանման գաղափարի վրա հիմնված նախապաշարմունքները, սովորույթները, ավանդույթներն ու մյուս բոլոր երևույթները վերացնելու նպատակով: Հենվելով այն ընկալման վրա, որ կանանց նկատմամբ բռնությունը ոչ միայն գենդերային անհավասարության հետևանք է, այլ նաև պատճառ՝ Կողմերը պետք է նաև ձեռնարկեն միջոցառումներ՝ կանանց իրավագործմանն ուղղված ծրագրերն ու գործունեությունը խթանելու համար:

Գենդերային ռազմավարությունը և Միջոցառումների ծրագիրը ներառում են այդ ընդհանուր պարտավորություններին վերաբերող բաժիններ՝ ուղղված հասարակության մեջ կանանց դիրքի բարելավմանը, քաղաքականության մեջ նրանց ներգրավվածությանը, զբաղվածությանն ու կրթությանը: Օրինակ՝ կան կոնկրետ միջոցառումներ, որոնք միտված են կրթության ոլորտում տղամարդկանց և կանանց միջև առավել մեծ հավասարության ապահովմանը՝ ընդունելով, որ առկա է տղամարդու ռուտինների պակաս:

Իրազեկվածության բարձրացումը (Հոդված 13) (մասնավորապես վավերացման համատեքստում)

Կողմերը պետք է խթանեն Կոնվենցիայի գործողության ոլորտում ընդգրկվող բռնության բոլոր ձևերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավների և ծրագրերի անցկացումը կամ նախաձեռնեն նման արշավներ ու ծրագրեր: (ԳՐԵՎԻՈ, 2022թ.):

Հայաստանում կարևորագույն առաջընթացներից են, ոչ ճշգրիտ տեղեկատվության և ապատեղեկատվության վերաբերյալ արշավները, որոնք ազդում են հանրության կողմից Կոնվենցիայի ընկալման վրա: Այս երևույթին հակազդելու համար կարևոր է ապահովել, որ Ստամբուլի կոնվենցիայի, դրա բովանդակության և պահանջների վերաբերյալ տարածված թուրքմբռնումները վերացվեն: Մասնավորապես, ինչպես նշել է Վենետիկի հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով, Անաստաս և այլք, 2019թ., տե՛ս վերևում՝ 5-րդ բաժնում), նախկինում բարձրաձայնվել են մտահոգություններ այն մասին, թե արդյոք Կոնվենցիան համապատասխանում է ՀՀՍահմանադրությանը և հասարակության արժեքներին: Այս մտահոգությունները պայմանավորված են Կոնվենցիայում գործածված տերմինաբանությամբ, մասնավորապես՝ այն պահանջին, որ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն վաղեմի ձևավորված անհավասարությունը հաղթահարելու ուղղությամբ, ինչպես նաև այն թուրքմբռնումով, որ Կոնվենցիայի վավերացումը կարող է վտանգի տակ դնել ընտանիքի ավանդական մոդելը կամ պարտադրել նույնասեռ ամուսնությունների ճանաչումը, միջամտել ծնողի՝ իր երեխաների կրթության մասին հոգ տանելու իրավունքին և նախատեսել պարտադիր հաղորդում ներկայացնելու պահանջ: Նախկինում Վենետիկի հանձնաժողովն այս բոլոր հարցերին մանրամասնորեն անդրադարձել է իր եզրակացությունում, սակայն հարկ է նշել, որ այդ մտահոգությունները պետք է հասցեագրվեն, իսկ հասարակության մեջ տարածված սխալ պատկերացումները վերացվեն՝ իրազեկվածության բարձրացման միջոցառումների շնորհիվ:


Իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումները ներկայումս սահմանված են «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին» օրենքում (օրինակ՝ 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն առանձին կամ քաղաքացիական հասարակության և այլոց հետ համագործակցությամբ պետք է մասնակցեն հանրության իրազեկմանը, իսկ 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պետք է հրապարակի «Թեժ գիծ» ծառայության, ապաստարանների և աջակցության կենտրոնների վերաբերյալ տեղեկությունները): Գենդերային ռազմավարությամբ և Միջոցառումների ծրագրով նախատեսված են իրազեկվածության բարձրացմանն ուղղված մեծ թվով միջոցառումներ, այդ թվում՝ ընտանեկան բռնության, գործող աջակցության ծառայությունների և պաշտպանության մեխանիզմների մասին բնակչության իրազեկմանն ուղղված միջոցառումներ:

Հայերենով հասանելի հատուկ կայքերը մատչելի ձևով տրամադրում են ընդհանուր տեղեկատվություն **ապաստարանների, աջակցության կենտրոնների ծառայությունների և ժամանակավոր ֆինանսական օգնության ծրագրի վերաբերյալ:**

Զուգահեռաբար, հանրային իրազեկվածության բարձրացմանը նպաստել են նաև անկախ լրատվամիջոցներն ու միջազգային կազմակերպությունները: «EVN Report» կազմակերպության կողմից հրապարակված «Ստամբուլի կոնվենցիան՝ հակիրճ» և Հայկական ժամանակ օրաթերթում հրապարակված «Ստամբուլի կոնվենցիան. վտանգ, թե հեռանկար Հայաստանի համար» հոդվածները կարևոր դերակատարություն են ունեցել Ստամբուլի կոնվենցիայի բովանդակության և նպատակների պարզաբանման, ինչպես նաև հանրային դիսկուսիայի առկա թյուրըմբռումների վերացման հարցում: Հետք օրաթերթում տպագրված՝ «Թաքնված համաճարակ. Ընտանեկան բռնությունը Հայաստանում» հետաքննողական լրագրողների հոդվածը նույնպես վերհանել է ընտանեկան բռնության ոլորտում համակարգային բացերն ու հասարակական տաբուները:

Հայաստանի իշխանությունները տարբեր լրատվամիջոցներով իրականացրել են մի շարք իրազեկման արշավներ: Եվրոպայի խորհուրդը մշակել է մի շարք **տեղեկատվական գործույցներ, ուղեցույցներ և այլ աշխատություններ**, որոնք նախատեսված են բարձրացնելու կանանց նկատմամբ բռնության և Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ հասարակության իրազեկվածությունը:



Existing materials in Armenian

Կոնվենցիայի վերաբերյալ խորհրդարանականների համար Ուղեցույցը, հասանելի է հայերենով (Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով, 2019թ.): Եվրոպայի խորհուրդը «Կանայք ընդդեմ բռնության Եվրոպա» (WAVE) ցանցի և Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) գործակալության՝ «ՄԱԿ կանայք» կազմակերպության հետ համագործակցությամբ **քաղաքացիական հասարակության և պետական կառույցների** համար մշակել է ամբողջական փաթեթ՝ Կոնվենցիայի տարածման, ինչպես նաև դրա առնչությամբ առկա թյուրըմբռումները վերացնելու նպատակով հաղորդակցման և շահերի պաշտպանության իրազեկման արշավներ իրականացնելու համար:

Այլ կազմակերպություններ ֆինանսավորել և իրականացրել են իրազեկմանն ծրագրեր, մասնավորապես՝ «ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության. Միասին ընդդեմ գենդերային կարծրատիպերի և բռնության» ծրագիրը (2-րդ փուլ), որն իրականացվել է Եվրոպական միության ֆինանսավորմամբ՝ ՄԱԿ Կանայք և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) համատեղ ջանքերով: 2023 թվականի դեկտեմբերին պատրաստվել է Գենդերային հավասարության հարցերում տղամարդկանց և տղաներին ներգրավելու ձեռնարկ: (Ուելշ, 2023թ.)

Կարևոր է, որ իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների ազդեցությունը մշտադիտարկվի՝ դրանց արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Ապահովել Կոնվենցիայի և դրա նպատակների վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը՝ թյուրմբռնումները վերացնելու, ինչպես նաև դրա ընդունմանը խանգարող անհիմն խոչընդոտները կանխելու համար:	Բարձր Սա նախատեսված է Միջոցառումների ծրագրում:
Անհրաժեշտ է խրախուսել համացանցի միջնորդներին, ինչպես նաև տեխնոլոգիական ընկերություններին, որպեսզի վերջիններս համագործակցեն կանանց նկատմամբ բռնության հարցերով զբաղվող ՔՀԿ-ների հետ՝ իրենց իրազեկվածության բարձրացման և այլ աշխատանքներում:	Միջինից ցածր

Կրթությունը (Հոդված 14)

Հարկ եղած դեպքերում Կողմերը ձեռնարկում են անհրաժեշտ քայլեր, որպեսզի ֆորմալ ուսումնական ծրագրերում և կրթական բոլոր մակարդակներում ընդգրկվեն կանանց և տղամարդկանց միջև հավասարության, կարծրատիպերից զերծ գենդերային դերերի, փոխադարձ հարգանքի, միջանձնային հարաբերություններում տարաձայնություններն առանց բռնության լուծելու, կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության և անձնական անձեռնմխելիության իրավունքի թեմաներով ուսումնական նյութեր՝ մշակված ըստ ուսումնասողների զարգացող ունակությունների: 14-րդ հոդվածի 2-րդ կետի հոդվածի համաձայն՝ Կողմերը պետք է ձեռնարկեն քայլեր ոչ ֆորմալ կրթական հաստատություններում, մարզական, մշակութային և ժամանցի հաստատություններում ու լրատվամիջոցներում նշված սկզբունքների ներդրումը խթանելու ուղղությամբ:

ՀՀ Սահմանադրությանը հնարավոր հակասության վերաբերյալ այս հոդվածի շուրջ բարձրացված մտահոգությունների համատեքստում Վենետիկի հանձնաժողովը հայտնել է, որ՝

«110. Ստամբուլի կոնվենցիան չի միջամտում ծնողների՝ իրենց երեխաներին սեփական նախասիրությունների համաձայն կրթելու իրավունքին: Փաստացի այս հարցը մնում է Ստամբուլի կոնվենցիայի շրջանակից դուրս, որը հիմնականում պետություններին խրախուսում է դպրոցական ուսումնական ծրագրերում ներառել դրույթում նշված հարցերի վերաբերյալ ուսումնական նյութեր: Այս առնչությամբ Ստամբուլի կոնվենցիայի համաձայն, Կողմ պետություններին տրվում է լայն հայեցողություն՝ որոշելու, թե ինչպես (ինչ ծավալով և ինչ ձևով) են իրենք Ստամբուլի կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ կրթելու իրենց բնակչությանը: Հետևաբար ակնհայտ է, որ չկա որևէ հակասություն Ստամբուլի կոնվենցիայի 14-րդ հոդվածի և ՀՀՍահմանադրության միջև»: (Վենետիկի հանձնաժողով, Անաստաս և այլք, 2019թ.)

Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը պատասխանատու է ընտանեկան բռնության կանխարգելումը կրթական համակարգում ինտեգրելու համար: Սա ներառում է ուսուցիչների և դաստիարակների համար ընտանեկան բռնության դեպքերի հայտնաբերման և դրանց արձագանքման վերաբերյալ պարբերաբար անցկացվող վերապատրաստումների կազմակերպում, ինչպես նաև կրթական ծրագրերի և դասագրքերի վերանայում՝ բռնությունը բնական երևույթ ներկայացնող բովանդակությունը բացառելու համար: Նախարարության առջև դրված է խնդիր ապահովել նաև, որ կրթական նյութերը խթանեն առողջ ընտանեկան հարաբերությունները, բռնությունից զերծ միջավայրը և փոխադարձ հարգանքը: Այս դրույթը կարևոր է ֆորմալ կրթության միջոցով, մասնավորապես՝ երեխաների և դեռահասների շրջանում բռնության վաղ կանխարգելման խթանման համար: Գենդերային ռազմավարության՝ Կրթության և գիտության ոլորտում գենդերային խտրականության հաղթահարում 3-րդ գերակայության շրջանակներում նախատեսվում են գենդերային չափանիշների վերանայում և ծրագրերի ու ուսումնական պլանների մշակում, ինչպես նաև լրատվամիջոցների ներգրավման վերաբերյալ միջոցառումներ: Նշվում է, որ այս գործունեության համար լրացուցիչ ֆինանսավորում անհրաժեշտ չէ:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Գնահատել Գենդերային ռազմավարությամբ նախատեսված չափանիշների, ծրագրերի և ուսումնական պլանների մշակումը:	Միջին

Մասնագետների վերապատրաստումը (Հոդված 15)



15-րդ հոդվածի համաձայն՝ բռնության ենթարկված և բռնություն գործադրող անձանց հետ առնչվող մասնագետները պետք է անցնեն համապարփակ վերապատրաստում, որը ներառում է բռնության կանխարգելման, բացահայտման, գենդերային հավասարության, ընտանեկան բռնության ենթարկված անձանց իրավունքների և կրկնագրհացման և երկրորդային զոհականացման կանխարգելման ուղղությունները՝ մինչև ժամանակ խրախուսելով միջգերատեսչական համագործակցության ամրապնդման մեխանիզմների վերաբերյալ վերապատրաստումը: Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքը նախատեսում է համապատասխան մասնագետների պարտադիր, շարունակական վերապատրաստման պահանջ: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պետք է պարբերաբար կազմակերպի աջակցության կենտրոնների և ապաստարանների աշխատակիցների, ինչպես նաև սոցիալական ոլորտի մասնագետների վերապատրաստումներ և վերաորակավորում՝ նախարարի (2024 թվականի դեկտեմբերի 6-ի) թիվ 171-Ն հրամանով սահմանված ընթացակարգերի համաձայն, որով սահմանվում են նպատակները, թիրախային խմբերը, հաճախականությունը և իրականացման մեխանիզմները: Այդ հրամանի վրա հիմնված նոր վերապատրաստման մոդուլ նախատեսված է նաև Գենդերային ռազմավարության և Միջոցառումների ծրագրում:

Մի շարք նախարարություններ ներգրավված են մասնագիտացված վերապատրաստումների կազմակերպման գործընթացում: Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Առողջապահության նախարարությունը պետք է առողջապահության ոլորտի մասնագետների վերապատրաստում իրականացնի՝ բռնության դեպքերը հայտնաբերելու և դրանց արձագանքելու նպատակով: Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ Ներքին գործերի նախարարությունը պետք է կազմակերպի ոստիկանության ծառայողների մասնագիտացված վերապատրաստում, այդ թվում՝ անհետաձգելի միջամտության ու պաշտպանական որոշումների և ռիսկերի գնահատման վերաբերյալ: 2022-2024 թվականների ընթացքում վերապատրաստվել է 1911 ծառայող: Արդարադատության նախարարության Արդարադատության ակադեմիան 2025 թվականի ծրագրով դատավորների և դատախազների համար նախատեսել է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարին ուղղված դասընթացներ, ինչպես նաև վերաբերելի քրեական իրավունքի կարգավորման ենթակա հարցերի շուրջ առցանց դասընթաց: Քննչական կոմիտեն 2025 թվականի վերապատրաստման ծրագրով նույնպես նախատեսել է այս թեմաների և երեխաների նկատմամբ բռնության դեպքերի քննության վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ: 2024 թվականին 130 դատավոր, 16 դատավորի թեկնածու, 34 դատախազ, 133 քննիչ և 594 ոստիկան (այդ թվում՝ 530-ը նորաստեղծ Քրեական ոստիկանության ծառայությունից և 29-ը՝ ՄԱԿ-ի Ֆինանսական տեղեկատվության բացահայտման ծրագրի աջակցությամբ (ՄԱԶՕ)) վերապատրաստում են անցնել հավասարության, ոչ խտրական վերաբերմունքի և հարակից թեմաներով՝ հասնելով արդյունավետության համապատասխան ցուցանիշների:

Ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների ցանցը մասնակցում է պարբերաբար կազմակերպվող համատեղ վերապատրաստման դասընթացների՝ օգտագործելով այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են Ստամբուլի կոնվենցիայի սկզբունքների վրա հիմնված՝ «Գործնական ուղեցույց սոցիալական աշխատողների համար. Ընտանեկան բռնության վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը» ուսուցման ուղեցույցը: Այնուամենայնիվ, ընտանեկան բռնության ընկալման և բռնության ենթարկված անձանց համարժեք արձագանքի ապահովման առնչությամբ Միասնական սոցիալական ծառայությունների գործունեության մեջ արձանագրվել են բացեր: Գործող Գենդերային ռազմավարությունը և Միջոցառումների ծրագիրը նախատեսում են շարունակական վերապատրաստումների իրականացում: Առաջարկվում է ապահովել ոչ թե կրկնվող, այլ առաջադեմ վերապատրաստումներ, ինչպես նաև ներդնել մշտադիտարկման և գնահատման արդյունավետ համակարգ՝ դրանց ազդեցությունը գնահատելու համար՝ ընդունելով, որ թեև վերջին վերապատրաստումներն ունեն իրենց նախնական դրական ազդեցությունը, օրինակ՝ դեպքերի արձանագրման աճը, սակայն դրանց լիարժեք ազդեցությունը դեռևս պետք է գնահատվի, և առկա է հետագա վերապատրաստումներ անցկացնելու անհրաժեշտություն:

Հայերենով հասանելի վերապատրաստման նյութեր՝

<p>Training materials available in Armenian</p>	<ul style="list-style-type: none"> ▶ Training manual for police officers on preventing and combating violence against women and domestic violence ▶ Training manual on preventing violence against women ▶ Training course on ensuing gender equality through the practice of judges, prosecutors and investigators
--	--



Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Մշտադիտարկել և գնահատել վերապատրաստման դասընթացների ազդեցությունը և վերհանել ցանկացած առկա բաց:	Ցածր
Աշակցել Ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների ցանցին՝ անձնակազմի և կամավորների համար մասնագիտացված վերապատրաստման դասընթաց մշակելու գործում և ուսումնասիրել ֆորմալ որակավորումների ստացման հնարավորությունները: Այս նպատակին կարելի է հասնել քոլեջների և համալսարանների ներգրավման միջոցով:	Ցածր

HELP վերապատրաստման դասընթացները՝ հասանելի հայերենով



<https://www.coe.int/en/web/yerevan/help-courses-available-in-armenian>

Կանխարգելիչ միջամտության և ռեաբիլիտացիոն ծրագրերը (Հոդված 16)

16-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ այնպիսի ծրագրեր հիմնելու կամ դրանց օժանդակելու համար, որոնք ուղղված են բռնությունից զերծ վարքագիծ որդեգրելուն և (մասնավորապես՝ սեռական բնույթի բռնարարքներ կատարած անձանց կողմից) նման արարքների ռեցիդիվը կանխելուն ուղղված ուսուցմանը: Այդ ծրագրերը պետք է ուղղված լինեն ընտանեկան բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությանը և հիմնվեն ու իրականացվեն ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության մասնագիտացված ծառայությունների հետ սերտորեն համակարգված ձևով:¹⁸

i. Ընտանեկան բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագիր

Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ կետով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսվում է բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիոն ծրագրերի հայեցակարգը: Այդ «ռեաբիլիտացիոն ծրագրերն» ուղղված են բռնություն գործադրած անձանց հոգեբանական և սոցիալական աջակցության տրամադրման միջոցով նրանց կողմից կրկին բռնություն գործադրելու կանխմանը: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է այս ծրագրերի մշակման և աջակցության կենտրոնների

18. Լրացուցիչ ուղղորդման համար տե՛ս «Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված» ուղեցույցը (Եվրոպայի խորհուրդ և այլ կազմակերպություններ, 2024թ.):

ու մյուս շահագրգիռ կողմերի հետ դրանց իրականացման գործընթացը համակարգելու համար: Ռեաբիլիտացման ծրագրերին մասնակցությունը կարող է նախատեսվել դատարանի կողմից կայացված պաշտպանական որոշումներում հստակորեն նշվում է նաև որպես հնարավոր պարտականություն՝ համաձայն 8-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետի: Դրանց ներառումն ամրապնդում է բռնության ռեցիդիվի նվազեցման նկատմամբ վերականգնողական, այլ ոչ թե զուտ պատժիչ մոտեցումը:

Ի սկզբանե, «Ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի ծրագիրը և կազմակերպման կարգը հաստատելու մասին» (2018 թվականի) թիվ 119-Ն հրամանով բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերը դարձել էին բռնություն վերապրածներին աջակցության կենտրոնների կողմից իրականացվող լրացուցիչ ծառայություն, որոնց համար վերջիններս լրացուցիչ ռեսուրսներ չէին ստանում, և քննադատության էին արժանանում բռնություն վերապրածներին և բռնություն գործադրած անձանց հաշտեցման վրա կենտրոնանալու համար (Բելլոտին և այլք, 2022թ.): Այնուամենայնիվ, այս ոլորտում կարևոր զարգացումը Կառավարության 2025 թվականի հունվարի 16-ի թիվ 35-Ն որոշման ընդունումն է, որով հաստատվել է «Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագիրը»: Ծրագիրը մշակված է որպես ռեցիդիվը կանխելու, բռնի վարքագծի արմատական պատճառները հաղթահարելու և բռնություն գործադրած անձանց շրջանում վարքային փոփոխություններ բերելու ուղղված կառուցվածքային, բազմափուլ միջամտություն: Այն ներառում է հոգեբանական խորհրդատվություն, զայրույթի և ագրեսիայի կառավարում, գենդերային հավասարության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում և միջանձնային հարաբերությունների լավարկման ուղղությամբ հմտությունների բարելավում: Ծրագրում կարող են ընդգրկվել այն անձինք, որոնց նկատմամբ Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի համաձայն կայացվել են նախագոյազացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումներ:

Բացի դրանից, Արդարադատության նախարարության Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն ՊՈԱԿ-ը ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությամբ մշակում է երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության կանխարգելման ուղղված նոր ծրագիր: Ծրագրերի կրկնությունները կանխելու և դրանց միջև հետևողականությունն ապահովելու համար կարևոր է համաժամանակեցնել ծրագրի նախագծումն ու իրականացումը ՊՈԱԿ-ի, Պրոբացիայի ծառայության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Քրեակատարողական ծառայության միջև: Վերականգնողական ծրագրերի մշակման և դրանց նկատմամբ վերահսկողության հարցերով միջգերատեսչական ֆորմալ աշխատանքային խմբի ստեղծումը կնպաստի ծրագրերի համահունչության, արդյունավետության ու հաշվետվողականության բարձրացմանը: Կարևոր է, որ այդ ծրագրերն ունենան նաև բռնության ենթարկված անձանց հետ համագործակցության մեխանիզմներ՝ ապահովելու համար, որ նրանց տեսակետները հաշվի առնվեն, ռիսկերը պատշաճ կերպ գնահատվեն, իսկ վերականգնողական միջոցառումները չխաթարեն ընտանեկան բռնության ենթարկված անձանց անվտանգությունը կամ բարեկեցությունը:

ii. Սեռական բնույթի բռնարարքներ կատարած անձանց ուղղված ծրագրեր

Թեև Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքում հիմնական շեշտը դրվում է ընտանեկան բռնության վրա, այնուամենայնիվ, այն սեռական բռնությունը դիտարկում է որպես ընտանեկան և գենդերային հիմքով բռնության ձևերից մեկը (Հոդված 3): Այնուամենայնիվ, գոյություն չունեն ընտանեկան միջավայրից դուրս սեռական բնույթի բռնարարքներ կատարած անձանց ուղղված հատուկ իրավակարգավորումներ, միջամտության ռազմավարություններ կամ հատուկ ծրագրեր: Նման թիրախային միջամտությունների բացակայությունը լուրջ բաց է երկրի կողմից սեռական բռնության արձագանքման գործընթացում և սահմանափակում է արդյունավետ կանխարգելման և վերահիմնադրման ներուժը:

Գենդերային ռազմավարությամբ և Միջոցառումների ծրագրով նախատեսվում է բռնություն գործադրած անձանց ուղղված՝ բռնության նվազեցման թիրախային ծրագրի և ընտանեկան բռնության ենթարկված անձանց ռեաբիլիտացման ծրագրի մշակում, որոնց իրականացման համար պետական բյուջեով հատկացվել է 56,000.00 ԱՄՆ դոլար: Թեև սա այն ոլորտն է, որը կարելի է բարելավել ու զարգացնել, այնուամենայնիվ, Հայաստանն արդեն ընդունել է համապատասխան օրենսդրություն և դրանում կատարել անհրաժեշտ փոփոխություններ, ապահովել է ծրագրերի մշակման համար ֆինանսավորման հասանելիությունն ու ակտիվ քայլեր է ձեռնարկում դրանք մինչև 2026 թվականն իրականացնելու ուղղությամբ:

Առաջընթաց արձանագրվել է, սակայն որոշ ոլորտներում դեռևս կան չլուծված խնդիրներ	
Միջոցառում	Գերակայություն
Մշակել և իրականացնել ռեաբիլիտացման ծրագրեր՝ ընտանեկան բռնության կանխարգելման նպատակով:	Բարձր
Մշակել և իրականացնել սեռական բնույթի բռնարարքներ կատարած անձանց համար միջամտության առանձին ռազմավարություններ:	Բարձր

Մասնավոր ոլորտի և լրատվամիջոցների մասնակցությունը (Հոդված 17)

17-րդ հոդվածի համաձայն՝ կողմերը պետք է խրախուսեն մասնավոր ոլորտի ներգրավվածությունը քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացին, ուղեցույցների և ինքնակարգավորման չափանիշների սահմանմանը՝ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և նրանց արժանապատվության նկատմամբ հարգանքը և մեղիագրագիտությունը երեխաների, ծնողների և մանկավարժների շրջանում բարձացնելու և խթանելու նպատակով: Այս պահանջն ամրապնդվում է ԳՐԵՎԻՈՒ-ի՝ Կանանց նկատմամբ բռնության թվային հարթության վերաբերյալ թիվ 1 առաջարկության մեջ ներկայացված առաջարկություններով, որոնք պահանջում են SCS ոլորտի և համացանցային միջնորդների հատուկ ներգրավումը՝ թվային ոլորտում կանանց նկատմամբ բռնություն գործադրած անձանց պատասխանատվության ենթարկելու ջանքերում: Բռնություն գործադրած անձինք պատասխանատվության ենթարկվում են վնասակար բովանդակության առնչությամբ հաղորդում ներկայացնելու համար նախատեսված բողոքարկման մեխանիզմների, բովանդակության մոդերացիայի հուսալի քաղաքականությունների և իրավապահ մարմինների հետ համագործակցության վերաբերյալ աշխատանքային պայմանավորվածությունների միջոցով:

Ինչ վերաբերում է լրատվամիջոցներին, մի կողմից՝ կան լրագրողական նախաձեռնությունների դրական օրինակներ, որոնց նպատակն է բարձրացնել իրազեկվածությունը, պայքարել վնասակար կարծրատիպերի դեմ ու խթանել բռնության նկատմամբ գոյական հանդուրժողականությունը: Օրինակ՝ Հանրային հեռուստաընկերությունը և անկախ մեղիա հարթակները ներկայացրել են կրթական հաղորդումներ և հարցազրույցներ մասնագետների ու բռնություն վերապարծների հետ, մասնավորապես՝ «16-օրյա ակտիվիզմ» արշավի շրջանակներում: ՔՀԿ-ները, մասնավորապես՝ Կանանց աջակցման կենտրոնը, ևս համագործակցել են լրատվամիջոցների հետ՝ կանխարգելիչ հաղորդագրություններ և թեժ գծերի վերաբերյալ տեղեկություններ տարածելու համար: Եվրոպայի խորհուրդը մշակել է «Գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ Հայաստանի լրագրողների և լրատվամիջոցների աշխատակիցների համար» ուղեցույցը: (Եվրոպայի խորհուրդ և այլ կազմակերպություններ, 2020թ.):

Մյուս կողմից՝ խնդիրները մնում են չլուծված: Որոշ լրատվամիջոցներ շարունակում են տարածել սենսացիոն բնույթի կամ բռնության ենթարկված անձանց պարսավող նյութեր, որոնք կարող են ավելի շատ տրավմա պատճառել նրանց, կամ նրանց հետ պահել օգնության դիմելուց: Ընտանեկան բռնության վերաբերյալ լրագրողական նյութեր պատրաստելու համար ներկայումս գոյություն չունի պարտադիր վարքագծի կանոնակարգ, թեև գործում են լրատվամիջոցների ընդհանուր էթիկական սկզբունքները: Քաղաքացիական հասարակության նախաձեռնությունները՝ ուղղված գենդերային հիմքով բռնության էթիկայի կանոններին համապատասխան լուսաբանման վերաբերյալ լրագրողների վերապատրաստմանը, սահմանափակ են և կախված են դրամաշնորհներից: Կանանց նկատմամբ բռնության թվային հարթության և ընտանեկան բռնության դեմ պայքարի ուղղությամբ տարվող աշխատանքները դեռևս գտնվում են սաղմնային փուլում, և անհրաժեշտ կլինի ավելի շատ աշխատանք տանել՝ ապահովելու համար, որ համացանցային միջնորդներն ունենան իրենց դերակատարությունը:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարում մասնավոր ոլորտի ներգրավվածությունն ընդհանուր առմամբ դեռևս գտնվում է ձևավորման փուլում: Որոշ դեպքերում ընկերություններն աջակցել են ՔՀԿ-ներին և ապաստարաններին այնպիսի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության նախաձեռնությունների միջոցով, ինչպիսիք են հիգիենայի պարագաների, սննդի կամ SS սարքավորումների նվիրատվությունները: Օրինակ՝ մասնավոր հեռահաղորդակցության ընկերությունները երբեմն անվճար հաղորդագրություններ են ուղարկել թեժ գծերի վերաբերյալ արշավների շրջանակներում, իսկ որոշ սուպերմարկետներ միջազգային արշավների ժամանակ տեղադրել են իրազեկման տաղավարներ:

Այնուամենայնիվ, չկա լայն համակարգային ներգրավվածություն: Չկան պետության կողմից հավանության արժանացած մեխանիզմներ կամ խթաններ (օրինակ՝ հարկային արտոնություններ կամ պետական-մասնավոր գործընկերության սխեմաներ)՝ ուղղված ընտանեկան բռնության կանխարգելման կամ դրան արձագանքման գործում մասնավոր ոլորտի իմաստալից և շարունակական մասնակցության խրախուսմանը: Աշխատողները չունեն նաև հստակ ուղեցույցներ՝ թե ինչպես աջակցեն ընտանեկան բռնության ենթարկված աշխատողներին, թեև մի քանի առաջադեմ ընկերություններ այս նպատակի համար մշակել են ներքին մարդկային ռեսուրսների կառավարման գործելակարգեր:

Ընդհանուր առմամբ, թեև կան հուսադրող գործելակերպեր, այնուամենայնիվ, անհրաժեշտ է թե՛ լրատվամիջոցների, թե՛ մասնավոր ոլորտի ներկայացուցիչների միջև ապահովել առավել կառուցվածքային համագործակցություն և ռազմավարական ներգրավվածություն:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
<p>Աշխատել ՏՀՏ ոլորտի և համացանցային միջնորդների հետ՝ ԳՐԵՎԻՈՒ-ի թիվ 1 ընդհանուր առաջարկության մեջ ներկայացված առաջարկություններն իրականացնելու համար, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> ▶ Խրախուսել մեդիա կազմակերպություններին և լրագրողների միություններին ձեռնարկել կոնկրետ քայլեր իրենց լրագրողական ամբողջ գործունեության ընթացքում բացառելու գենդերային հիմքով խտրականությունը, բռնության ենթարկված անձանց պարսավող վերաբերմունքը և կանանց ու իրենց երեխաների նկատմամբ գենդերային հիմքով բռնության ենթարկված անձանց անձնական կյանքի անձեռնմխելիության խախտումները. ▶ Խրախուսել համացանցային միջնորդներին, այդ թվում՝ համացանցային ծառայություններ մատուցողներին, որոնողական համակարգերին և սոցիալական մեդիա հարթակներին ապահովել Ստամբուլի կոնվենցիայի գործողության ոլորտում գտնվող բովանդակության խիստ մոդերացիան՝ հաշվի կամ բովանդակության հեռացման միջոցով, տարբեր լեզուներով՝ մարդու իրավունքները, այդ թվում՝ բռնությունից զերծ ապրելու կանանց իրավունքը պաշտպանող թափանցիկ սկզբունքների հիման վրա, և ▶ տրամադրել հեշտ հասանելի օգտատիրոջ ուղեցույց՝ բռնության տարբեր պարունակող բովանդակությունը նշելու և այն հեռացնելու խնդրանքով դիմելու համար: 	Ցածր
<p>Թույլ չտալ առևտրային կազմակերպություններին շահույթ ստանալ կանանց և աղջիկների նկատմամբ սեռական բռնություն համարվող այնպիսի բռնարարքից, ինչպիսին է օրինակ՝ տեսանկարահանված սեքսուալ բնույթի բռնի գործողությունները , այդ թվում՝ այդ բովանդակության արտադրությունն ու տարածումը քրեականացնելու միջոցով:</p>	Միջին

Գլուխ 4

Պաշտպանություն և օժանդակություն

Պաշտպանություն և օժանդակություն

Թեև Կոնվենցիայի վերջնական նպատակը դրա գործողության ոլորտում ընդգրկվող բռնության բոլոր ձևերի կանխումն է, այնուամենայնիվ, անհրաժեշտ է, որպեսզի բռնության ենթարկված անձանց համար ապահովվի համարժեք պաշտպանություն հետագա բռնությունից, տրամադրվի աջակցություն և օժանդակություն՝ այդ բռնության տարատեսակ հետևանքները հաղթահարելու և իրենց կյանքը վերափոխելու համար: Սույն գլուխը պարունակում է մի շարք պարտավորություններ, որոնց համաձայն պետք է ստեղծվեն մասնագիտացված, ինչպես նաև ընդհանուր օժանդակության ծառայություններ՝ բռնության ենթարկված անձանց կարիքները հասցեագրելու համար:

Ընդհանուր պարտավորությունները (Հոդված18)

Ընդհանուր պարտավորությունները պահանջում են ձեռնարկել օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետագա բռնությունից պաշտպանելու համար, ինչպես նաև շահագրգիռ բոլոր պետական գերատեսչությունների միջև ստեղծել արդյունավետ համագործակցության համար համապատասխան մեխանիզմներ: Ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում միջոլորտային և միջգերատեսչական միջամտություններն առանցքային նշանակություն ունեն բռնության բոլոր ձևերին արդյունավետ և համակարգված արձագանք ապահովելու համար: Տեղական մակարդակներում արդյունավետ համակարգումը հատկապես կարևոր է՝ ապահովելու համար, որ արձագանքը համապատասխանի համայնքի կարիքներին, իսկ բռնության ենթարկված անձանց տրամադրվի ծառայություններ «մեկ պատուհանի» սկզբունքով (տե՛ս ստորև «Ընդհանուր աջակցության ծառայություններ» բաժնում): Ծառայությունների մատուցումը չպետք է պայմանավորված լինի բռնության ենթարկված անձի՝ մեղադրանք ներկայացնելու կամ ցուցմունք տալու պատրաստակամությունից: Հյուպատոսական կամ այլ պաշտպանությունը պետք է տրամադրվի միջազգային իրավունքի պարտավորություններին համապատասխան (*Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույց, 2011թ.*): ՔՀԿ-ների համար մշակված [Աջակցության ծառայությունների քարտեզագրման ուղեցույցը](#) կարող է օգտակար լինել գործող ծառայությունները գնահատելու և բացերը վերհանելու համար:

Հայաստանում ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի օպերատիվ արձագանք ապահովելու համար: (Ներքին գործերի նախարարի 2025 թվականի հունվարի 17-ի թիվ 247-Ա հրաման): Աշխատանքային խումբը գործում է որպես խորհրդատվական մարմին և ապահովում է պետական մարմինների ու ընտանեկան և կենցաղային բռնության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների միջև շարունակական հաղորդակցությունը: Այն նաև մշակում է ոլորտային մարտահրավերների առավել արդյունավետ հասցեագրման վերաբերյալ առաջարկություններ, և դրանք ներկայացնում է իրավասու պետական մարմիններին:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն ակտիվորեն մասնակցում է նաև Գենդերային թեմատիկ խմբի և Գենդերային հիմքով բռնության հարցերով ենթաաշխատանքային խմբի աշխատանքներին, որոնց մասնակցում են ՄԱԿ-ի գործակալությունների, միջազգային կազմակերպությունների, պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները՝ քաղաքականության համաձայնեցվածությունը բարձրացնելու և ոլորտային արձագանքները բարելավելու համար:¹⁹ Տեղական ինքնակառավարման մարմիններն աշխատանքներում հիմնականում ներգրավվում են համագործակցության շրջանակների միջոցով, մինչդեռ ՔՀԿ-ները կարևոր դերակատարություն ունեն ինչպես ծառայությունների մատուցման, այնպես էլ մշտադիտարկման գործընթացներում՝ նպաստելով քաղաքականության և գործելակերպերի մշակմանը:

19. Հարցաթերթիկի պատասխան:

Արձանագրվել է հական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Մշակել միջգերատեսչական աշխատանքային գործելակարգեր՝ ռիսկերի շարունակաբար հասցեագրման համար:	Միջին
Մշտադիտարկել միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքը՝ ապահովելու համար դրանում բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը և գործելակարգերի արդյունավետությունը՝ միջգերատեսչական հանձնաժողովի գործունեության բարելավման նպատակով:	Միջին

Տեղեկատվությունը (Հոդված 19)

19-րդ հոդվածի համաձայն՝ ընտանեկան բռնության ենթարկված անձինք պետք է իրենց համար հասկանալի լեզվով ժամանակին ստանան պատշաճ տեղեկատվություն՝ աջակցության ծառայությունների և իրավական պաշտպանության միջոցների մասին: Սա անչափ կարևոր է, որպեսզի ընտանեկան բռնության ենթարկված անձինք կարողանան իրենց անվտանգության, պաշտպանության և վերականգնման վերաբերյալ կայացնել տեղեկացված որոշումներ:²⁰

Այս սկզբունքն ամրագրված է Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքում՝ սահմանելով մի շարք իրավական պահանջներ թե՛ պետական կառույցների և թե՛ աջակցություն տրամադրող կառույցների համար: Ի լրումն 14-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր իրազեկման պահանջներին (տե՛ս վերևում), 19-րդ հոդվածի համաձայն՝ *աջակցության կենտրոնները* պետք է տեղեկացնեն աջակցության կենտրոն դիմած՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածներին կամ ենթադրյալ բռնության ենթարկվածներին հետևյալի մասին.

- ▶ իրենց իրավունքները՝ ՀՀ օրենսդրության համաձայն,
- ▶ հասանելի ծառայությունները, այդ թվում՝ հոգեբանական, իրավաբանական, սոցիալական և ապաստարանների կողմից տրամադրվող օգնությունը,
- ▶ կիրառվող պաշտպանության միջոցները, այդ թվում՝ նախագգուշացման ծանուցումները, անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումները,
- ▶ այդ ծառայությունների և միջոցների հասանելիության ընթացակարգերը:

Այդ տեղեկատվությունը պետք է տրամադրվի անձի համար հասկանալի լեզվով և եղանակով: Հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում տեղեկատվությունը պետք է տրամադրվի հաղորդակցման այնպիսի մատչելի միջոցներով, որոնք ապահովում են դրա լիարժեք ըմբռնումը: Լեզվական փոքրամասնությունների դեպքում պետք է ձեռնարկվեն քայլեր՝ հնարավորության սահմաններում տեղեկատվությունն իրենց նախընտրած լեզվով տրամադրելու համար:

Ավելին, երբ բռնության ենթարկված անձինք դեպքերի մասին հաղորդում են ներկայացնում ոստիկանություն, ծառայողները պարտավոր են նրանց օրենքով սահմանված կարգով պարզաբանել իրենց իրավունքների և հասանելի իրավաբանական ու սոցիալական աջակցության ծառայություններից օգտվելու հնարավորությունների մասին: Բռնության ենթարկված անձանց պետք է ներկայացվեն պաշտպանիչ մեխանիզմները, ինչպես նաև համապատասխան աջակցության կենտրոններ ուղղորդման եղանակները: Ոստիկանությունը պետք է նաև փաստաթղթավորի դեպքը և տեղեկատվությունը փոխանցի իրավասու մարմիններին՝ հետագա աջակցությունն ապահովելու համար:

Այս պարտավորության արդյունավետությունը գործնականում պայմանավորված է առաջնային օղակի մասնագետների հետևողական վերապատրաստմամբ, կառույցների միջև արդյունավետ համագործակցությամբ և աջակցության ծառայությունների՝ ամբողջ Հայաստանի տարածքում աշխարհագրական և լեզվական հասանելիության ապահովումից: Կան նաև որոշ սահմանափակումներ օգնության թե՛ զծերի մատչելիության առումով, որոնց անդրադարձ կկատարվի ստորև:

Արձանագրվել է հական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Մշտադիտարկել տեղեկությունների տրամադրման գործընթացը և դրանց արդյունավետությունը:	Ցածր

20. «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլի կոնվենցիա) բացատրական զեկույց (2011թ.), պարբերություն 124:

Ընդհանուր աջակցության ծառայությունները (Հոդված 20)

20-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ ապահովելու համար, որ ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար հասանելի լինեն բռնությունից նրանց վերականգնումը դյուրացնող ծառայությունները: Այդ ծառայություններից են իրավաբանական և հոգեբանական խորհրդատվությունը, ֆինանսական աջակցությունը, կացարանով ապահովումը, կրթությունը, վերապատրաստումն ու աշխատանք գտնելու հարցում աջակցությունը: Դրանք ներառում են նաև առողջապահական և սոցիալական ծառայությունների հասանելիությունը, որոնք համապատասխանեցված են բռնության ենթարկված անձանց կոնկրետ կարիքներին: Ծառայությունները պետք է ապահովված լինեն անհրաժեշտ ռեսուրսներով, ինչպես նաև բռնության ենթարկված անձանց աջակցելու և նրանց համապատասխան ծառայություններ ուղղորդելու համար վերապատրաստված անձնակազմով:

Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքը կարևորում է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածներին աջակցություն տրամադրելու համակարգում թե՛ սոցիալական և թե՛ առողջապահական ծառայությունների դերակատարությունը: Օրենքով համապատասխան նախարարություններին և գերատեսչություններին վերապահվում են կոնկրետ պարտականություններ՝ ապահովելու, որ այդ ծառայությունները ոչ միայն ֆորմալ առումով գոյություն ունենան, այլ նաև լինեն արդյունավետ, հասանելի և զոհակենտրոն: Մասնավորապես, Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիման վրա ընդունված Կառավարության 2025 թվականի հունվարի 16-ի թիվ 51-Ն որոշմամբ սահմանվում է ընտանեկան բռնության ենթարկվածներին ժամանակավոր ֆինանսական աջակցություն տրամադրելու կարգը: Այդ աջակցությունը տրամադրվում է ընտանեկան բռնության ենթարկվածների կենսաապահովման նվազագույն կարիքները հոգալու, ինչպես նաև ժամանակավոր կացարանով ապահովելու համար, իսկ գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևի հիման վրա՝ բազային արտակարգ վճար, բնակարանային աջակցություն և խնամակալի աջակցություն:

Որոշման համաձայն՝ ֆինանսական աջակցություն տրամադրվում է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի, նրա օրինական ներկայացուցչի, խնամակալության մարմնի կամ աջակցության կենտրոնի դիմումի հիման վրա: Այդ գործընթացը համակարգվում է միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից, որը որոշում է աջակցություն ստանալու իրավունքը և ապահովում է, որ այն լինի թիրախային ու ժամանակին: Այնուամենայնիվ, այս մեխանիզմը հանդիսանում է ժամանակավոր սոցիալական աջակցության մաս, այլ ոչ թե փոխհատուցում ստանալու իրավունք: Այն չի փոխարինում ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց՝ մարդու իրավունքների չափանիշներին համապատասխան փոխհատուցում տրամադրելու պետության պարտավորությանը, այն դեպքում, երբ բռնություն գործադրած անձինք չեն կարողանում կամ չեն ցանկանում փոխհատուցում տրամադրել:

i. Սոցիալական ծառայություններ

Քանի որ Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքն առաջին անգամ ընդունվել է 2017 թվականին, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը համեմատաբար կարճ ժամանակահատվածում զգալի աշխատանք է կատարել՝ համապարփակ ծառայություններ մշակելու համար: Սոցիալական ծառայությունները կենտրոնական դերակատարություն ունեն Հայաստանում ընտանեկան և կենցաղային բռնության դեմ արձագանքում: Ինստիտուցիոնալ պատասխանատվությունն էլ ավելի է ամրապնդվել 14-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, որի համաձայն՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և ներպետական հասարակական կազմակերպությունների հետ՝ ապահովելու համար, որ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձինք օգտվեն սոցիալական ծառայությունների լայն շրջանակից: Ավելին, 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նախարարությանը վերապահված է պետական ռազմավարական միջոցառումների մշակումն ու իրականացումը՝ դրանց հասանելիությունն ապահովելու համար:

Օրենքով աջակցության կենտրոններին տրված են համապարփակ լիազորություններ՝ սոցիալական ծառայությունների լայն շրջանակ մատուցելու համար: 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է, որ աջակցության կենտրոնները պատասխանատու են ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածներին անհատույց հոգեբանական և իրավաբանական օգնություն, ինչպես նաև այլ անհրաժեշտ սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացի կազմակերպման համար: Ներկայումս ամբողջ երկրում գործում են 11 աջակցության կենտրոններ, որոնք ֆինանսավորվում են Կառավարության կողմից՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բյուջեի շրջանակներում: (Զեյնա և Հովակիմյան, 2024թ., ամբողջական տեղեկությունների և առաջարկությունների համար տե՛ս նրանց «Ընտանեկան բռնության մասնագիտացված ծառայությունները Հայաստանում. կարողությունների, որակի և շարունակական բարելավման ապահովում» զեկույցը): Ընդհանուր առմամբ, այս մասնագիտացված աջակցության կենտրոնները մատուցում են բարձր որակի ծառայություններ և համարվում են արդյունավետ համապարփակ լուծումներ: Կարևոր կլինի ապահովել, որ դրանք ստանան պատշաճ ֆինանսավորում և բոլոր ոլորտներում պետության պատասխանատվությունը չստանձնեն, քանի դեռ չեն ստացել բավարար չափով ֆինանսավորում:

Բացի դրանից, 19-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ աջակցության կենտրոններն ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածներին աջակցում են աշխատանքի տեղավորման և համապատասխան պետական կամ ոչ պետական կազմակերպություններից սոցիալական աջակցություն ստանալու հարցերում:

Չնայած ամուր իրավական շրջանակի առկայությանը, այնուամենայնիվ, դեռևս կան չլուծված գործնական խնդիրներ, որոնք մասնավորապես վերաբերում են ծառայությունների տարածքային հասանելիությանը, աջակցության շարունակականության և անհատականացված մոտեցման ապահովմանը, ինչպես նաև հատվող խոցելի խնդիրների բախվող խմբերի, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց և խնամքի տակ գտնվող մեկից ավելի անձինք ունեցող միայնակ ծնողների հատուկ կարիքները բավարարելուն:

2024 թվականի դեկտեմբերին հրապարակված զեկույցում (մշակված մինչև վերը նշված Միջգերատեսչական աշխատանքային խմբի ստեղծումը) Ջեյմսը և Հովակիմյանը նշում են, որ Ընտանեկան բռնության աջակցության ծառայությունը, ինչպես նաև ոստիկանությունն իր մեկնաբանություններում ընդգծել են, որ Միասնական սոցիալական ծառայությունների որոշ տարածքային բաժինների հետ օգտակար համագործակցություն չի իրականացվում, և որ վերջիններս անգամ տեղյակ չեն տեղական մակարդակում գործող՝ ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների գոյության մասին: Սա մասամբ կարելի է բացատրել այն հանգամանքով, որ որոշ տարածքներում ընտանեկան բռնության աջակցության ծառայությունները համեմատաբար նոր են, և միջգերատեսչական համագործակցության մեխանիզմները դեռևս ձևավորված չեն: Նշվել է, որ Միասնական սոցիալական ծառայությունները շատ քիչ դեպքերում են ուղղորդումներ կատարում ընտանեկան բռնության աջակցության ծառայություններ, և անգամ եթե ուղղորդումներ կատարվում են, ապա այնպիսի մոտեցմամբ, որը բավարար կերպով հաշվի չի առնում ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածների վրա ընտանեկան բռնության խոր և տրավմատիկ ազդեցությունները, ինչպես նաև կյանքի վերակառուցման համար անհրաժեշտ ժամանակը: Նրանք մատնանշել են, որ կանանց և երեխաների նկատմամբ ռիսկի մակարդակների ընկալում առկա չէ և հաճախ ցուցաբերվում է գենդերային կարծրատիպերի վրա հիմնված մոտեցում, որի դեպքում անուղղակիորեն մեղադրվում է բռնության ենթարկվածը: Ոմանք նշել են, որ բռնության ենթարկվածները բախվել են սոցիալական աշխատողների անհարգալից վերաբերմունքին, ինչը կարող է հանգեցնել երկրորդային զոհականացման կամ ինստիտուցիոնալ զոհականացման: Ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների ներկայացուցիչների համար ընդհանուր առմամբ հասկանալի չեն եղել Միասնական սոցիալական ծառայությունների կողմից դեպքերով գործերի համակարգման գործընթացները, ինչպես նաև առաջացել է այդ գործերի համակարգման պարտականությունների հետ կապված որոշակի շփոթմունք: Այս մտահոգությունները բարձրաձայնվել են նաև ոստիկանության ծառայողների կողմից: Միևնույն ժամանակ, սոցիալական ծառայությունների ներկայացուցիչները նույնպես մտահոգություններ են հայտնել ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների ցանցի և թե՛ ընդհանուր, թե՛ Միասնական սոցիալական ծառայությունների միջև համագործակցության վերաբերյալ: Շահագրգիռ կառույցների հետ հանդիպումների ժամանակ որոշ սոցիալական աշխատողներ հայտնել են, որ տեղյակ չեն եղել տեղական ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների գոյության մասին: Բարձրացվել է նաև մտահոգություն երեխաների պաշտպանության վերաբերյալ տեղեկատվության բավարար տարածման բացակայության առնչությամբ (Ջեյմս և Հովակիմյան, 2024թ.):

Գենդերային ռազմավարությունը և Միջոցառումների ծրագիրը ցույց են տալիս, որ Հայաստանի կառավարությունը տեղյակ է այս խնդիրների մասին և աշխատանքներ է տանում դրանց լուծման ուղղությամբ: Մասնավորապես, նախատեսվում է բազմամասնագիտական արձագանքման ու համագործակցության ամրապնդման և արդյունավետության բարձրացման նպատակով ձեռնարկել միջոցառումներ (Գենդերային ռազմավարություն, 190 և տե՛ս վերևում 15-րդ հոդվածը՝ Մասնագետների վերապատրաստումը և 18-րդ հոդվածը՝ Ընդհանուր պարտավորությունները): Հայաստանը պետք է շարունակի զարգացնել այս գործնական խնդիրները հաղթահարելուն միտված կարողությունները: Ծառայությունների մատուցման նպատակով գերատեսչությունների միջև, ինչպես նաև ՔՀԿ-ների և քաղաքացիական հասարակության հետ համագործակցելիս կարևոր է հիշել, որ բոլոր գերատեսչությունները հավասար չեն, և պետք է հաշվի առնել ռեսուրսների տարբերությունը (Ջեյմս և Հովակիմյան, 2024թ.): Կարևոր կլինի ներդնել Կանանց աջակցման կենտրոնի կողմից մշակված վերապատրաստման և սոցիալական աշխատանքի ձեռնարկը՝ ծառայությունների շարունակական բարելավումն ապահովելու համար:

Ինստիտուցիոնալ աջակցության շրջանակն էլ ավելի է ամրապնդվում Հայաստանի կառավարության կողմից ներդրված ֆինանսական աջակցության մեխանիզմների միջոցով: Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին համահունչ՝ Կառավարության (2025 թվականի հունվարի 16-ին ընդունված) թիվ 51-Ն որոշմամբ սահմանվում են ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածներին ժամանակավոր աջակցության հաշվեհամարի բացման և տնօրինման մանրամասն ընթացակարգերը: Հաշվեհամարը տնօրինվում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, որի նպատակն է տրամադրել անհետաձգելի ֆինանսական աջակցություն, որով հոգ կտարվեն կենսաապահովման նվազագույն կարիքները, ժամանակավոր կացարանով ապահովման, ինչպես նաև խնամքի տակ գտնվող անձանց խնամքի հետ կախված ծախսերը: Որոշմամբ սահմանվում է աջակցության հաշվարկման հստակ բանաձև, որը ներառում է բազային արտակարգ վճարը (65,000 ՀՀ դրամ), բնակարանային աջակցությունը (50,000 ՀՀ դրամ) և լրացուցիչ 30,000 ՀՀ դրամ խնամքի տակ գտնվող յուրաքանչյուր անձի համար (օրինակ՝ երեխաներ, տարեցներ կամ հաշմանդամություն ունեցող անձինք): Աջակցությունը տրամադրվում է

բազմամասնագիտական ուսումնասիրության հիման վրա, որն իրականացվում է նախարարության, իրավապահ մարմինների և համապատասխան աջակցության կենտրոնի ներկայացուցիչներից բաղկացած աշխատանքային խմբի կողմից: Այս ֆինանսավորման համակարգում հաշվի է առնվում այն տնտեսական խոցելիությունը, որի առջև կանգնած են շատ բռնության ենթարկվածներ, մասնավորապես՝ բռնության միջավայրից փախչելիս, և նպատակ ունի տրամադրել արագ, կարճաժամկետ աջակցություն: Այնուամենայնիվ, դրա արդյունավետ իրականացումը դեռևս կախված է միջգերատեսչական աշխատանքների արագ համակարգումից, աջակցության կենտրոնների շահառուներին հասնելու կարողություններից և հետագա ծառայությունների առկայությունից, որոնք անհրաժեշտ են բռնության ենթարկվածների կայուն վերականգնումն ու վերաինտեգրումն ապահովելու համար:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Միջոցառումների ծրագրով նախատեսված է շարունակական վերապատրաստումների իրականացում՝ փոքր բյուջետային հատկացմամբ: Դիտարկել վերապատրաստումների հասանելիության ընդլայնման հնարավորությունները՝ անվճար հասանելի առցանց դասընթացների, մասնավորապես՝ Իրավական ոլորտի մասնագետների համար մարդու իրավունքների կրթություն (HELP) ծրագրի դասընթացների միջոցով:	Միջին
Իրականացնել Միասնական սոցիալական ծառայության անձնակազմի վերապատրաստում՝ միջգերատեսչական համագործակցության և ընտանեկան բռնության նկատմամբ զոհակենտրոն ու երեխայակենտրոն մոտեցումների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:	Բարձր
Դիտարկել սոցիալական աշխատող պրակտիկանտների համար գործուղման ծրագրերի ներդրման հնարավորությունը, որոնց շրջանակներում նրանք որոշ ժամանակով պրակտիկա կանցնեն մասնագիտացված կենտրոնում:	Ցածր
Մշակել համապարփակ ուղեցույցներ՝ որպես Միասնական սոցիալական ծառայության և համայնքային սոցիալական աշխատողների վերապատրաստման գործիք: Ուղեցույցները պետք է ուղղորդում տրամադրեն գենդերային հիմքով բռնության, տրավմաների վերաբերյալ տեղեկացված մոտեցումների առնչությամբ և բարձրացնեն ընտանեկան բռնության մի շարք հետևանքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը:	Միջին

ii. Առողջապահական ծառայությունները

Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Առողջապահության նախարարությանը վերապահված են հատուկ պարտավորություններ՝ ապահովելու, որ ընտանեկան կամ կենցաղային բռնության ուղղակի հետևանքով առաջացած կարիքների դեպքում ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց տրամադրվեն անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում, և որ առողջապահական հաստատությունները պարբերաբար վերապատրաստումներ իրականացնեն իրենց անձնակազմի համար: Այնպիսի խնդիրները, ինչպիսիք են վերապատրաստում անցած մասնագետների անհամաչափ բաշխվածությունը, բուժառուների կողմից ոչ բոլոր դեպքերում հաղորդում ներկայացնելը և ռեսուրսների շարունակական բաշխման անհրաժեշտությունը շարունակում են խոչընդոտել գործնականում Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի նպատակների լիարժեք իրականացմանը:

Օրինակ՝ ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների ցանցի ներկայացուցիչները մտահոգություն են հայտնել, որ զոհակենտրոն մոտեցումը համատարած կերպ չի կիրառվում առողջապահական ծառայություններում: Ինչպես նշվել է, Դատաբժշկական կենտրոնի անձնակազմը բռնության ենթարկվածների նկատմամբ չի ցուցաբերում հարգալից վերաբերմունք և նրանց նկատմամբ դրսևորում է բռնարարքն ու ընտանեկան բռնությունը բնականոն երևույթ համարող վերաբերմունք, ինչը կարող է հատկապես արտահայտված լինել գյուղական վայրերում: Առողջապահական ծառայությունները միշտ չէ, որ գիտակցում են անվտանգության և գաղտնիության անհրաժեշտությունը:

Գործող Գենդերային ռազմավարությամբ և Միջոցառումների ծրագրով սահմանված են էական միջոցառումներ, որոնք ուղղված են կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության նկատմամբ առողջապահական համակարգի արձագանքի բարելավմանը, այդ թվում՝ սեռական բռնության ենթարկված կանանց բուժման հետ կապված գործի վարման վերաբերյալ կլինիկական ուղեցույցի մշակմանը, առողջապահության ծառայությունների հասանելիության և խոցելի խմբերի նկատմամբ զգայունության բարձրացմանը, ինչպես նաև սահմանված են պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների դեմ պայքարին ուղղված քայլեր:

Ընդհանուր առմամբ, բարձր որակի ընդհանուր ծառայություններ մատուցելու հիմնական խոչընդոտն ընտանեկան բռնության ենթարկվածների կարիքների և սեռական բռնության դեպքերի մասին բավարար պատկերացում չունենալն է:

Օրենքի պատշաճ կիրարկումն ապահովելու համար անհրաժեշտ է բարձրացնել այս ծառայություններում զոհակենտրոն, տրավմաների վերաբերյալ տեղեկացված մոտեցման և գաղտնիության ու սովյալների պաշտպանության կարևորության վերաբերյալ իրազեկվածության մակարդակը:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Մշակել միջգերատեսչական համագործակցության հստակ գործելակարգեր, որոնք շարունակաբար կհասցեագրեն ռիսկերը և կներգրավեն ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնագիտացված աջակցության ծառայություններ և հնարավորություն կտան հասկանալ, թե որքան կարևոր են միմյանց համար:	Բարձր
Կազմակերպել տեղական մակարդակում միջգերատեսչական հանդիպումներ՝ ապահովելով իրականացվելիք միջոցառումների նկատմամբ պատասխանատվության հստակ բաշխում:	Բարձր
Ապահովել բոլոր ընդհանուր ծառայություններում ընտանեկան և գենդերային հիմքով բռնության նկատմամբ զոհակենտրոն, տրավմաների վերաբերյալ տեղեկացված արձագանքման կարողությունների ու ընկալման զարգացումը:	Բարձր

Մասնագիտացված աջակցության ծառայությունները (Հոդված 22)

Մասնագիտացված աջակցության նպատակն է ապահովել բռնության ենթարկվածների իրավունքների ընդլայնման համալիր նպատակի իրագործումը՝ նրանց առանձնահատուկ կարիքների համար նախատեսված օպտիմալ աջակցության և օժանդակության միջոցով: Դրա մեծ մասը լավագույնս ապահովվում է կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների և աջակցության այնպիսի ծառայությունների կողմից, որոնք տրամադրում են, օրինակ՝ կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության վերաբերյալ խոր գիտելիքներով օժտված, մասնագիտացված և փորձառու անձնակազմ ունեցող տեղական մարմինների կողմից: Կարևոր է ապահովել, որ երկրի ամբողջ տարածքում գործեն բավարար թվով ծառայություններ և հասանելի լինեն բոլոր բռնության ենթարկվածներին: Ավելին, այդ ծառայությունները և դրանց անձնակազմերը պետք է կարողանան հասցեագրել Ստամբուլի կոնվենցիայի գործողության ոլորտում ընդգրկվող բռնության տարբեր տեսակները և աջակցություն տրամադրեն բռնության ենթարկվածների բոլոր, այդ թվում՝ դժվար հասանելի խմբերին: Այդ հատուկ ծառայությունների կողմից առաջարկվող աջակցության տեսակները ներառում են ապաստարանների և ապահով կացարանների տրամադրումը, անհետաձգելի բժշկական օգնությունը, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների և սեռական հետապնդման դեպքերում դատաբժշկական ապացույցների հավաքագրումը, կարճաժամկետ և երկարաժամկետ հոգեբանական խորհրդատվությունը, տրավմատոլոգիական ծառայությունները, իրավաբանական խորհրդատվությունը, շահերի պաշտպանության և անհատական աջակցության ծառայությունները, օգնության թեժ գծերը՝ բռնության ենթարկվածներին ծառայության ճիշտ տեսակին ուղղորդելու և բռնության ենթարկված կամ բռնության ակնատես երեխաների համար կոնկրետ ծառայություններ ապահովելու նպատակով:²¹

Աջակցության կենտրոններն առանցքային դերակատարություն ունեն մասնագիտացված ծառայությունների մատուցման հարցում (Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 19-րդ հոդված): Դրանք պարտավոր են անհատույց տրամադրել հոգեբանական և իրավաբանական օգնություն, ինչպես նաև այլ անհրաժեշտ սոցիալական ծառայություններ: Կենտրոնները կատարում են նաև կարևոր տեղեկատվական գործառույթ (տե՛ս վերևում): Այս ծառայությունները հասանելի են ոչ միայն բռնության ենթարկվածի, այլև, հարկ եղած դեպքում, նրա ընտանիքի անդամների, մասնավորապես՝ երեխաների կամ խնամքի տակ գտնվող անձանց համար:

Աջակցության կենտրոնները, հարկ եղած դեպքում, պետք է օգնեն նաև բռնության ենթարկվածին ապաստարանում տեղավորելու հարցում, անցկացնեն ռիսկերի գնահատում և ուսումնասիրեն բռնության պատճառներն ու համատեքստը: Այս գործառույթներն իրականացնելիս աջակցության կենտրոնները գործում են որպես կարևոր միջնորդներ բռնության ենթարկվածի և մյուս ծառայությունների, այդ թվում՝ ոստիկանության և դատարանների միջև: Նրանք կարող են նաև բռնության ենթարկվածի անունից և նրա համաձայնությամբ երկրպագնել պաշտպանական որոշում կայացնելու դիմումներ:

Աջակցության կենտրոնների նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 14-րդ հոդվածի համաձայն, որով սահմանվում են նախարարության պարտականությունները, այն է՝ աջակցության կենտրոնների հավաստագրումը, ծառայությունների որակի մշտադիտարկումը և Կառավարության կողմից սահմանված չափանիշներին դրանց համապատասխանության ապահովումը: Նախարարությունը համագործակցում է նաև

21. «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլի կոնվենցիա) բացատրական զեկույց, պարբերություն 132:

հասարակական կազմակերպությունների հետ՝ այդ ծառայությունները ֆինանսավորելու և դրանց գործունեությունն ապահովելու համար, Կառավարության կողմից հաստատված տիպային համաձայնագրերի հիման վրա կնքում է պայմանագրեր և ապահովում է ֆինանսավորման թիրախային օգտագործումը:

«Աջակցության կենտրոնի գործունեությանը, մատուցվող ծառայություններին և անձնակազմին ներկայացվող պահանջները և աջակցության կենտրոնի կողմից ծառայությունների մատուցման կարգը հաստատելու մասին» Կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի թիվ 158-Ն որոշմամբ սահմանվում են աջակցության կենտրոնների գործունեության մանրամասն պահանջները: Որոշմամբ սահմանվում են ինչպես մատուցվող ծառայությունների շրջանակն ու բնույթը, սոցիալ-հոգեբանական, իրավաբանական և այլ տեսակի օգնությունը, այնպես էլ անձնակազմին ներկայացվող մասնագիտական և որակավորման հստակ պահանջները:

2020 թվականից ի վեր պետական բյուջեից ֆինանսավորվել են ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածներին ուղղված երեք աջակցության ծրագրեր: Այն է՝ աջակցության կենտրոնների կողմից մատուցվող ծառայություններ (96 միլիոն ՀՀ դրամ), ապաստարանային ծառայություններ (12.5 միլիոն ՀՀ դրամ) և բռնության ենթարկվածներին միանվագ ֆինանսական օգնության տրամադրում (15 միլիոն ՀՀ դրամ):²²

Աջակցության կենտրոնների անձնակազմը պետք է պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների և ծառայությունների մատուցման գործընթացում կիրառի բազմամասնագիտական մոտեցում: Սովորաբար, տրամադրվող աջակցությունը ներառում է սոցիալական աշխատողների, հոգեբանների, իրավաբանների և, հարկ եղած դեպքում, այլ մասնագետների, ինչպես օրինակ՝ առողջապահության ոլորտի մասնագետների կամ մանկավարժների միջև համագործակցությունը: Այսպիսով, աջակցության կենտրոնները նպատակ ունեն տրամադրել ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածների բարդ ու փոխկապակցված կարիքներին համալիր արձագանք:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունված թիվ 173-Ն հրամանով կարգավորում են այն անձանց հետագա աջակցության ընթացակարգերը, որոնք դիմել են աջակցության կենտրոններ կամ տեղավորվել են ապաստարաններում: Այս համատեքստում մշտադիտարկումն ու գնահատումն իրականացվում է սոցիալական աշխատողի կողմից: Գնահատման նպատակն է դիտարկել բռնության հետագա ռիսկի առկայությունը, ինչպես նաև անձի սոցիալական կարիքները, այդ թվում՝ նրա ապաստարանում մնալու հետագա անհրաժեշտությունը: Այս դրույթով նախատեսվում է, որ անվտանգ բնակարանի անհրաժեշտություն կարող է առաջանալ մեկից ավելի անգամ կամ երկարաժամկետ, մասնավորապես, երբ բռնության ռիսկը շարունակվում է: Թեև մշտադիտարկման ինստիտուցիոնալացումը ողջունելի է, սակայն առավել կարևոր է, որ դրա իրականացումն ապահովի շահառուների գաղտնիությունը, նպաստի վստահության ձևավորմանը և ուղեկցվի համապատասխան վերապատրաստումներով և ռեսուրսներով: Այս մեխանիզմը նպաստում է հետագա միջամտությունների առավել տեղեկացված պլանավորմանը, աջակցության ծառայությունների՝ փոփոխվող հանգամանքներին համապատասխան հարմարեցմանը, ինչպես նաև կրկնագոհացման վաղ հայտնաբերման հնարավորությունների ամրապնդմանը:

Աջակցության կենտրոնները հավաքագրում և վարում են նաև ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալներ, և դրանք փոխանցում են իրավասու մարմինին: Նրանց գործունեությունը հիմնված է նաև այդ տվյալների արդյունքների վրա, ինչը նպաստում է քաղաքականության մշակմանն ու հետագա միջամտությունների բարելավմանը:

Հայաստանում Ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների տարածքային ցանցը ստեղծվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ հիմնական շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ Երևանում գործող Կանանց աջակցման կենտրոնի և մյուս ՔՀԿ-ների հետ համագործակցությամբ ու կարճ ժամանակահատվածում և նպաստել է տարածքային ՔՀԿ-ների պոտենցիալի ամրապնդմանը: Ցանցի շնորհիվ ստեղծվել է նաև **Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան**: Այս գարգացումից հետո ամբողջ երկրում ներկայումս գործում է 11 աջակցման կենտրոն, ինչը զգալիորեն նպաստել է համակարգի կարողությունների ավելացմանը: Ապաստարանները հասանելի են մայրաքաղաք Երևանում և մի շարք մարզերում, մասնավորապես՝ Լոռու, Շիրակի, Կոտայքի, Սյունիքի, Արարատի և Տավուշի մարզերում: Դրանք անվտանգ կենսապայմաններ և համապարփակ աջակցության ծառայություններ են առաջարկում ինչպես ընտանեկան բռնության ենթարկվածներին, այնպես էլ որոշ դեպքերում թրաֆիքինգի զոհերին և նրանց երեխաներին: Վերջիններիս մատուցվում են իրավաբանական խորհրդատվություն, հոգեբանական աջակցություն, սննդի և հիգիենայի փաթեթներ, երեխաների համար կրթական աջակցություն և առողջապահական օգնություն: Այս կենտրոններն ունեն ընտանեկան բռնության դեպքերի, մասնավորապես կանանց և երեխաների մասնակցությամբ դեպքերի հետ աշխատանքի մեծ փորձ: Նրանց աշխատանքը հաճախ իրականացվում է բժշկական հաստատությունների, ոստիկանության բաժանմունքների և դատական մարմինների հետ սերտ համագործակցությամբ՝ ապահովելով ընտանեկան բռնությանն առավել համակարգված արձագանք:

Ընտանեկան բռնության աջակցության ծառայությունները Եվրոպայի խորհրդի «Ընտանեկան բռնության մասնագիտացված ծառայությունները Հայաստանում. կարողությունների, որակի և շարունակական բարելավման ապահովում» աշխատության շրջանակներում (Ջեյմս և Հովակիմյան, 2024թ.) գնահատվել և մանրամասն դիտարկվել

22. Հարցաթերթիկի պատասխան:

են: Այս գեկույցը փաստում է, որ ընտանեկան բռնության հարցերով մասնագիտացված ծառայությունների կարողությունները պետական մարմինների և ՔՀԿ-ների արդյունավետ համագործակցության միջոցով շատ արագ զարգացել են, իսկ ծառայությունները սկսել են գործունեություն իրականացնել նաև շրջաններում: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը փորձում էր վերհանել ծառայությունների գործունեության մշտադիտարկման և գնահատման համակարգի մշակման լավագույն գործելակերպերը՝ հաշվի առնելով ընտանեկան բռնության աջակցության ծառայությունների ցանցի և մյուս գերատեսչությունների, մասնավորապես՝ ոստիկանության և ունիվերսալ սոցիալական ծառայությունների կարողությունները, բարելավելով դրանց միջև համագործակցությունը և սահմանելով համապատասխան պարտականությունները: Զեկույցում ներկայացված են ծառայության բարելավմանն ուղղված մի շարք առաջարկություններ: Ամենակարևոր առաջարկությունները վերաբերում են միջգերատեսչական համագործակցության աշխատակարգերի մշակմանը: Հիմք ընդունելով այս համապարփակ գեկույցը և հաշվի առնելով, որ մասնագիտացված աջակցության ծառայությունների համակարգում կարելի է կատարել բարելավումներ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ ներկայումս չկա որևէ հանգամանք, որ կվկայի Կոնվենցիայի վավերացմանը խոչընդոտող գործոնների մասին:

Մյուս կարևոր խնդիրը վերաբերում է այս ծառայությունների ֆինանսական կայունությանը: Թեև որոշ ՔՀԿ-ներ ստանում են պետական աջակցություն, այնուամենայնիվ, այդ ֆինանսավորումը հաճախ տրվում է կոնկրետ նախագծի համար, կարճաժամկետ և անկանխատեսելի ձևաչափով, ինչը խաթարում է կազմակերպությունների՝ երկարաժամկետ հեռանկարում ծառայությունների պլանավորման և մատուցման կարողությունը: Կարելի է դիտարկել ՔՀԿ-ների հետ պայմանագրերի ժամկետի երկարաձգման հնարավորությունը՝ այն մեկ տարուց դարձնելով երեքից հինգ տարի, ինչը կբարձրացի ֆինանսական ապահովությունը և կնվազեցնի յուրաքանչյուր տարի նոր պայմանագիր կնքելու համար շարունակաբար մրցույթի մասնակցելու անհրաժեշտությունը: (Ջեյմս և Հովակիմյան, 2024թ.) Ավելին, մասնագիտացված աջակցությունը բավարար չափով զարգացած չէ բռնության ենթարկվածների որոշակի խմբերի, այդ թվում՝ տղամարդկանց, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների և սեռական բռնություն վերապրած անձանց համար: Բնակչության տվյալ խմբերի համար անհատականացված ծառայությունների բացակայությունը կարող է հանգեցնել նրանց կոնկրետ կարիքների չբավարարմանը:

Արձանագրվել է հական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Տրամադրել մասնագիտացված աջակցություն բռնության ենթարկված անձանց բոլոր խմբերին, այդ թվում՝ տղամարդկանց, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցներին և սեռական բռնություն վերապրածներին:	Բարձր
Դիտարկել ՔՀԿ-ների համար պայմանագրերի ժամկետը մեկ տարուց ավելի, օրինակ՝ երեքից հինգ տարի դարձնելու հնարավորություն:	Միջին

Ապաստարանները (Հոդված 23)

Կոնվենցիայի համաձայն՝ Կողմերը պետք է ապահովեն բավարար թվով պատշաճ ու հեշտ հասանելի ապաստարանների հիմնումը²³ ընտանեկան բռնության ենթարկված անձանց, հատկապես՝ կանանց և նրանց երեխաներին անվտանգ կացարանով ապահովելու և նախաձեռնողական օգնություն ցուցաբերելու նպատակով:

Հայաստանը զգալի քայլեր է ձեռնարկել ապաստարանի տրամադրման պահանջը կատարելու ուղղությամբ՝ ազգային օրենսդրության և գործնական կարգավորումների շնորհիվ: Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ ապաստարանները պետք է հավաստագրվեն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից և պետք է համապատասխանեն ենթակառուցվածքների, անվտանգության, մատչելիության և մատուցվող ծառայությունների վերաբերյալ կոնկրետ չափանիշների: Այդ ծառայություններն են հոգեբանական և իրավաբանական օգնությունը, հիմնական կարիքների բավարարումը, մասնավորապես՝ սնունդն ու հագուստը, ինչպես նաև երեխաների կրթության և զարգացման հնարավորությունների ապահովումը: Օրենքը լրացվում է Կառավարության (2019 թվականի մարտի 29-ի) թիվ 364-Ն որոշմամբ, որով սահմանվում են ապաստարանի գործունեությանը, այդ թվում՝ ենթակառուցվածքներին, անձնակազմին և մատուցվող ծառայություններին ներկայացվող պահանջները: Կարևոր է, որ նշված որոշմամբ հաստատվում է նաև իրավասու մարմնի և ապաստարանի ծառայություններ տրամադրող ոչ առևտրային կազմակերպությունների միջև կնքվող

23. Եվրոպայի խորհրդի՝ Կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության դեմ պայքարին ուղղված գործունեության վերաբերյալ վերջնական գեկույցով (EG-TFV (2008)6) առաջարկվում է կանանց մասնագիտացված ապաստարաններում ունենալ յուրաքանչյուր տարածաշրջանում հասանելի ապահով կացարան՝ բնակչության յուրաքանչյուր 10 000 շնչի համար մեկ ընտանեկան տեղի առկայությամբ: Այնուհանդերձ, ապաստարաններում տեղերի քանակը պետք է կախված լինի փաստացի կարիքից: Բռնության այլ ձևերի համար ապաստարաններում առաջարկվող տեղերի քանակը ևս կախված է փաստացի կարիքից: (Ստամբուլի կոնվենցիայի բացատրական գեկույց, 2011թ., պարբերություն 135):

Ֆինանսավորման պայմանագրի օրինակելի ձևը: Այս շրջանակով ապահովվում է պետական ֆինանսավորման իրավական հիմքը՝ միևնույն ժամանակ սահմանելով պայմանագրային պարտավորություններ և մշտադիտարկման մեխանիզմներ՝ միջոցների արդյունավետ ու հաշվետու օգտագործումն ապահովելու համար: Ֆինանսական աջակցության տրամադրումը որոշվում է միջակցային ընտրության ընթացակարգերի և պետական չափանիշների շարունակական կատարման հիման վրա:

Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 26-րդ հոդվածով սահմանվում է, որ սոցիալական պաշտպանության հաստատությունները պատասխանատու են տարբեր կարիքներ ունեցող խմբերին երկարաժամկետ կամ կարճաժամկետ ապաստարանով ապահովելու և շուրջօրյա համապարփակ խնամք տրամադրելու համար: Մասնավորապես, նշված օրենքի համաձայն՝ ապաստարանները համարվում են օրինական սոցիալական պաշտպանության հաստատություններ, որոնք կացարան և խնամք են տրամադրում ընտանեկան բռնության ենթարկված և նրանց խնամքի տակ գտնվող անձանց, ինչպես նաև թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց:

2025 թվականի սկզբից ի վեր ընտանեկան բռնության ենթարկվածներին ապաստարանով ապահովումը Հայաստանում հիմնականում իրականացվում է հասարակական կազմակերպությունների կողմից՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համաֆինանսավորմամբ: Նմանատիպ ապաստարան ղեկավարվում է Երևանում գործող Կանանց աջակցման կենտրոն ՔՀԿ-ի կողմից: Այս ապաստարանը տրամադրում է անհրաժեշտ ծառայությունների լայն շրջանակ, այդ թվում՝ անվտանգ կացարան, սոցիալ-հոգեբանական, իրավաբանական և բժշկական օգնություն: Շահառուներն ապահովվում են նաև սնունդով և հագուստով, իսկ երեխաները՝ անհրաժեշտ միջավայրով և կրթության համար անհրաժեշտ պարագաներով: Ապաստարան մուտքն իրականացվում է աջակցության կենտրոնների կամ ուղիղ դիմելու միջոցով և, որպես կանոն, անձը հաստատող փաստաթղթի ու հանրային ծառայությունների համարանիշի (սոցիալական քարտ) ներկայացմամբ: Կանանց աջակցման կենտրոնը նշում է, որ իրենց կողմից որդեգրված ապաստարանի կազմակերպման մոդելը թույլ է տալիս հաղթահարել բռնություն վերապրածների տեղավորման հետ կապված խոչընդոտները:

Ավելին, ՀՀ օրենսդրությամբ սահմանվել է կարևոր երաշխիք՝ ապաստարաններում բնակվող ընտանեկան բռնության ենթարկվածների գտնվելու վայրի վերաբերյալ գաղտնիությունն ու անվտանգությունը պաշտպանելու համար: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 47.14 հոդվածի համաձայն՝ Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքով նախատեսված ապաստարանում տեղավորված անձի գտնվելու վայրը հայտնելն այն անձին, որն այդ մասին տեղեկանալու իրավասություն չունի այն անձի կողմից, որն այդ մասին տեղեկացել է իր ծառայողական կամ աշխատանքային պարտականությունները կատարելու կապակցությամբ, համարվում է իրավախախտում: Վերջինս ենթադրում է տուգանքի նշանակում՝ 200,000-ից մինչև 400,000 ՀՀ դրամ (մոտավորապես 470-ից 940 եվրո), ինչն արտացոլում է խախտման լրջությունը:

Այնուամենայնիվ, դեռևս առկա են կարևոր խնդիրներ, որոնք շարունակում են ազդել ապաստարանների մատչելիության և արդյունավետության վրա: Ամենահրատապ խնդիրներից մեկն ապաստարանների անհամաչափ աշխարհագրական բաշխվածությունն է, որի հետևանքով հեռավոր կամ գյուղական համայնքներում բռնության ենթարկվածները հաճախ չունեն բավարար հասանելիություն: Նույն խնդիրն առկա է նաև աջակցության կենտրոնների դեպքում: Բացի դրանից, թեև Կառավարությունը միջոցներ է ձեռնարկել ֆինանսավորում ապահովելու ուղղությամբ, այնուամենայնիվ, շատ ապաստարաններ շարունակում են կախված լինել կարճաժամկետ դրամաշնորհներից կամ դոնորային ծրագրերից, ինչը խոչընդոտում է ծառայությունների երկարաժամկետ պլանավորումն ու կայունությունը:

Անհրաժեշտ է նաև ընդլայնել ապաստարանների ներառականությունը, մասնավորապես՝ բռնության ենթարկվածների տարբեր խմբերի, այդ թվում՝ բռնության ենթարկված տղամարդկանց, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների, փախստական կանանց ու աղջիկների և այլոց կարիքները բավարարելու համար: Թեև այս խմբերն օրենքով սահմանված կարգով իրավունք ունեն օգտվելու ապաստարանների ծառայություններից, այնուամենայնիվ, ենթակառուցվածքները և աջակցության ծառայությունները միշտ չէ, որ հարմարեցված են նրանց անհատականացված կարիքներին:

Չնայած նշված սահմանափակումներին, ապաստարանների իրավական ճանաչումը՝ որպես ազգային սոցիալական աջակցության ենթակառուցվածքի բաղկացուցիչ մաս՝ նշանակալից ձեռքբերում է: Ապաստարանների մատչելիության բարձրացման, կայուն ֆինանսավորման ապահովման և առավել ներառական, կարիքահեն ծառայությունների մշակման համար անհրաժեշտ կլինեն շարունակական ջանքեր:

Արձանագրվել է էական առաջընթաց

Օգնության թեժ գծերը (Հոդված 24)

Անհրաժեշտ է ունենալ առնվազն մեկ անվճար ազգային օգնության թեժ գիծ, որը կգործի շուրջօրյա ռեժիմով (24/7) և կսպասարկի կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի դեպքում և կտրամադրի ճգնաժամային աջակցություն բոլոր համապատասխան լեզուներով: Թեժ գծի խորհրդատուները պետք է վերապատրաստված լինեն, իսկ զանգահարողների անսանձությունը պետք է երաշխավորվի:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը գործարկել է անվճար համապետական թեժ գիծ՝ 114 հեռախոսահամարով: Այն հասանելի է Հայաստանի ամբողջ տարածքում, այդ թվում՝ Երևանում և բոլոր մարզերում: Թեժ գիծը ծառայում է որպես առաջնային կապի ապահովման կարևորագույն կենտրոն ընտանեկան բռնության ենթարկվածների կամ այդ դեպքերով մտահոգված անձանց համար՝ տրամադրելով տեղեկություններ, խորհրդատվություն և առկա պաշտպանության և աջակցության միջոցառումների վերաբերյալ ուղղորդում: Չնայած այս քայլը ողջունելի է, այնուամենայնիվ այն համապետական թեժ գիծ է, որը սպասարկում է ոչ թե կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի դեպքում, այլև բոլոր քաղաքացիներին տեղեկություններ է տրամադրում բոլոր սոցիալական ծառայությունների վերաբերյալ:

Բացի վերը նշված թեժ գծից, Հայաստանի տարբեր բնակավայրերում, այդ թվում՝ Երևանում, Գյումրիում, Գորիսում, Վանաձորում և Գավառում գործում են աջակցության կենտրոնների կողմից ստեղծված լրացուցիչ թեժ գծեր, որոնք գործում են շուրջօրյա ռեժիմով (24/7) և ապահովում են արագ արձագանքման հնարավորություն: Այս թեժ գծերում աշխատում են վերապատրաստված մասնագետներ, որոնք կարող են տրամադրել առաջնային հոգեբանական աջակցություն, իրավաբանական խորհրդատվություն և ուղղորդում դեպի այլ ծառայություններ: Այնուամենայնիվ, այս թեժ գծի համակարգն առավել մասնատված է, քան մեկ միասնական թեժ գիծ է:

Ձեռնարկվում են լրացուցիչ քայլեր՝ օգնության թեժ գծերի հասանելիությունը բարձրացնելու և ծառայությունների համակարգումը բարելավելու համար: Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ նախարարությունը ներկայումս աշխատանքներ է իրականացնում ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի համար միասնական համապետական օգնության թեժ գծի ստեղծման ուղղությամբ: Այս համակարգի նպատակն է բազմաթիվ օգնության թեժ գծերի մասնատված կառուցվածքը փոխարինել մեկ միասնական կապի ապահովման կենտրոնով, ինչը թույլ կտա բարձրացնել ուղղորդումների, տեղեկությունների տարածման և անհետաձգելի իրավիճակներում արձագանքման արդյունավետությունը: Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները մտահոգություն են հայտնում, որ առաջարկվող համընդհանուր օգնության թեժ գիծը պարզապես կգործի որպես իրենց օգնության թեժ գծերին ուղղորդման համակարգ՝ առանց ուղղորդումները սպասարկելու համար իրենց համար հասանելի ֆինանսավորումն ավելացնելու: Ավելին, որոշ գյուղական համայնքներում արդեն իսկ առկա են լուրջ կադրային խնդիրներ, որոնք պահանջում են լուծում, քանի որ որոշ աջակցության ծառայություններ բարձրաձայնել են այն մտավախության մասին, որ իրենց օգնության հեռախոսային գծերը գործում են շուրջօրյա ռեժիմով՝ հանգեցնելով «ուժասպառության»: (Ջեյմս և Հովակիմյան, 2024թ. էջ 24)

Հայաստանը պետք է ձեռնարկի քայլեր մեկ համապետական թեժ գիծ ստեղծելու ուղղությամբ, որը կսպասարկի կանանց նկատմամբ բռնության բոլոր տեսակները, ինչպես նաև ընտանեկան բռնության դեպքերը: Թեժ գծի հեռախոսահամարը պետք է լինի անվճար, լայնորեն հանրայնացված և բոլորի համար հասանելի: Թեժ գծի խորհրդատուները պետք է պատրաստվածություն ունենան կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի հարցում:

Առաջին ֆուտբոլային ակադեմիան, սակայն որոշ ոլորտներում դեռևս կան չլուծված խնդիրներ	
Միջոցառում	Գերակայություն
Ապահովել կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի հարցերով զբաղվող միասնական օգնության թեժ գծի առկայությունը:	Բարձր

Աջակցությունը սեռական բռնության ենթարկված անձանց համար (Հոդված 25)

Եվրոպայի խորհրդի՝ Կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության դեմ պայքարին ուղղված գործունեության վերաբերյալ վերջնական զեկույցով (EG-TFV (2008)6) առաջարկվում է, որ **այդպիսի մեկ կենտրոնը հասանելի լինի յուրաքանչյուր 200.000 բնակչի համար, և ըստ աշխարհագրական տեղակայման՝ դրանք գյուղական համայնքներում սեռական բռնության ենթարկված անձանց համար լինեն նույնքան հասանելի, որքան քաղաքներում:** «Համապատասխան» եզրույթը նպատակ ունի ապահովելու, որ առաջարկվող ծառայությունները համապատասխանում են սեռական բռնության ենթարկված անձի կարիքներին:

Հայաստանն առաջին քայլերն է կատարում սեռական բռնության ենթարկված անձանց համար մասնագիտացված ծառայություններ ներդնելու ուղղությամբ, և այդ համատեքստում նախարարության հետ կնքված դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում Հայաստանում գործում է Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը:²⁴ Այս ՔՀԿ-ն սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայություններ է մատուցում հատկապես թրաֆիքինգի, թրաֆիքինգի պոտենցիալ և սեռական շահագործման ենթարկված անձանց՝ այդպիսով անուղղակիորեն ընդգրկելով նաև սեռական բռնություն վերապրածներին: Մատուցվող ծառայություններն են ճգնաժամային միջամտությունը, տրավմաների վերաբերյալ տեղեկացված մոտեցմամբ իրականացվող հոգեբանական խորհրդատվությունը և սոցիալական աշխատողների աջակցությունը:

24. Հարցաթերթիկի պատասխան:

Չնայած արձանագրված առաջընթացին՝ Հայաստանը դեռևս պետք է ստեղծի սեքսուալ բնույթի բռնի գործողությունների ենթարկված անձանց օգնության ճգնաժամային կամ սեռական ոտնձգության ենթարկված անձանց ուղղորդման կենտրոնների համապարփակ ցանց, որը կապահովի սեռական բռնության ենթարկված բոլոր անձանց համար ժամանակային և համապարփակ բժշկական, հոգեբանական և իրավաբանական աջակցություն: Գործող ծառայությունները, որոնք թեև ունեն կարևորագույն նշանակություն, այնուամենայնիվ, շարունակում են սահմանափակ լինել թե՛ իրենց ծավալով և թե՛ աշխարհագրական ծածկույթով: Ինչպես նշվել է, մասնագիտացված ճգնաժամային միջամտության և տրավմատոլոգիական ծառայությունները հիմնականում կենտրոնացած են Երևանում, իսկ իրավապահ մարմինների, առողջապահական ծառայություններ մատուցողների կամ աջակցության կենտրոնների կողմից այդ ծառայություններ ուղղորդումների գործընթացը դեռևս համակարգված չէ: Ստեղծվել է «Safe You» բջջային հավելվածը²⁵, որը նպատակ ունի լրացնել սեռական ոտնձգության ենթարկվածների, ռեսուրսների և ծառայություններ մատուցողների միջև առկա բացը: (Ալմաջյան, 2024թ.)

Երեխաների սեռական բռնության համատեքստում արձանագրվել է լուրջ խնդիր, որը կապված է առաջին բուժօգնություն տրամադրող անձանց կողմից կենսաբանական նմուշներ հավաքելու ընթացակարգի բացակայության հետ, ինչը հանգեցնում է գործընթացի ձգձգումների և ֆիզիկական ապացույցների անդառնալի կորստի (Եվրոպայի խորհուրդ և այլք, 2024թ., էջ 22): 2024 թվականի կեսերին տեղի են ունեցել խորհրդակցություններ սեռական ոտնձգությունների դեպքերով անհետաձգելի դատաբժշկական փորձաքննությունների կատարման ընթացակարգեր մշակելու, այդ թվում՝ սեռական ոտնձգության վերաբերյալ ապացույցներ հավաքագրելու գործիքների կիրառմամբ դրանց առնչությամբ անհետաձգելի փորձաքննություններ կատարելու հավաստագիր ունեցող բուժաշխատողների/հաստատությունների ցանց ստեղծելու վերաբերյալ: Սա չպետք է սահմանափակվի միայն երեխաներով:

Այս ոլորտում ակնհայտ է ծառայությունների բարելավման անհրաժեշտությունը: Անչափ կարևոր է, որ ապացույցները ձեռք բերվեն և պահպանվեն անգամ այն դեպքերում, երբ կանայք չեն ցանկանում դրա առնչությամբ անմիջապես հաղորդում ներկայացնել կամ մեղադրանք առաջադրել: Ինչպես նշվել է վերևում, Գեղեթային ռազմավարության և Միջոցառումների ծրագրում հստակ սահմանված են առողջապահական համակարգի արձագանքի բարելավմանն ուղղված միջոցառումները: Սեռական բռնության ենթարկված անձանց աջակցություն ցուցաբերելու հարցում լավագույն գործելակերպերի կիրառումն ապահովելու համար կարող է անհրաժեշտ լինել ձեռնարկել լրացուցիչ քայլեր:

Արձանագրվել է հսկան առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Ընդլայնել սեռական ոտնձգության դեմ պայքարի ծառայությունների շրջանակը՝ դրանք հասանելի դարձնելով նաև շրջաններում:	Բարձր

Բռնությանն ականատես երեխաների պաշտպանությունը և աջակցությունը (Հոդված 26)

26-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը պետք է պատշաճորեն հաշվի առնեն Կոնվենցիայի գործողության ոլորտում ընդգրկվող բռնության բոլոր ձևերին ականատես երեխաների իրավունքներն ու կարիքները և հիշեն, որ բռնության ականատես լինելը ինքնին բռնություն է: Միջոցառումները պետք է ներառեն սույն տարիքին համապատասխան հոգեբանական խորհրդատվության տրամադրումը, և Կողմերը պետք է պատշաճորեն հաշվի առնեն երեխայի լավագույն շահերը:

Ընտանիքի ներսում բռնությանն ականատես երեխան համարվում է բռնության ենթարկված անձ (Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 4-րդ հոդված), հետևաբար, նրան հասանելի են դառնում նույն երաշխիքներն ու աջակցության ծառայությունները, ինչ ուղղակիորեն բռնության ենթարկվածներին: Բացի դրանից, 2-րդ հոդվածով ընդգծվում է *երեխայի լավագույն շահերի* առաջնահերթությունն ընտանեկան բռնության հետ կապված բոլոր միջամտություններում:

Այնուամենայնիվ, չնայած իրավական ճանաչմանը, Հայաստանը դեռևս չունի լիարժեք գործունակ և մասնագիտացված ինստիտուցիոնալ շրջանակ՝ ընտանեկան բռնության ենթարկված երեխաների ռիսկերը և բարեկեցությունը գնահատելու համար, և ունի որոշ խնդիրներ՝ կապված խնամակալության և տեսակցությունների գործերով կայացված վերջնական վճիռների կատարման և դրանց նկատմամբ վերահսկողության հետ: Ներկայումս չկան հատուկ ծառայություններ կամ մասնագետներ, որոնք համակարգված կերպով կգնահատեն նման իրավիճակներում երեխայի խոցելիությունը: Ինչպես արձանագրվել է վերջին գնահատումներում, ընտանիքում երեխաների նկատմամբ սեռական և ֆիզիկական բռնությունը մեծամասամբ մնում է չհաղթահարված, իսկ պետության միջամտությունը՝

25. Հավելյալ տեղեկությունների համար կարող եք այցելել պաշտոնական կայքը հետևյալ հղմամբ՝ <https://safeyou.space/en>:

երեխաներին վնասակար միջավայրից դուրս բերելու կամ թիրախային պաշտպանություն ապահովելու ուղղությամբ սահմանափակ է: (Եվրոպայի խորհուրդ և այլ կազմակերպություններ, 2024թ.) Գործնականում շատ բան կախված է արագ արձագանքման ծառայողներից, մասնավորապես՝ ոստիկանությունից: Ընտանեկան բռնության դեպքի վայրում ձեռնարկվող միջոցառումները կարևորագույն նշանակություն ունեն այն իրավիճակներում, երբ երեխաները ներկա են:

2024 թվականի սեպտեմբերին հրապարակված զեկույցում ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն ողջունել է 2022 թվականի Քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները, այդ թվում՝ երեխաների հետ հարցազրույցների անցկացումը մասնագիտացված հոգեբանների կողմից և հարցազրույցների տեսաձայնագրումը դատարանների համար պարտադիր դարձնելը, ինչպես նաև Բարձրագույն մոդելով «ապահով անկյուն» համակարգի ստեղծումը: Հայաստանը Բարձրագույն համակարգը ներդրել է 2023 թվականին՝ այդ մոդելով կենտրոններ հիմնելով Երևանում և Կապանում: (Ապահով անկյուն՝ բռնության ենթարկված երեխաների համար, 2023թ.) Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կենսագործումը վերահսկելու նպատակով կոմիտեն (ԵԻԿ) առաջարկում է ամրապնդել Հայաստանի՝ երեխաների պաշտպանության համակարգը՝ ամբողջ երկրում հիմնելով բավարար բյուջեով «ապահով անկյուն» հաստատություններ, ապահովելով երեխաների և զենդերային հայեցակետերի հաշվառմամբ բազմամասնագիտական քննությունները, որոնց ընթացքում կբացառվեն կրկնվող հարցազրույցներն ու խաչաձև հարցաքննությունների ժամանակ երեխային կրկնակի տրավմայի ենթարկելը, ինչպես նաև ամրապնդելով բռնության ենթարկված երեխաների համար տրավմայի հաղթահարմանն ուղղված թերապիան և աջակցության մյուս ծառայությունները:

Տեղեկությունների համաձայն՝ սեռական բռնության ենթարկվածների մեծ մասը երեխաներ են, ուստի ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն մի շարք առաջարկություններ է արել՝ երեխաների համար արդարադատության հասանելիությունը, մասնավորապես՝ երեխաների սեռական բռնության և ընտանեկան բռնության դեպքերում բարելավելու համար:

Երեխայի իրավունքների կոմիտեն առաջարկել է նաև համապարփակ կերպով գնահատել ընտանեկան բռնության ծավալը, պատճառներն ու բնույթը և ապահովել, որ պաշտպանությանն ուղղված օրենսդրությամբ նախատեսվի երեխաների համար բավարար սոցիալ-հոգեբանական աջակցություն և հանցագործության ծանրությանը համապատասխանող պատժամիջոցներ, այդ թվում՝ տույժեր և հաշվի առնվեն երեխաների լավագույն շահերը: Բացի դրանից, անհրաժեշտ է ստեղծել երեխաների պահանջներին համապատասխանեցված, գաղտնի հաղորդում ներկայացնելու մեխանիզմներ, իսկ տեսաձայնագրված հարցազրույցները պետք է դատական վարույթում ընդունվեն որպես ապացույց, ինչպես նաև պետք է ձեռնարկվեն քայլեր՝ ապահովելու համար, որ խաչաձև հարցաքննությունները, հարկ եղած դեպքում, հնարավոր լինի անցկացնել մինչդատական փուլում, արագացված ընթացակարգով՝ երեխայի կողմից լրացուցիչ ցուցմունք տալու անհրաժեշտությունից խուսափելու համար: Կոմիտեն առաջարկել է նաև վերապատրաստման դասընթացներ անցկացնել բռնության ենթարկված կամ բռնության ակնհաստես երեխաների հետ և նրանց համար աշխատող մասնագետների համար, ինչպես նաև նպաստել և խթանել այդ մասնագետների կողմից երեխաների նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ պարտադիր հաղորդումներ ներկայացնելը (ՄԱԿ-ի ԵԻԿ-ի կենսագործումը վերահսկելու նպատակով կոմիտե, 2024թ.):

Թեև Հայաստանի իրավական շրջանակն առաջադեմ մեկնակետ է ապահովում՝ ընտանեկան բռնության ակնհաստես լինելու դեպքում երեխաներին ընտանեկան բռնության ենթարկված անձ ճանաչելով, այնուամենայնիվ, այս սկզբունքների ամբողջական իրականացումը պահանջում է ինստիտուցիոնալ բարեփոխումներ: Դրանք ներառում են երեխաների պաշտպանության մասնագիտացված ծառայությունների ստեղծում, բոլոր ներգրավված մասնագետների համար տրավմաների վերաբերյալ տեղեկացված վերապատրաստումների կազմակերպում և ամուր միջգերատեսչական համակարգում:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Բարձրացնել պաշտպանության համակարգի բոլոր դերակատարների իրազեկվածությունն ընտանեկան բռնության ենթարկված երեխաների փորձառության և մասնավորապես՝ խնամակալության ու տեսակցությունների գործերում դրա դրսևորումների վերաբերյալ:	Բարձր
Շարունակել ներդնել «ապահով անկյուններ» համակարգը	Միջին

Հաղորդում ներկայացնելը (Հոդված 27) և մասնագետների կողմից հաղորդում ներկայացնելը (Հոդված 28)

27-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը պետք է ձեռնարկեն միջոցառումներ, որպեսզի խրախուսեն այն անձանց կողմից իրավասու կազմակերպություններին կամ մարմիններին հաղորդում ներկայացնելը, որոնք որևէ կերպերկա են եղել, կամ ողջամիտ հիմքեր ունեն կարծելու, որ կարող է կատարվել Կոնվենցիային հակասող որևէ արարք կամ հետազայում ևս հնարավոր են այդպիսի լուրջ բռնարարքներ:

Մասնագետների՝ Կոնվենցիայի 28-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը մանրամասն ձևակերպված է, որպեսզի առողջապահական և այլ ոլորտների աշխատողները հնարավորություն ունենան իրենց կասկածի մասին հաղորդում ներկայացնել իրավասու մարմիններին, եթե նրանք ողջամիտ հիմքեր ունեն կարծելու, որ չափահաս անձի նկատմամբ կատարվել է ծանր բռնարարք, և հետագայում ևս հնարավոր են այդպիսի լուրջ բռնարարքներ՝ առանց մասնագիտական գաղտնիքի պահպանման իրենց պարտականությունը խախտելու համար պատժի ենթարկվելու ռիսկի: Սակայն, այն դեպքերում, երբ չկան ողջամիտ հիմքեր կարծելու, որ կարող են կատարվել այլ ծանր բռնարարքներ, սովյալ կնոջ անձնական ինքնավարությունն ու ընտրությունը պետք է հարգվի: Բացատրական զեկույցում հստակ նշվում է, որ սույն դրույթով այդ մասնագետները հաղորդում ներկայացնելու պարտավորություն չունեն, մասնավորապես այն դեպքերում, երբ չկա բռնության ենթարկված անձի համաձայնությունը: Բացառություն կլինեն այնպիսի դեպքերը, երբ բռնության ենթարկվածն անչափահաս է կամ անկարող է պաշտպանել իրեն՝ ֆիզիկական կամ մտավոր առողջության խնդիրների պատճառով:

Հայաստանում բռնության ակնատեսների հարցում գերիշխող հասարակական վերաբերմունքը, որ ընտանեկան բռնությունը մասնավոր խնդիր է, թույլ չի տալիս թե՛ մասնագետներին, թե՛ հասարակության լայն շերտերին բռնությունը ճանաչել որպես հանրային խնդիր և դրա մասին հաղորդում ներկայացնել իշխանություններին: Արդյունքում, շատ դեպքեր մնում են չբացահայտված, իսկ վաղ միջամտության հնարավորություններ՝ չօգտագործված: 2025 թվականի փետրվարին ընդունված Կառավարության նոր որոշման նպատակն է լրացնել միջգերատեսչական մակարդակով հաղորդումներ ներկայացնելու առնչությամբ նախկին բացը, որն առկա է եղել Ոստիկանության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, խնամքի և առողջապահական մարմինների միջև, ինչպես նաև որոշմամբ ընդունվում են, որ մյուս կազմակերպությունները, որոնք իրենց գործունեության ընթացքում առնչվում են ընտանեկան բռնության դեպքերին, նույնպես կարող են հանդիսանալ տեղեկատվության աղբյուր ոստիկանության կամ հատուկ կառույցների համար:

2025 թվականի փետրվարի որոշումը, որով սահմանվում է ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի հայտնաբերման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ուղղորդման, ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կրկնման ռիսկի գնահատման կարգը, թույլ է տալիս, սակայն չի պարտադրում համապատասխան մարմիններին տեղեկությունների փոխանցումը, եթե չկա կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգ կամ կրկնվելու ռիսկ: **Համապատասխան մասնագետները պետք է տեղեկանան նոր ընդունված այս որոշման մասին, ստանան ուղղորդումներ և անցնեն դրանց իրականացման եղանակների վերաբերյալ վերապատրաստում:**

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Մշակել ուղեցույցներ համապատասխան մասնագետների համար՝ սահմանելով, թե երբ, ինչպես և ում պետք է ներկայացվեն հաղորդումները:	Միջին

Գլուխ 5

Նյութական իրավունք

Քաղաքացիական իրավունք

Պետական մարմինների դեմ քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցները և պատշաճ զգուշավորությունը (Հոդված 29)

Պետական մարմինների դեմ քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցների հասանելիությունը մարդու իրավունքների պաշտպանության գործուն համակարգի անկյունաքարերից մեկն է: Երբ պետական կառույցները չեն կանխում բռնարարքները, դրանց փաստով քննություն չեն իրականացնում, չեն պատժում մեղավորներին կամ պաշտպանում անձանց հասցվող վնասից, այդ խնդիրները վիճարկելու դատական կամ քվազի-դատական մեխանիզմների առկայությունը կարևոր է՝ հաշվետվողականության և իրավունքի գերակայության ապահովման համար: Պետության անգործության կամ ոչ իրավաչափ գործողությունների դեմ իրավական պաշտպանության միջոցներին դիմելու անձի իրավունքի ճանաչումն ամրապնդում է այն սկզբունքը, որ պետությունը ոչ միայն պարտավոր է գերծ մնալ իրավունքների խախտումներից, այլև գործել պատշաճ զգուշավորությամբ՝ ուրիշների կողմից իրավունքների խախտումները կանխելու համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանվում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները: Այդ իրավունքները ներառում են ոչ միայն անօրինական միջամտությունից պաշտպանությունը, այլև այդ իրավունքների իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու պետության պոզիտիվ պարտավորությունը: Անձինք կարող են բողոքարկել ոչ իրավաչափ վարչական գործողությունները, անգործությունը կամ որոշումները և դիմել համապատասխան իրավական պաշտպանության միջոցների:

Ի լրումն դատական իշխանության, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը կարևոր դերակատարություն ունի մարմինների դեմ քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցների ապահովման հարցում՝ իր անկախ սահմանադրական մանդատի միջոցով: Չհանդիսանալով դատական մարմին՝ Պաշտպանը գործում է որպես հասանելի մեխանիզմ ընտանեկան բռնության ենթարկվածների և այլ իրավունքների խախտումների համար՝ վարչական պրակտիկայի և ինստիտուցիոնալ ձախողումների ուսումնասիրությունների համար: Պաշտպանը կարող է հարցումներ իրականացնել, առաջարկություններ ներկայացնել և խթանել պաշտպանության իրավական միջոցների ինքնուրույն և համակարգային կիրառումը: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Պաշտպանը կարող է միջամտել պետական մարմինների կողմից ներպետական օրենսդրությամբ, այդ թվում՝ Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքով սահմանված իրենց պարտավորությունները չկատարելուն վերաբերող հարցերին և աջակցել բռնության ենթարկվածներին պաշտպանության, ծառայությունների և արդարադատության ապահովման հարցում:

Այնուամենայնիվ, հաշվետվողականության շրջանակն ամրապնդելու համար անհրաժեշտ են շարունակական ջանքեր՝ ուղղված այս մեխանիզմների մատչելիության, արդյունավետության և զոհակենտրոն մոտեցման ապահովմանը:

Արձանագրվել է էական առաջընթաց

Փոխհատուցումը (Հոդված 30)

Կոնվենցիայի համաձայն՝ պետությունները պետք է փոխհատուցում տրամադրեն երկու դեպքում: Առաջինը՝ ապահովեն, որ ընտանեկան բռնության ենթարկված անձինք սույն Կոնվենցիայի համաձայն սահմանված իրավախախտումներից ցանկացածի դեպքում բռնություն գործադրած անձից փոխհատուցում պահանջելու իրավունք ունենան: Երկրորդ՝ ապահովեն քաղաքացիաիրավական պաշտպանության համապատասխան միջոցառումների առկայությունը, եթե պետական մարմինները չեն կատարում համապատասխան բռնությունը կանխելու կամ դրանից պաշտպանելու իրենց պարտականությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ ընտանեկան և գենդերային հիմքով բռնության ենթարկվածները, որոնց ենթադրյալ հանցագործությամբ վնաս է պատճառվել, ունեն հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու և հանցագործությամբ իրենց պատճառված վնասը հատուցելու պահանջով դատարան դիմելու իրավունք: Այս իրավունքի երկակի նշանակությամբ իրականացումն արտացոլում է տուժողի՝ թե՛ որպես *տուժող* և թե՛ որպես *քաղաքացիական հայցվոր* համատեղված կարգավիճակը՝ ինչպես առավել մանրամասն ներկայացված է 50-րդ հոդվածի 2-րդ մասի 22-24 կետերում, և հնարավորություն է տալիս փոխհատուցման և քրեական պատասխանատվության հարցի վերաբերյալ որոշումը կայացնել նույն վարույթում, ինչը կարող է նվազեցնել երկրորդային զոհականացումը և նպաստել դատական վարույթի արդյունավետությանը: 41-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ քննիչը պետք է մինչդատական վարույթի փուլում միջոցներ ձեռնարկի՝ ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցումը, գույքի հնարավոր բռնագրավումը և վարույթային ծախսերի հատուցումն ապահովելու համար: Այսպիսով, իրավական դրույթները ստեղծում են կառուցվածքային մեխանիզմ, որի միջոցով տուժողներն իրենց պատճառված վնասի համար կարող են դիմել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների՝ ամրապնդելով արդարադատության մատչելիությունը և բռնության ենթարկված բոլոր անձանց հատուցումն ապահովելու պետության պատասխանատվությունը:

Այսպիսով, Հայաստանն ունի փոխհատուցման բազային համակարգ, որում անհրաժեշտ է կատարել որոշ բարեփոխումներ: Հայաստանյան համակարգի հիմնական բացերից մեկը մնում է պետության կողմից ֆինանսավորվող փոխհատուցման սխեմայի բացակայությունը, որը կծառայի բռնություն գործադրած անձից փոխհատուցում ստանալու հնարավորություն չունեցող ընտանեկան բռնության ենթարկված անձանց: Պետությունից ֆինանսական աջակցություն ստանալու առկա ձևերը, թեև արժեքավոր են, սակայն իրավական իմաստով չեն համարվում վնասի փոխհատուցում: (Տե՛ս օրինակ՝ Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն ընդունված Կառավարության 2025 թվականի հունվարի 16-ի թիվ 51-Ն որոշումը, որով սահմանվում է ընտանեկան բռնության ենթարկվածներին ժամանակավոր ֆինանսական աջակցություն տրամադրելու կարգը):

Այս պարտավորություններն արդեն իսկ ամրագրված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, և հասկանալի է, որ Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի²⁶ և Պետրոսյանն ընդդեմ Հայաստանի²⁷ (Հոդված 2) գործերով վճիռների հետևանքները գտնվում են ակտիվ քննարկման փուլում:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Ներդնել մեխանիզմ, որը հնարավորություն կտա ընտանեկան և գենդերային հիմքով բռնության ենթարկվածներին կա՛մ ուղղակիորեն բռնություն գործադրած անձից կա՛մ անուղղակիորեն պետության միջոցով պահանջել ոչ նյութական վնասի փոխհատուցում:	Բարձր

Խնամակալությունը, տեսակցության իրավունքը և անվտանգությունը (Հոդված 31)

Բռնության նախապատմություն ունեցող ընտանիքների դեպքում խնամակալության և տեսակցությունների վերաբերյալ որոշումները պետք է կայացվեն վտանգված տարբեր շահերի մանրամասն հավասարակշռմամբ: Կոնվենցիայի 31-րդ հոդվածի համաձայն՝ Կոնվենցիայի գործողության ոլորտում ընդգրկվող բռնության, մասնավորապես՝ ընտանեկան բռնության միջադեպերը պետք է հաշվի առնվեն խնամակալության և տեսակցությունների իրավունքների վերաբերյալ որոշումներ կայացնելիս՝ ապահովելու համար, որ այդ իրավունքների իրացումը չվնասեն ընտանեկան բռնության ենթարկված անձանց կամ երեխաների իրավունքներն ու անվտանգությունը:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքը բացահայտ հղումներ չի պարունակում ընտանեկան բռնությանը՝ որպես գործոն, որը պետք է հաշվի առնվի քաղաքացիական դատարանների դատավորների կողմից խնամակալության և տեսակցության վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Խնամակալության և տեսակցության վերաբերյալ որոշումների մեջ անվտանգության նկատառումների ներառման խնդիրը շարունակում է մնալ անող մտահոգության առարկա: Թեև իրավական շրջանակն այդ գնահատականների համար որոշ մեկնակետ է ապահովում, այնուամենայնիվ, հետագա ներդաշնակեցումը մասնագիտացված այնպիսի չափանիշներին, ինչպիսիք են հարկադիր վերահսկողության օրինաչափությունների ու ազդեցության, կամ բռնության ենթարկելու հետևանքով առաջացած տրավմայի ճանաչման չափանիշները, կամրապնդի մարդու իրավունքների ոլորտում ստանձնած պարտավորությունների կատարումը և

26. Համիկ Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործ (գանգատ թիվ 11829/16), 2024 թվականի դեկտեմբերի 12, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/eng/?i=001-238376>:
 27. Պետրոսյանն ընդդեմ Հայաստանի գործ (գանգատ թիվ 51448/15), 2025 թվականի ապրիլի 4, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/?i=001-238658>:

կաշտպանի բռնության ենթարկվածներին ու երեխաներին կրկնագոհականացումից : Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները հայտնում են, որ երեխաների խնամակալության և տեսակցությունների իրավունքների հետ կապված գործընթացները շատ խնդրահարույց են, քանի որ դրանք գոհակենտրոն չեն և հաշվի չեն առնում ընտանեկան բռնությունը: Այս իրավիճակի պատճառներից մեկն այն է, որ քրեական արդարադատության համակարգում ընտանեկան բռնությունը չի դիտարկվում որպես լուրջ խնդիր, որի վկայությունն է այն գործերի թիվը, որոնք կասեցվում են դեռևս Քննչական կոմիտեի կողմից քննության փուլում: Այս հարցին առավել մանրամասն անդրադարձ կատարվում է ստորև:

Խնամակալության առնչությամբ կազմակերպված հանդիպումները քննարկելիս ընտանեկան բռնության աջակցության ծառայություններն արձանագրել են, որ սոցիալական աշխատողները միշտ չէ, որ նկատում են երեխաների և մայրերի կարիքներն ընտանեկան բռնության և կրած տրավմայի համատեքստում: Սա կարող է հանգեցնել նրան, որ երեխաներին սպառնացող ռիսկերն անտեսվեն: (Ջեյմս և Հովակիմյան, 2024թ., էջ 32): Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը նույնպես հայտնում է, որ շփման և տեսակցությունների վերաբերյալ որոշումները միշտ չէ, որ հստակ են ձևակերպված, իսկ որոշումների կատարման առումով այն ունի սահմանափակ հնարավորություններ: Բացի դրանից, այն դեպքերում, երբ երեխաները հրաժարվում են ծնողների հետ շփումից, գործի քննության լիազորությունները սահմանափակվում են հոգեբանի եզրակացություն պահանջելով՝ առանց բոլոր հանգամանքների համապարփակ քննության:

Արձանագրվել է Հակա առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Ներդնել ընտանեկան բռնության պարտադիր սքրինինգի համակարգ քաղաքացիական դատարաններում: Մշակել ուղեցույցներ, որոնք կապահովեն ընտանեկան կամ այլ բռնության պատշաճ ձևով հաշվառումն ամուսնալուծության, խնամակալության և տեսակցությունների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում:	Բարձր
Դիտարկել խնամակալության և տեսակցությունների գործերով որոշումների օրինակելի ձևերի ներդրման հնարավորությունը՝ խնամակալության և տեսակցությունների որոշումների պայմանները, ինչպես նաև բռնության վերաբերյալ ցանկացած համապատասխան եզրակացության պատշաճ արձանագրումն ապահովելու նպատակով:	Միջին
Ապահովել քրեական ու քաղաքացիական դատարանների միջև պատշաճ համակարգման մեխանիզմներ և բռնության նախկին դեպքերն ու հետագա ռիսկերը որոշելիս ապացուցման բեռի ու հավասարակշռության ցանկացած տարբերության պատշաճ ըմբռնում:	Բարձր
Ապահովել, որ համապատասխան մասնագետները կարողանան մշտադիտարկել և փաստաթղթավորել բռնարարքի կամ (վերահսկվող կամ չվերահսկվող) տեսակցությունների վնասակար ազդեցությունների ապացույցները և տեղեկացնել դատարաններին, որպեսզի վերջիններս կարողանան վերանայել և (կամ) վերաքննել տեսակցությունների կամ խնամակալության վերաբերյալ ցանկացած որոշում՝ հիմնվելով թարմ տեղեկատվության վրա:	Բարձր
Ապահովել, որ սոցիալական աշխատանքի կենտրոններն ունենան բավարար ռեսուրսներ, այդ թվում՝ բավարար տարածք ու անձնակազմ՝ վերահսկվող տեսակցություններն անվտանգ միջավայրում և անհրաժեշտ աջակցությամբ կազմակերպելու, ինչպես նաև վերահսկվող շփման հետևանքով երեխաների մոտ սթրեսի հնարավոր նշանները ճանաչելու համար:	Բարձր

Քրեական իրավունք

Քրեական իրավունքով նախատեսված միջոցառումների առաջնային նպատակն է ուղղորդել անդամ պետություններին ներդնել կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը զսպելու արդյունավետ քաղաքականություններ: Նախագիծը մշակողները համաձայնել են, որ սկզբունքորեն Կոնվենցիայի՝ քրեական իրավունքին առնչվող բոլոր դրույթները պետք է ներկայացվեն գենդերաչեզոք ձևով. բռնության ենթարկված կամ բռնություն գործադրած անձի սեռն այդպիսով չպետք է, ըստ էության, լինի հանցագործության բաղկացուցիչ տարր: Այնուամենայնիվ, դա չպետք է խոչընդոտի, որ Կողմերը ներդնեն տվյալ սեռին առնչվող դրույթներ: (*Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույց, 2011թ., պարբերություններ 152-3*)

2021 թվականին նոր Քրեական օրենսգրքի ընդունումը²⁸ և 2024 թվականին կատարված համապարփակ օրենսդրական փոփոխությունները²⁹ նպաստակ ունենին ապահովելու կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ ՀՀ քրեական օրենսդրության համապատասխանությունը միջազգային չափանիշներին: Այդ դրույթները ներառում էին հոգեբանական բռնությունն ու հետամտումը, ինչպես նաև ուժեղացվել էր պաշտպանությունն այնպիսի արարքներից, ինչպիսիք են անձեռնմխելիության խախտումը, ազատությունից ապօրինի զրկումը, շորթումը և սպառնալիքները՝ ներդնելով հարաբերությունների վրա հիմնված ծանրացնող հանգամանքներ և ճանաչելով խոցելիության ու կախվածության իրավիճակները: Առաջին անգամ օրենսգրքը տալիս է բռնության առավել ամբողջական պատկերացում՝ ընդգրկելով ընտանեկան բռնությանը բնորոշ վնասի կուտակային և ոչ ֆիզիկական ձևերը: Սրանք ընդհանուր առմամբ համապատասխանում են Կոնվենցիային և ուսումնասիրվում են ստորև նշված համապատասխան հոդվածների շրջանակներում:

Տարբեր տեղական և միջազգային ՔՀԿ-ների կողմից արված առաջարկություններից մեկն այն է, որ Հայաստանում սահմանվի ընտանեկան բռնության առանձին հանցակազմ՝ ապահովելու համար, որ այն քրեական արդարադատության համակարգի բոլոր դերակատարների և պաշտպանական, տեսակցությունների և խնամակալության ամբողջ համակարգի կողմից ընդունվի որպես լուրջ խնդիր: Թեև դա Ստամբուլի կոնվենցիայի կողմից պարտադիր պահանջ չէ, այնուամենայնիվ, այդ մոտեցումը կարող է նպաստել, օրինակ՝ հարկադրանքի և վերահսկողության դինամիկայի ճիշտ ընկալմանն ու հաշվառմանը, ինչպես նաև տարբեր մարմինների, մասնավորապես՝ քրեական գործերով որոշումների և խնամակալության ու տեսակցության վերաբերյալ վարույթների միջև համատեղ գործելակերպի ապահովմանը: Այս ընկալմանը հասնելու այլընտրանքային միջոց է քաղաքականությունների և ուղեցույցների մշակումը, ինչպես նաև դատարաններում բռնության մասին նշում և տվյալների փոխանակում իրականացնելու համապատասխան մեխանիզմների ներդրումը, որոնք հանցանքը կրիտարկեն որպես ընտանեկան բռնություն: Զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից հանցանքի կատարման ընդգրկումը՝ որպես հանցագործության մի շարք տեսակների ծանրացնող հանգամանք, կարող է նպաստել այս նպատակի իրագործմանը: Կարևոր է, որպեսզի կանանց նկատմամբ գործադրվող ընտանեկան բռնության բոլոր տեսակները պատշաճ կերպով քրեականացվեն և ենթակա լինեն քրեական հետապնդման՝ սահմանելով պատիժներ, որոնք համարժեք են հանցանքի ծանրությանը և ունեն գաղղ ազդեցություն: 2024 թվականին քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները, որոնց համաձայն մի շարք մարդու դեմ ուղղված հանցագործությունների ծանրացնող հանգամանք որպես նախատեսվել է զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից արարքը կատարելը, ինչպես նաև նոր մշակված տվյալների բազայի ներդրումը կարող են նպաստել ընտանեկան բռնության դեմ պայքարում պատշաճ լրջության և համապատասխան արձագանքման ապահովմանը:

Գործող Գենդերային ռազմավարությամբ և Միջոցառումների ծրագրով նախատեսված են բյուջետային հատկացումներ՝ այս հանցատեսակների վերաբերյալ իրավապահ մարմինների ծառայողների, դատախազների և դատական իշխանության մարմինների համար վերապատրաստումներ իրականացնելու նպատակով:

Հոգեբանական բռնությունը (Հոդված 33)

ՀՀ Քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածով սահմանվել է «հոգեկան ներգործություն» հասկացությունը, որով քրեականացվել են լուրջ հանցանքներ կատարելու սպառնալիքները, արժանապատվությունը նվաստացնելը և սոցիալական մեկուսացումը, երբ դրանք կատարվում են իրական վտանգի պայմաններում: 2024 թվականի ապրիլի փոփոխություններով էլ ավելի է ընդլայնվել 194-րդ հոդվածի շրջանակը՝ որպես ծանրացնող հանգամանք ներառելով *զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ* կողմից կատարված արարքները և ճանաչելով հանցանքի *գենդերային հիմքով շարժառիթը*՝ պաշտպանված հատկանիշների շարքում «սեռ» հասկացությունը հստակորեն ներառելու միջոցով: Այս փոփոխությունները հնարավորություն են տվել առավել արդյունավետորեն լուծել ընտանեկան միջավայրում հոգեբանական բռնության խնդիրը՝ համատեքստի մեջ դնելով բռնություն գործադրած և բռնության ենթարկված անձանց միջև հարաբերությունները և շարժառիթը:

Բացի դրանից, Քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածում փոփոխություններ են կատարվել՝ քրեականացնելու համար ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելն այն դեպքերում, երբ դրանք չեն հանգեցնում ֆիզիկական վնասվածքների, ինչպես նաև սահմանելու համար ավելի խիստ պատիժներ, եթե բռնության ենթարկված անձը զուգընկերը, նախկին զուգընկերը կամ հատկապես խոցելի անձ է: Այս դրույթները հնարավորություն են տալիս իրավական պատասխան տալ հուզական բռնության, ահաբեկման և հարկադիր վերահսկողության կրկնվող դրսևորումներին նույնիսկ ֆիզիկական բռնության բացակայության դեպքում:

28. Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքը, որն ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին և ուժի մեջ մտել 2022 թվականի հուլիսի 1-ից, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://foi.am/u_files/file/legislation/CRIMINAL%20CODE%20OF%20THE%20REPUBLIC%20OF%20ARMENIA.pdf [անգլերեն]:

29. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը, որն ընդունվել է 2024 թվականի ապրիլի 12-ին, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=9204&lang=arm> [հայերեն]:

Անհրաժեշտ է «հոգեկան ներգործություն» կամ «հոգեկան տառապանք» եզրույթների սահմանումների և հանցանք համարվելու շեմերի վերաբերյալ մշակել ուղեցույցներ և կազմակերպել վերապատրաստման դասընթացներ՝ դրանց հետևողական և արդյունավետ կիրառումն ապահովելու համար, ինչպես նաև անհրաժեշտ է կիրառել զոհակենտրոն մոտեցում ապացույցների հավաքագրման և մեկնաբանման գործընթացում:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Ուղեցույցը կարող է տրամադրվել ոստիկաններին, դատախազներին, փաստաբաններին և դատական իշխանության մարմիններին՝ ապահովելու համար, որ հոգեբանական վնասի, հարկադրանքի ու վերահսկողության դեպքերը պատշաճ կերպով նույնականացվեն, հետապնդվեն և պատժվեն:	Միջին

Հետամտումը (Հոդված 34)

Հետամտելը մեկ այլ անձի նկատմամբ դիտավորությամբ շարունակաբար սպառնալից վարքագիծ դրսևորելն է, որն այդ անձի մոտ վախ է առաջացնում սեփական անվտանգության համար: Թվային ոլորտում հետամտում են համարվում սպառնալիքները (սեռական, տնտեսական, ֆիզիկական կամ հոգեբանական բնույթի), հեղինակությանը վնաս պատճառելը, տուժողի մասին անձնական տեղեկատվության մշտադիտարկումը և հավաքագրումը, ինքնության գողությունը, սեռական գործողություններ կատարելուն դրդելը, տուժողին նմանակելը և հանցակիցների հետ հետապնդելը՝ տուժողին մեկուսացնելու համար (ԳՐԵՎԻՌ, 2021թ.):

2024 թվականի քրեական արդարադատության բարեփոխումների ամենանշանակալի զարգացումներից մեկը 196.1 հոդվածի ներառումն էր, որով սահմանվել է *հետամտել* քրեական հանցանքը: Սույն հոդվածով քրեականացվում է պարբերաբար դրսևորվող վարքագիծը, որը վախ, անհանգստություն կամ անվտանգության համար կենսակերպը փոխելու անհրաժեշտություն է առաջացնում: Այն հստակորեն ներառում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ տեխնոլոգիաների օգտագործմամբ իրականացվող հետամտումը և ճանաչում է բռնության ենթարկված անձանց հատուկ խոցելիությունը, երբ բռնություն գործադրած անձը ներկա կամ նախկին զուգընկեր է, մերձավոր ազգական կամ պաշտոնատար անձ:

Այնուամենայնիվ, գործնական կիրառումը միշտ առաջացնում է զգալի դժվարություններ և պահանջում է պրակտիկայի փոփոխություն: Իրավապահ մարմինների ծառայողները, դատախազներն ու դատավորները պետք է ունենան այն կոմունյատիվ արարքները նույնականացնելու և գնահատելու հմտությունները, որոնք միասին դիտարկելիս բռնության ենթարկվածի կյանքում ստեղծում են մշտական և սպառնալից ներկայություն: Այս նորմը գործողության մեջ դնելը կպահանջի ուղեցույցի մշակում: Հակառակ դեպքում հետամտումը հաճախ կարող է սխալ դասակարգվել՝ որպես ընդհանուր ոտնձգություն կամ ընդհանրապես անտեսվել, հատկապես, երբ բռնություն գործադրած անձը հայտնի է բռնության ենթարկված անձին: Սա ընդգծում է մասնագիտացված վերապատրաստումների, իրազեկվածության բարձրացման և ռիսկերի գնահատման գործելակարգերի մշակման անհրաժեշտությունը՝ հետամտումը որպես ինքնուրույն հանցագործություն և բռնության, այդ թվում՝ կնասպանության հնարավոր սրման նախազգուշացնող նշան դիտարկելու համար:

Բացի դրանից, նոր օրենքի արդյունավետությունը կախված է այն հանգամանքից, թե այն ինչպես կինտեգրվի Հայաստանի Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքով նախատեսված ավելի լայն պաշտպանության համակարգում: Հետամտման ենթարկված անձինք պետք է ժամանակին հասանելիություն ունենան պաշտպանական որոշումներին, անվտանգ կացարանին և սոցիալ-հոգեբանական աջակցությանը: Իրավապահ մարմինների, սոցիալական ծառայությունների և դատական իշխանության մարմինների միջև սերտ միջգերատեսչական համակարգումն անչափ կարևոր է արագ և գենդերազգայուն արձագանք ապահովելու համար: Հետևաբար, 196.1 հոդվածի հաջող իրականացումը, ի վերջո, կախված կլինի կառույցների կայուն հանձնառությունից, հանրային իրազեկվածությունից և դատական նախադեպերի համակարգի աստիճանական կայացումից, որը կարտացոլի հետամտման ենթարկված անձանց թե՛ առցանց, թե՛ դրանից դուրս ապրած փորձը:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Մշակել գործելակարգեր և ուղեցույցներ բոլոր համապատասխան դերակատարների համար՝ թե՛ առցանց և թե՛ դրանից դուրս հետամտման վերաբերյալ նոր օրենքը գործողության մեջ դնելու համար:	Միջին
Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ համապատասխան դերակատարների համար ռիսկերի գնահատման և օրենքի արդյունավետ կիրառման վերաբերյալ:	Միջին

Ֆիզիկական բռնությունը (Հոդված 35)

Ֆիզիկական բռնությունը մնում է ընտանեկան և կենցաղային հարաբերություններում բռնության ամենաակնառու ու ամենահաճախ հաղորդվող դրսևորումներից մեկը: Այն ներառում է այնպիսի գործողություններ, որոնք դիտավորությամբ պատճառում են մարմնական վնասվածք, ցավ կամ ֆիզիկական տառապանք՝ լինի դա ուղղակի ֆիզիկական ներգործության, հարկադիր զսպման, թե կրկնվող ծեծի միջոցով: Այն նաև ներառում է ֆիզիկական բռնությունը, որը հանգեցնում է մահվան:

Հայաստանի իրավական համատեքստում համապատասխան ֆիզիկական բռնության բոլոր այդ ձևերի համար քրեական պատասխանատվությունը սահմանվում է աստիճանաբար դասակարգված հանցանքների միջոցով, որոնք արտացոլում են պատճառված ֆիզիկական վնասվածքի ծանրությունը և, առավել հաճախ, այն հարաբերությունների համատեքստը, որում տեղի է ունենում բռնությունը:³⁰ Հիմնական դրույթներից բացի, Հայաստանի իրավունքով ճանաչվում են ֆիզիկական ագրեսիայի այլ ձևեր, որոնք կարող են չհանգեցնել տեսանելի վնասվածքի, սակայն պատճառել զգալի ցավ կամ տառապանք: 195-րդ հոդվածով քրեականացվում է *ֆիզիկական ներգործությունը*, ինչպես օրինակ՝ հարվածներ կամ ապտակներ հասցնելը, նույնիսկ այն դեպքում, երբ դրանք չեն հանգեցնում ախտորոշելի վնասվածքի: 196-րդ հոդվածը վերաբերում է *ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելուն*՝ լրացնելով կարևոր բաց այն դեպքերում, երբ նվաստացնող և հարկադիր բռնության դրսևորումները չեն հանգեցնում մարմնական վնասվածքի, սակայն արտահայտում են վերահսկողության և պատժի համակարգված վարքագիծ:

2024 թվականի փոփոխություններից ամենակարևոր փոփոխությունը եղել է ծանրացնող հանգամանքների շրջանակի ընդլայնումը՝ հատակ ընդգրկելով *զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ* կողմից կատարված արարքները: Նախկինում ընդգրկված էին միայն մերձավոր ազգականների կողմից կատարված արարքները՝ դուրս թողնելով ամուսնական կամ համատեղ բնակության մեջ չգտնվող սիրային կապով բնորոշվող հարաբերություններում բռնության ենթարկվածների պաշտպանությունը: Փոփոխություններով «սեռը» խտրական շարժառիթի դրույթների շրջանակներում նույնպես ներմուծվել է որպես խտրականության արգելքով պաշտպանված հիմք, ինչը հնարավորություն է տալիս որոշ ֆիզիկական բռնության արարքներ որակել որպես գենդերային հիմքով բռնարարքներ՝ այսպիսով ավելի լավ արտացոլելով ընտանեկան բռնության դեպքերում հաճախ առկա խոր շարժառիթներն ու վերահսկողության դինամիկան:

Պետք է ցուցաբերել զգուշավորություն՝ ապահովելու համար, որ *տուգանքները կամ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժները* չկիրառվեն լուրջ դեպքերում, քանի որ դա կարող է թուլացնել քրեական իրավունքի զսպող ազդեցությունը: Երբ տնտեսական կախվածության իրավիճակներում կիրառվում են դրամական պատժամիջոցներ, դրանք կարող են նաև անուղղակիորեն ծանրաբեռնել բռնության ենթարկված անձին:

Ընտանեկան բռնության դեպքերի դասակարգման և հետապնդման հարցում դատական պրակտիկայի հետևողականությունն ու հստակությունը համարվել են որպես առանձնահատուկ ուշադրություն պահանջող ոլորտ: **Փոփոխված իրավական դրույթների արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով անհրաժեշտ կլինի կազմակերպել շարունակական մասնագիտական վերապատրաստումներ իրավապահ մարմինների ու դատական իշխանության մարմինների համար և մշակել ընտանեկան բռնությանը բնորոշ գենդերային դինամիկայի և դրա կրկնվող բնույթի ըմբռնման վրա հիմնված մասնագիտացված ուղեցույցներ:**

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Մշակել ուղեցույցներ իրավապահ մարմինների և դատական իշխանության մարմինների համար՝ նոր հանցանքների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:	Միջին

Սեռական բռնությունը, ներառյալ՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները (Հոդված 36)

Ստամբուլի կոնվենցիայի համաձայն՝ պետք է քրեականացվեն դիտավորությամբ կատարվող հետևյալ արարքները՝

- ա) մեկ այլ անձի մարմին առանց այդ անձի համաձայնության վազինայ, անալ կամ օրալ ճանապարհով սեքսուալ բնույթի ներթափանցումը՝ մարմնի որևէ մասի կամ որևէ առարկայի միջոցով.
- բ) մեկ այլ անձի հետ առանց այդ անձի համաձայնության սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելը.
- գ) մեկ այլ անձի, առանց այդ անձի համաձայնության, երրորդ անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելուն հարկադրելը (Հոդված 36, կետ 1):

30. 166-րդ հոդվածով քրեականացվում է մարմնական վնասվածք պատճառելը, ինչպիսիք են կյանքի համար վտանգավոր վնասվածքները, օրգանի կամ գործառույթի կորուստը, անջնջելի այլանդակումը կամ առողջության քայքայումը: 167-րդ հոդվածը վերաբերում է միջին ծանրության մարմնական վնասվածքին, մինչդեռ 171-րդ հոդվածով պատժվում է թեթև մարմնական վնասվածքը, որն առաջացնում է առողջության կարճատև քայքայում կամ աշխատունակության աննշան կորուստ:

2021 թվականին ընդունված Հայաստանի քրեական օրենսգրքով արդեն իսկ ապահովված էր համեմատաբար մանրամասն իրավական հիմք՝ սեռական հանցագործությունների քննության համար: Քրեական օրենսգրքի կարևոր առանձնահատկություններից մեկն անցումն էր սեքսուալ բնույթի բռնի գործողությունների՝ *կամարտահայտության վրա հիմնված սահմանմանը*, ինչը համապատասխանում է զարգացող միջազգային չափանիշներին, որոնք չեն պահանջում ներկայացնել ֆիզիկական դիմադրության ապացույց: Սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմը քրեականացված է Քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածով, որը վերաբերում է անձի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով առանց համաձայնության վազինալ, անալ կամ օրալ ներթափանցումը՝ ուժի կիրառմամբ կամ դա կիրառելու ապառնալիքով կամ տուժած անձի խոցելիությունից օգտվելով: Այնուամենայնիվ, սա նշանակում է, որ եթե բռնության ենթարկված անձը չի համարվում խոցելի, և բռնություն կամ ապառնալիք առկա չէ, սակայն ներթափանցում տեղի է ունենում առանց այդ անձի համաձայնության, ապա դա պարտադիր չէ, որ համարվի սեքսուալ բնույթի բռնի գործողություն: Այս սահմանումն ամբողջությամբ չի համապատասխանում Ստամբուլի կոնվենցիայի պահանջներին, և անհրաժեշտ է դիտարկել օրենքում փոփոխություններ կատարելու հնարավորությունը:

Այլ համապատասխան դրույթներ սահմանված են 199-202-րդ հոդվածներում, որոնք վերաբերում են *սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու, խոցելի վիճակում գտնվող անձանց շահագործման և 16 տարին չլրացած անձի հետ սեքսուալ բնույթի գործողությունների հետ կապված մի շարք արարքներին*: Սույն հոդվածներով նախատեսվում են նաև *հանցագործությունների ծանրացնող հանգամանքներ*, երբ դրանք կատարվում են առանց համաձայնության վերաբերյալ ողջամիտ համոզմունքի կամ բռնության ենթարկված կոնկրետ կատեգորիաների անձանց նկատմամբ, ինչպիսիք են հղի կինը, անչափահասը կամ խոցելի վիճակում գտնվող անձը:

2024 թվականի փոփոխություններով կատարվել են մի շարք կարևորագույն լրամշակումներ, որոնք էապես խստացրել են սեռական բռնության նկատմամբ իրավական արձագանքը: Ամենակարևոր փոփոխություններից մեկը *զուգրնկերոջ կամ նախկին զուգրնկերոջ* կողմից կատարված լինելու հանգամանքի համակարգված ներառումն էր որպես ծանրացնող հանգամանք մի շարք սեռական հանցանքների, այդ թվում՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների դեպքում:

Փոփոխությունների արդյունքում ընդլայնվել են նաև սեռական բռնության համար նախատեսված ծանրացնող հանգամանքների շրջանակը՝ ներառելով *սեռի հիմքով շարժառիթը* և այն դեպքերը, երբ հանցագործությունը կատարվել է պաշտոնական դիրքի կամ լիազորությունների չարաշահմամբ կամ *նյութական կամ հոգեբանական կախվածության մեջ* գցելով:

Չնայած արձանագրված առաջընթացներին, իրավական չափանիշների կիրառման գործընթացը մնում է անհավասար: *Սեռական բռնության ոչ բոլոր դեպքերի վերաբերյալ հաղորդում ներկայացնելու* հետ կապված մտահոգությունները շարունակում են առկա լինել՝ պայմանավորված հասարակական խարանով, ընտանեկան միջավայրում սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հնարավորության ժխտմամբ, բռնության ենթարկված անձանց նկատմամբ զգայուն ընթացակարգերի բացակայությամբ և օրենսդրության իրականացման բացերով: **Անհրաժեշտ է նաև մշակել համապարփակ ուղեցույց և կազմակերպել մասնագիտացված վերապատրաստման դասընթացներ իրավապահ մարմինների ծառայողների, դատախազների և դատավորների համար՝ համաձայնության վրա հիմնված շրջանակի ճիշտ մեկնաբանումն ու գործնականում կիրառումն ապահովելու համար:** Դատավարական երաշխիքների ամրապնդումը, իրավաբանական օգնության հասանելիության ապահովումը և բռնություն վերապրածների համար հաղորդում ներկայացնելու համար աջակցող միջավայրի ստեղծումը մնում են կարևոր քայլեր՝ Հայաստանում սեռական բռնության դեմ իրավական պաշտպանության արդյունավետ իրականացումն ապահովելու համար:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Դիտարկել սեքսուալ բնույթի բռնի գործողությունների վերաբերյալ կարգավորումներում փոփոխություններ կատարելու հնարավորությունը՝ ապահովելու համար, որ առանց անձի համաձայնության սեռական ներթափանցման բոլոր ձևերը համարվեն քրեական հանցանքներ:	Միջին
Մշակել մասնագիտացված ուղեցույցներ, գործելակարգեր և վերապատրաստման դասընթացներ իրավապահ մարմինների, փաստաբանների (այդ թվում՝ հանրային պաշտպանների) և դատական իշխանության մարմինների համար՝ սեռական բռնության գործերի քննության, այդ թվում՝ վկաների նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ:	Միջին
Դիտարկել իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հարցը՝ խարանը նվազեցնելու և սեքսուալ բնույթի բռնի գործողության դեպքերի վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելու ցուցանիշները բարելավելու նպատակով:	Միջին
Մեծացնել սեռական ոտնձգության հարցերով մասնագիտացված կենտրոնների հասանելիությունը (տե՛ս վերևում)	Միջին

Հարկադիր ամուսնությունը (Հոդված 37)

Հարկադիր ամուսնությունն անձնական ինքնավարության և արժանապատվության լուրջ խախտում է, որը հաճախ տեղի է ունենում հարկադիր վերահսկողության և գենդերային հիմքով ենթակայության առավել լայն համատեքստում: Հայաստանի իրավական շրջանակում բռնության այս ձևը հատկորեն կարգավորվում է Քրեական օրենսգրքի 197-րդ հոդվածով: Հոդվածով սահմանվում է քրեական պատասխանատվություն *բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով, շանտաժի, արժանապատվությունը նվաստացնելու, գույքը ոչնչացնելու սպառնալիքով կամ նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով* անձին ամուսնությանը կամ ամուսնալուծությանը կամ երեխա ունենալուն հարկադրելու համար: Այն նաև ներառում է անձի ազատ կամքը ճնշելուն ուղղված այլ հարկադրանքի միջոցներ:

Այնուամենայնիվ, գործնականում կան խնդիրներ, որոնք մնում են չլուծված: «Հավասարությունն այժմ և այլ կազմակերպություններ» ՀԿ-ի (Equality Now et al., 2024թ.) տվյալների համաձայն՝ ներկայումս բացակայում են (ոչ միայն անչափահասների, այլև չափահասների) հարկադիր ամուսնությունները բացահայտելու տվյալներն ու ընթացակարգերը, ինչպես նաև վաղ ամուսնությունների կանխարգելման ծրագրերը: Հանցանքի համար քրեական հետապնդում հազվադեպ է հարուցվում, և թե՛ մասնագետների, թե՛ հանրության շրջանում *իրազեկվածության ցածր մակարդակը* կարող է թույլ չտալ տուժողներին ճանաչել այդ հարկադրանքը և դրա վերաբերյալ հաղորդում ներկայացնել: Բացի դրանից, համեմատաբար *մեղմ պատիժների սահմանման շրջանակը*, որը ներառում է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժները, մտահոգություններ է առաջացնում այն մասին, թե արդյոք արձագանքը համաչափ է հարկադիր ամուսնության ծանրությանն ու երկարաժամկետ հետևանքներին:

Այս նորմի արդյունավետ կիրառումն ապահովելու համար խիստ անհրաժեշտ է կազմակերպել *թիրախային վերապատրաստման դասընթացներ* իրավապահ մարմինների ծառայողների, սոցիալական աշխատողների և երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող ծառայությունների համար, ինչպես նաև իրականացնել հասարակության լայն շերտերի համար *իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ*: Անհրաժեշտ է ամրապնդել նաև վաղ հայտնաբերման մեխանիզմները, ռիսկերի գնահատման ընթացակարգերը և զոհակենտրոն պաշտպանության միջոցները՝ հարկադիր ամուսնությունները կանխելու և դրանց այնպես արձագանքելու համար, որ պաշտպանվեն տուժածների արժանապատվությունն ու իրավունքները:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Ձեռնարկել իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ ընդհանուր բնակչության շրջանում, մասնավորապես՝ գյուղական համայնքներում և իրականացնել վերապատրաստումներ համապատասխան անձնակազմի համար:	Ցածր

Կանանց սեռական օրգանների խեղումը (Հոդված 38)

Կանանց սեռական օրգանների խեղումը իրենույթով պայմանավորված հանդիսանում է սույն Կոնվենցիայի քրեական իրավունքի մաս կազմող՝ գենդերային չեզոքության սկզբունքին հակասող հանցատեսակներից մեկը: Այն սահմանում է կանանց սեռական օրգանների խեղման քրեական պատասխանատվությունը, որի պարագայում թիրախ հանդիսանում են կանայք և աղջիկները: (*Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույց, 2011թ.*)

Թեև ՀՀ քրեական օրենսգրքի որոշ դրույթներ տեսականորեն կարող են կիրառվել կանանց սեռական օրգանների խեղման նկատմամբ, մասնավորապես՝ 166-րդ հոդվածը՝ *առողջությանը ծանր վնաս պատճառելը* կամ 197-րդ հոդվածը՝ *ամուսնությունը, ամուսնալուծությանը կամ երեխա հարկադրելն* առավել լայն մեկնաբանելու դեպքում, այնուամենայնիվ, նման արարքն արգելող հատուկ դրույթի բացակայությունը նշանակում է, որ օրենքը չի արտացոլում այս պրակտիկայի *կոնկրետ բնույթը, շարժառիթներն ու հետևանքները*: Այն նաև անորոշություն է ստեղծում պաշտպանության շրջանակի և իրավական զսպման միջոցների համարժեքության առնչությամբ, հատկապես այն իրավիճակներում, երբ այդ արարքները կարող են իրականացվել մշակութային կամ ընտանեկան սովորույթների քողի տակ:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Փոփոխություններ կատարել օրենսդրության մեջ՝ կանանց սեռական օրգանների խեղումն արգելող հատուկ դրույթ ներառելու համար:	Միջին
Բարձրացնել այս խնդրի վերաբերյալ իրազեկվածության մակարդակն ընդհանուր բնակչության շրջանում:	Միջին

Հղիության հարկադիր արհեստական ընդհատումը կամ հարկադիր ամլացումը (Հոդված 39)

Հղիության հարկադիր արհեստական ընդհատումը և հարկադիր ամլացումն անձի մարմնական ինքնավարության և վերարտադրողական իրավունքների կոպիտ խախտումներ են: Դրանք ներառում են հղիության ընդհատում կամ ամլացման պրոցեդուրայի կատարում՝ առանց բռնության ենթարկված անձի նախնական և իրազեկված համաձայնության, հաճախ հարկադրանքի, խաբեության կամ ճնշման ներքո:

ՀՀ քրեական օրենսգրքով այս երկու գործելակերպերը հստակորեն քրեականացվում են՝ որպես ինքնուրույն հանցակազմեր: Սույն դրույթի համաձայն՝ կնոջն իր հղիությունն արհեստական եղանակով ընդհատելուն (աբորտ կատարելուն) կամ անձին ամլացմանը հարկադրելը՝ բռնություն գործադրելով, դա գործադրելու սպառնալիքով, խաբեությամբ կամ իշխանության չարաշահմամբ կամ անձի անօգնական վիճակն օգտագործելով, համարվում է քրեորեն պատժելի արարք: Պատիժն ավելի մեծ է, եթե հանցանքը կատարվել է զուգրնկերոջ կամ ընտանիքի անդամի կողմից: Գենդերային ռազմավարությամբ վերհանվել է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդիրը և առաջարկվում է դրա կանխարգելման նպատակով իրականացնել իրազեկվածության բարձրացման և վերապատրաստման միջոցառումներ: [Էջ 27]

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Իրականացնել Գենդերային ռազմավարության սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների վերաբերյալ դրույթները:	Միջին

Սեռական ոտնձգությունը (Հոդված 40)

Սեռական ոտնձգությունը ներառում է սեքսուալ բնույթի ցանկացած անցանկալի խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական դրսևորում, որը ոտնահարում է անձի արժանապատվությունը, մասնավորապես, երբ այն ստեղծում է ճնշող, թշնամական, ստորացուցիչ, նվաստացուցիչ կամ վիրավորական մթնոլորտ: ԳՐԵՎԻՈ-ի թիվ 1 ընդհանուր առաջարկությամբ առցանց կամ թվային միջոցներով իրականացվող հետևյալ վարքագծի տեսակները դիտարկվում են այս սահմանման շրջանակում՝ 1) պատկերների կամ տեսանյութերի՝ առանց համաձայնության տարածումը, 2) ինտիմ պատկերների կամ տեսանյութերի՝ առանց համաձայնության նկարահանումը, արտադրությունը կամ գնումը, 3) շահագործումը, հարկադրանքն ու սպառնալիքները, 4) սեռականացված բուլինգը և 5) կիբեռֆլեշինգը:

Ստամբուլի կոնվենցիայի համաձայն՝ սեռական ոտնձգության հանցակազմի վրա կարող է տարածվել կա՛մ քրեական իրավունքը կա՛մ այլ իրավական պատժամիջոց: Հայաստանի քրեական իրավունքով սեռական ոտնձգությունը որպես առանձին հանցակազմ քրեականացված չէ: Ո՛չ 2021 թվականի Քրեական օրենսգրքով, ո՛չ էլ 2024 թվականի փոփոխություններով նախատեսված չէ դրույթ, որն ուղղակիորեն հասցեագրում է այդ վարքագիծը: Թեև սեռական ոտնձգության որոշ դրսևորումների համար քրեական հետապնդում չի հարուցվում այնպիսի ընդհանուր դրույթներով, ինչպիսիք են հարկադրանքի, սպառնալիքների կամ իշխանության չարաշահման հետ կապված դրույթները, այնուամենայնիվ, դրանցով քրեական հետապնդում չի հարուցվում այն առավել նուրբ, շարունակական և հաճախ ոչ ֆիզիկական ձևերի համար, որոնք տարածված են սոցիալական, մասնագիտական և կրթական միջավայրերում: Անցանկալի սեռական բնույթի մեկնաբանությունները, ակնարկները կամ ժեստերը, որոնք չեն հասնում հարձակման մակարդակի, դուրս են մնում գործող քրեական շրջանակի գործողության ոլորտից:

Սեռական ոտնձգությունը «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի 3-րդ հոդվածի 21-րդ կետում, 6-րդ հոդվածի հետ համակցությամբ (որն արգելում է գենդերային խտրականությունը), սահմանվում է որպես գենդերային խտրականության դրսևորումների տեսակ: Թեև խտրականությունը քրեականացված է Քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածով, սակայն գործնականում տվյալ հանցակազմի հատկանիշներով գործեր չեն հարուցվում, և դրա համար քաղաքացիական կամ քրեական իրավունքով որևէ պատժամիջոց նախատեսված չէ:

Հայաստանը դեռևս պետք է ընդունի խտրականության դեմ պայքարի մասին համապարփակ օրենք, որն ամենայն հավանականությամբ կներառի սեռական ոտնձգության նկատմամբ արգելքը՝ որպես խտրականության ձև: Այս օրենսդրական բացը հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով աշխատավայրերում, դպրոցներում և հասարակական վայրերում սեռական ոտնձգությունների փաստագրված տարածվածությունը: Թեև աշխատանքային կամ խտրականության դեմ պայքարի մասին օրենքի (երբ այն ընդունվի) շրջանակներում պաշտպանության որոշ միջոցներ կարող են հասանելի լինել վարչական մեխանիզմների միջոցով, այնուամենայնիվ, դրանք չեն ապահովում այնպիսի զսպման կամ փոխհատուցման մեխանիզմներ, ինչպիսիք կապահովել քրեականացումը:

Ինչ վերաբերում է սեռական ոսնձգության թվային հարթությանը՝ Հայաստանում դեռևս չկան հատուկ օրենքներ: Հարկ է հիշեցնել, որ առցանց հետամուտումը քրեականացված է՝ թեև պոռնոգրաֆիայի արտադրությունն ու տարածումն արգելված է, այնուամենայնիվ կարգավորումներում դեռևս փոփոխություններ չեն կատարվել՝ կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունն ամբողջությամբ հաշվի առնելու տեսանկյունից: Անձնական տվյալների պաշտպանությունը հնարավոր է ապահովել անձնական տվյալների պաշտպանության մասին օրենքներով կամ էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքներով, սակայն քիչ հավանական է, որ դրանցով կկարգավորվի ոսնձգությունների և բռնությունների այն ամբողջ շրջանակը, որին բախվում են կանայք թվային միջավայրում:

Առաջընթաց արձանագրվել է, սակայն որոշ ոլորտներում դեռևս կան չլուծված խնդիրներ	
Միջոցառում	Գերակայություն
Վերանայել իրավունքը՝ սեռական ոսնձգության հանցակազմի ընդգրկումն ապահովելու համար: Հանցակազմը կարող է սահմանվել քրեական կամ քաղաքացիական իրավունքում, սակայն անհրաժեշտ է, որ այն ներառի սեռական ոսնձգության բոլոր ձևերը, այդ թվում՝ ոսնձգություններն աշխատավայրում, դպրոցում և փողոցում:	Բարձր
Վերանայել օրենսդրությունը ոսնձգության թվային հարթության առումով՝ ապահովելու համար, որ հետևյալ հարցերը լիարժեքորեն հասցեագրվեն՝ 1) պատկերների կամ տեսանյութերի՝ առանց համաձայնության տարածում, 2) ինտիմ պատկերների կամ տեսանյութերի՝ առանց համաձայնության նկարահանում, արտադրություն կամ գնում, 3) շահագործում, հարկադրանք ու սպառնալիքներ, 4) սեռականացված բուլինգ և 5) կիբեռֆլեշինգ:	Բարձր

Պատժամիջոցները և միջոցառումները (Հոդված 45)

Կոնվենցիային համապատասխան սահմանված իրավախախտումների համար պետք է նախատեսվեն արդյունավետ, համաչափ և տարահամողիչ պատժամիջոցներ՝ հաշվի առնելով դրանց ծանրությունը: Պատժամիջոցներ կարող են սահմանվել մշտադիտարկման և վերահսկողության, ինչպես նաև ծնողական իրավունքներից զրկման ձևով, եթե երեխայի լավագույն շահերը չեն կարող որևէ այլ կերպ երաշխավորվել:

2024 թվականի փոփոխություններից հետո Քրեական օրենսգրքով հստակորեն սահմանվում է բռնություն գործադրած անձի և հանցագործությունից տուժած անձի, ինչպես օրինակ՝ ներկա կամ նախկին զուգընկերների միջև հարաբերությունները՝ որպես հանցանքի ծանրացնող հանգամանք: Եշանակված պատիժները տարբերվում են՝ կախված հանցանքի ծանրությունից, սկսած տուգանքներից և ազատազրկման այլընտրանքային տարբերակներից մինչև ազատազրկման տարբեր ժամկետներ: Ֆիզիկական և սեռական բռնության, մարդկանց թրաֆիքինգի կամ հոգեբանական վնաս պատճառելու հետ կապված հանցագործությունները կարող են հանգեցնել ազատությունից զրկելու հետ կապված երկարատև պատիժների, հատկապես, երբ առկա են այնպիսի ծանրացնող հանգամանքներ, ինչպիսիք են նախկինում գործադրված բռնությունը, հարկադրանքը կամ խտրական շարժառիթները:

Չնայած օրենսդրական բարելավումներին, շատ հանցանքների համար դեռևս նախատեսվում են ազատությունից զրկելու հետ չկապված միջոցներ, ինչպիսիք են տուգանքները, նույնիսկ բռնության կրկնման կամ ինտիմ զուգընկերոջ նկատմամբ գործադրվող բռնության դեպքերում: Ինչպես նշված կոնկրետ քրեական հանցանքների առնչությամբ արդեն նշվել է վերևում, սա խնդրահարույց է այն դեպքերում, երբ բռնություն գործադրած և հանցագործությունից տուժած անձինք ունեն համատեղ ֆինանսական միջոցներ կամ համատեղ բնակվում են՝ ծանրաբեռնելով հանցագործությունից տուժած անձին և խաթարելով պատժի պաշտպանական նպատակը: Ավելին, դրամական պատժամիջոցները հաճախ համաչափ չեն հարկադիր վերահսկողության կամ երկարատև բռնության վնասին ու ծանրությանը:

Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանի կողմից վերահանված խնդիրներից մեկը հանցագործության վերադրակավորումն էր, ինչի արդյունքում բռնություն գործադրած անձի նկատմամբ նշանակվել էր բավականին կարճ ժամկետով ազատազրկում՝ նրան *ի սկզբանե* իրավունք տալով ազատվել պատժի կրումից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 199-րդ պարբերությամբ վճռել է, որ չի կարելի ասել, որ հանցագործության վերադրակավորումը և դրա արդյունքում ավելի մեղմ պատժի նշանակումը տեղի են ունեցել գործի բոլոր համապատասխան նկատառումները մանրամասն ուսումնասիրելուց հետո: [199] Ավելին, համաներումը կամ ներումը հակասում են վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարելու պետությունների պարտականություններին: [201] Կարևոր է նշել, որ Դատարանը վճռել է հետևյալը՝

«Դատարանի կարծիքով՝ ներպետական դատարանների այդ մոտեցումը կարող է ցուցաբերել որոշակի մեղմություն կանանց նկատմամբ կիրառվող բռնության համար նախատեսված պատժի հարցում, փոխարենը հասարակությանն ազդակ ուղարկելու, որ կանանց նկատմամբ կիրառվող բռնությունը չի հանդուրժվելու... Սյոպիսի մեղմությունը, իր հերթին, կարող է հետագայում խանգարել ընտանեկան բռնության ենթարկված անձանց հաղորդում ներկայացնել այդպիսի արարքների մասին, ինչն արդեն իսկ լուրջ մտահոգություն է առաջացնում Հայաստանում... »: [203]

Իրականացման գործընթացում, կարծես, կան մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ կապված քրեական հետապնդումից հրաժարվելու, կամ դրանք որպես թեթև հանցանքներ վերադասակարգելու հետ: Այս խնդիրներին մանրամասն անդրադարձ է կատարվում ստորև՝ քննությանը և քրեական հետապնդմանը վերաբերող գլխում:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Ոստանասիրել դատական իշխանության կողմից պատիժների կիրառման պրակտիկան՝ պարզելու համար, թե արդյոք ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության համար նախատեսված են համարժեք պատիժներ:	Միջին

Ծանրացնող հանգամանքները (Հոդված 46)

2024 թվականի փոփոխություններով Քրեական օրենսգրքի 69-րդ և 71-րդ հոդվածներով նախատեսվում են Կոնվենցիայի 46-րդ հոդվածով պահանջվող ծանրացնող հանգամանքները: 2024 թվականի փոփոխություններով հստակ սահմանվել է այն գեղեցիկային և միջանձնային դինամիկան, որը հաճախ հանդիսանում է մասնավոր կամ ընտանեկան միջավայրում գործադրվող բռնության հիմքը: Եթե այդ միջոցները կիրառվեն հետևողականորեն և արդյունավետորեն, ապա դրանք կարող են նպաստել վերը նշված՝ ընտանեկան բռնության նշանակության նվազեցման նախկին միտումների վերացմանը: Այնուամենայնիվ, դրանց **արդյունավետ կիրառումը պահանջում է իրավական ոլորտի մասնագետների կարողությունների զարգացում, դատարանների կողմից հետևողական մեկնաբանություն և տվյալների հավաքագրման այնպիսի համակարգերի առկայություն, որոնք կկարողանան արտացոլել այս հանգամանքների գործնական կիրառումը:**

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Զարգացնել իրավական ոլորտի և դատական իշխանության մարմինների կարողությունները՝ դատապարտման որոշումներում ծանրացնող հանգամանքների կիրառումն ապահովելու համար:	Միջին
Մշտադիտարկել դատապարտման որոշումներում ծանրացնող հանգամանքների կիրառման գործընթացը՝ ապահովելու համար դրանց պատշաճ կիրառումը:	Ցածր

Վեճերի պարտադիր այլընտրանքային լուծման ընթացակարգերի կամ պարտադիր այլընտրանքային պատիժների արգելումը (Հոդված 48)

Հայաստանի քրեական իրավունքը չի սահմանում վեճերի պարտադիր այլընտրանքային լուծման մեխանիզմներ, օրինակ՝ հաշտարարություն, բռնարարք պարունակող, այդ թվում՝ ընտանեկան կամ գեղեցիկային հիմքով բռնության գործերում: Քրեական դատավարության օրենսգրքը սահմանում է դատախազական հայեցողության և դատական վերահսկողության կիրառում համապատասխան ընթացակարգի որոշման հարցում, սակայն չի թույլատրում կամ պահանջում, որ բռնության ենթարկված անձն ու ենթադրյալ բռնություն գործադրած անձը կնքեն հաշտության համաձայնություն՝ որպես քրեական հետապնդման կամ դատավճռի կայացման նախապայման: Այս իրավական դիրքորոշումն արտացոլում է վերականգնողական կամ այլընտրանքային արդարադատության մոդելների կիրառման հետ կապված ռիսկերի գիտակցումն այն դեպքերում, երբ կարող են առկա լինել ուժի և վերահսկողության անհավասարակշռություն, հարկադրանք կամ կրկնագրհանցումը:

Ավելին, ընտանեկան բռնության համատեքստում «Հաշտարարության մասին» օրենքը տրամադրում է կարևորագույն երաշխիք: Մասնավորապես, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով և 6-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով սահմանվում են, որ հաշտարարության կողմի՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված լինելու վերաբերյալ ողջամիտ կասկած հարուցող նշանների առկայության դեպքում հաշտարարը պարտավոր է ենթադրաբար բռնության ենթարկված կողմին տեղեկացնել Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքով նախատեսված իրավունքների պաշտպանության եղանակների մասին: Սա արտացոլում է այն կարևոր գիտակցումը, որ ընտանեկան բռնության գործերով հաշտեցումը կարող է անվտանգ կամ նպատակահարմար չլինել՝ պայմանավորված ուժի և վերահսկողության անհավասարակշռությամբ, կրկնագրհանցման ռիսկով և բռնության ենթարկվածի անվտանգությունը գերակա խնդիր դարձնելու անհրաժեշտությամբ: Այս դրույթները նախատեսված են ապահովելու, որ հաշտարարները զգոն լինեն բռնության նշանների նկատմամբ և քայլեր ձեռնարկեն՝ բռնության ենթարկվածներին ուղղորդելու ոչ թե դեպի հաշտեցման փորձերի, այլ իրավունքների վրա հիմնված միջոցների:

Վերջին օրենսդրական փոփոխություններով Հայաստանի ընտանեկան օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն ներմուծվել է ընտանեկան վեճերով հաշտարարության պարտադիր պահանջ, որն այժմ սահմանում է, որ «Հաշտարարության մասին» օրենքով նախատեսված ընտանեկան վեճերով մինչև դատարան դիմելը հաշտարարության իրականացումը պարտադիր է: Լրացուցիչ դատավարական ընթացակարգերի մասին մանրամասն ներկայացված են «Հաշտարարության մասին» օրենքի 11.1 հոդվածում, որը սահմանում է պարտադիր հաշտարարության իրականացման եղանակները: Թեև հաշտարարությանը մասնակցությունը, այդ թվում՝ հաշտարարի կողմից ներկայացվող հիմնական տեղեկատվությունը լսելը պարտադիր է, այնուամենայնիվ, գործընթացն ինքնին չի պարտադրում հաշտության համաձայնության կնքում, և կողմերը կարող են հետագայում դիմել դատարան: Այս դրույթները նախատեսվում է կիրարկել 2025 թվականի հուլիսի 1-ից, երբ ստեղծվի հաշտարարների պաշտոնական ռեսուրս: Սակայն, միևնույն ժամանակ, վերջերս ընդունվել են «Հաշտարարության մասին» օրենքի փոփոխությունները, որոնք ուժի մեջ կմտնեն 2025 թվականի հուլիսի 1-ից: Այս փոփոխությունների համաձայն՝ մեծ թվով ընտանեկան վեճերով, այդ թվում՝ ամուսնալուծության, երեխայի խնամակալության, երեխային աջակցության, ամուսինների ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանման և ծնողական իրավունքների իրականացման վերաբերյալ վեճերով նախքան դատարան դիմելը հաշտարարության իրականացումը պարտադիր է: Հետևաբար, Օրենքի 2.1-րդ հոդվածով այժմ հստակորեն սահմանվում են պարտադիր հաշտարարության պահանջի բացառությունները: Կողմերը կարող են չդիմել պարտադիր հաշտարարության այն դեպքում, երբ՝

- i) կողմերից որևէ մեկի նկատմամբ կայացվել է «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից որևէ մեկի կիրառման մասին որոշում.
- ii) կողմերից մեկը քրեական պատասխանատվության է ենթարկվել մյուս կողմի կամ նրա զավակի, ծնողի, պապի կամ տատի, եղբոր կամ քրոջ նկատմամբ դիտավորությամբ հանցագործություն կատարելու համար.
- iii) կողմերից մեկն օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ, գտնվում է կալանքի տակ կամ կրում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ:

Այս փոփոխությունների նպատակն է ամրապնդել հաշտարարության շրջանակը և նվազեցնել դատարանների ծանրաբեռնվածությունը՝ միևնույն ժամանակ ընդունելով, որ հաշտարարությունը կարող է լինել անտեղի ընտանեկան բռնության կամ այլ լուրջ խոցելի իրավիճակներ ընդգրկող գործերում:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Մշտադիտարկել պատժի նշանակման գործընթացում տուգանքների կիրառումը՝ ապահովելու համար, որ դրանք համաչափ լինեն հանցանքի ծանրությանը և բեռ չդառնան բռնության ենթարկված անձի համար:	Ցածր
Ապահովել, որ բոլոր համապատասխան դատավորներն ու իրավական ոլորտի մասնագետները տեղեկացված լինեն այն իրավական փոփոխությունների մասին, որտեղ ընտանեկան գործերով պարտադիր հաշտարարություն կարող է չիրականացվել:	Միջին

Գլուխ 6

Քննությունը, հետապնդումը, դատավարական օրենսդրությունը և պաշտպանության միջոցները

Ընդհանուր պարտավորությունները, անհապաղ արձագանքումը, կանխարգելումը և պաշտպանությունը (Հոդված 49 և 50)

Ընտանեկան բռնության դեմ արդյունավետ արձագանքը պահանջում է ոչ միայն քաղաքական կամք և կանխարգելիչ միջոցառումների իրականացում, այլև բռնության դեպքերի քննության, հետապնդման և զոհակենտրոն դատավարական երաշխիքների ամուր համակարգ: Վերջին տարիներին Հայաստանը զգալի քայլեր է ձեռնարկել այդ բռնության նկատմամբ իր ինստիտուցիոնալ և իրավական արձագանքն ուժեղացնելու ուղղությամբ, ինչպես նաև բարելավել է ոստիկանության ընթացակարգերը, ռիսկերի գնահատման մեխանիզմներն ու պաշտպանության միջամտությունները:

Իրավապահ մարմինն հաղորդումն ներկայացնելը և վերջիններիս կողմից անհապաղ արձագանքն ու քննությունը

Հայաստանի ընտանեկան բռնության կանխարգելման շրջանակի համաձայն՝ իրավապահ մարմինների ծառայողներն ունեն իրավական և ինստիտուցիոնալ պարտավորություն՝ հաշվառելու և արձագանքելու ընտանեկան բռնության բոլոր հաղորդումներին, անկախ այն հանգամանքից, թե հաղորդումը ստացվել է բռնության ենթարկված անձից, թե երրորդ անձից: Այս մոտեցումը հիմնված է այն սկզբունքի վրա, որ միջամտության և պաշտպանության պատասխանատվությունը չպետք է կախված լինի միայն բռնության ենթարկված անձի նախաձեռնությունից:

Ոստիկանության ծառայողներին հանձնարարված է այդ դեպքերի մասին հաղորդում ստանալուց հետո գործել անհապաղ: Դեպքերի հաշվառումը պարտադիր է և ֆորմալացված է (2019 թվականի) թիվ 22-Լ հրամանով սահմանված ստանդարտացված ընթացակարգերով, մինչդեռ Կառավարության (2019 թվականի) թիվ 1381-Ն որոշմամբ ինստիտուցիոնալացված է դեպքերի վերաբերյալ տվյալները կենտրոնացված էլեկտրոնային գրանցամատյան մուտքագրելու պահանջը: Այս մոտեցումն ապահովում է դերակատարների միջև հետևողականություն, հաշվետվողականություն և համակարգում՝ միևնույն ժամանակ թույլ տալով իրավապահ մարմիններին հետևել օրինաչափություններին և մշտադիտարկել համապատասխանությունը:

Դեպքի հաշվառումից հետո իրավապահ մարմինների ծառայողները պետք է գնահատեն իրավիճակը տեղում՝ կիրառելով կառուցվածքային հարցազրույցներ բռնության ենթարկված անձի, ենթադրյալ բռնություն գործադրող անձի (եթե վերջինս դեպքի վայրում է) ու դեպքի վայրում ներկա այլ անձանց հետ և ստուգեն բռնություն գործադրող անձի տիրապետության տակ գենի առկայությունը: Թեև ստանդարտացված ընթացակարգերով հստակ չեն նշվում, որ դրանք կլինեն համատեղ հարցազրույցներ, այնուամենայնիվ, դրանց մասին հստակ նշվում է «Ոստիկանության արձագանքն ընտանեկան բռնությանը՝ ձեռնարկ ոստիկանության ծառայողների համար» գրգույկում (Եվրոպայի խորհուրդ, 2024թ): Այս ընթացակարգերը նախատեսված են «Ընտանեկան և կենցաղային բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ ոստիկանության պետի 2024 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 88-Լ հրամանով ընդունված կառուցվածքային ռիսկերի գնահատման գործիքով: Այնուհետև ծառայողը որոշում է (ցածր ռիսկի, բռնության առաջին անգամ գործադրվելու դեպքերում) կայացնել նախագգուշացման, թե անհետաձգելի միջամտության որոշում (անմիջականորեն սպառնացող վտանգի առկայության դեպքում): Հարցաթերթիկի պատասխանների համաձայն՝ այս վաղ միջամտությունների արդյունավետությունն ապացուցվում է բռնության կրկնվող դեպքերի ցածր ցուցանիշով:

Ինչպես հաստատվում է ոստիկանության կողմից հարցաթերթիկին տրված պատասխանից, դեպքի փաստաթղթավորումից և գնահատումից հետո ոստիկանությունը բոլոր համապատասխան նյութերը, այդ թվում՝ հայտարարությունները, միջամտության որոշումները և ուղեկցող փաստաթղթերն ուղարկում է Քննչական կոմիտե՝ քրեական գործ հարուցելու վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով: Այս ընթացակարգն ապահովում է, որ իրավապահ մարմինները հանդես գան ոչ միայն որպես առաջին արձագանքող, այլև որպես ավելի լայն պաշտպանական և դատական գործընթացների խթանող կողմ: Այս ինստիտուցիոնալ միջոցառումներն արտացոլում են ոստիկանության

անհապաղ արձագանքման համապարփակ ու գործառնական մոտեցումը, որը ներառում է հաղորդումների ներկայացումը, ռիսկերի վրա հիմնված որոշումների կայացումը, բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը և քննչական ու օժանդակ հաստատությունների հետ համակարգումը: Ոստիկանության ծառայողները վերապատրաստումներ են անցել կարողությունների զարգացման նպատակով և, ինչպես հաղորդվում է, վերջին տարիներին զգալիորեն բարելավվել է ընտանեկան բռնության դեպքերի արձագանքման արդյունավետությունը: Վերջերս կազմալուծվել են ընտանեկան բռնության դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանումները: Ոստիկանությունը լիահույս է, որ սա կհանգեցնի ընդհանուր ոստիկանության ծառայությունների շրջանում արհեստավարժության բարձրացմանը: Այս գործընթացը պետք է մշտադիտարկվի՝ հավաստիանալու համար, որ դա գործնականում տեղի է ունենում և չի հանգեցնում արհեստավարժության և գենդերային հիմքով բռնության ու ընտանեկան բռնության ենթարկված անձանց նկատմամբ արձագանքի նվազմանը:

Բացի դրանից, իրականացվող ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունքում ոստիկանության տարածքային ստորաբաժանումները համալրվել են նոր անձնակազմով, որոնց համար կազմակերպվել են թիրախային վերապատրաստման դասընթացներ՝ մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները զարգացնելու նպատակով: Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության մասնագիտական մեթոդական աջակցման վարչությունը վերակազմակերպվել է և ներկայումս տարածքային ստորաբաժանումների նկատմամբ իրականացնում է ամենօրյա հսկողություն և ցուցաբերում է մեթոդական աջակցություն՝ նպատակ ունենալով ամրապնդել նրանց մասնագիտական կարողությունները և բարձրացնել նրանց աշխատանքի որակը: Միևնույն ժամանակ, վերակազմակերպման գործընթացը հանգեցրել է նոր աշխատողների ներհոսքի, ինչը վկայում է շարունակաբար համակարգված ու մասնագիտացված վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու անհրաժեշտության մասին՝ ապահովելու համար, որ բոլոր ծառայողներն ունենան ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերը լավագույն փորձին համապատասխան վարելու համար բավարար գիտելիքներ: Ոստիկանությունում նկատվում է նաև կին ծառայողների թվի աճ:

Կանանց նկատմամբ և ընտանեկան բռնության վերաբերյալ առկա թյուր պատկերացումներն ու կարծրատիպերն ընտանեկան բռնության դեմ պայքարի և կանխարգելման հարցում մեծագույն մարտահրավերներից են: (2023 թվականի տարեկան հաղորդումը Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին, 2024թ., էջ 521)

Ինչպես բոլոր ոլորտներում, այստեղ նույնպես շարունակում են մնալ խնդիրներ, որոնք պայմանավորված են ընտանեկան բռնության, կանանց նկատմամբ բռնության, բռնության ենթարկված անձի վարքագծի և նրա նկատմամբ պարսավանքի վերաբերյալ առկա ընկալումներով և սխալ պատկերացումներով: Այս խնդիրները լավագույնս լուծվում են շարունակական վերապատրաստումների և դրանց արդյունավետության ֆորմալ մշտադիտարկման միջոցով: Ավելի, անհրաժեշտ է մշտադիտարկել մասնագիտացված ստորաբաժանումների կազմալուծման հետևանքները՝ ընդհանուր ներուժի ավելացման նպատակով:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Շարունակել իրականացնել վերապատրաստման ծրագրեր, որոնց նպատակն է բարձրացնել ոստիկանության իրազեկվածությունը և մասնագիտական կարողությունները:	Միջին
Ապահովել ոստիկանությունում կին ծառայողների պատշաճ ներկայացվածությունը:	Միջին

Արդյունավետ քննությունը և հետապնդումը

Ընտանեկան բռնության դեպքի հաշվառումից հետո համապատասխան նյութերը, այդ թվում՝ դեպքի վերաբերյալ արձանագրությունը, ռիսկերի գնահատումը և ցանկացած կիրառված պաշտպանական միջոց ուղարկվում են Քննչական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներ՝ քրեական գործ հարուցելու վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:³¹ Այս ընթացակարգային փոխանցումն անչափ կարևոր է ապահովելու համար, որ ոստիկանության արձագանքը չսահմանափակվի վարչական միջոցներով, այլ անհրաժեշտության դեպքում ապահովվի քրեական հետապնդում:

Ոստիկանության և Քննչական կոմիտեի միջև համագործակցությունն աստիճանաբար ֆորմալացվել ու ամրապնդվել է: Վերջին տարիներին և Եվրոպայի խորհրդի աջակցությամբ, ոստիկանության ծառայողների և քննիչների համար կազմակերպվել են համատեղ վերապատրաստումներ՝ ուղղված միջգերատեսչական համակարգման ամրապնդմանը և ընտանեկան բռնության գործերի՝ բռնության ենթարկված անձանց շահերի հաշվի առմամբ քննության գործընթացի բարելավմանը: Այս կարողությունների զարգացման ջանքերը կազմում են քրեական արդարադատության գործընթացներում ներգրավված տարբեր դերակատարների միջև մասնատվածությունը նվազեցնելու նպատակով իրականացվող լայնածավալ ինստիտուցիոնալ բարեփոխումների մի մասը:

31. Հարցաթերթիկի պատասխան:

Ընտանեկան բռնության գործերով քրեական հետապնդման և դատապարտման ցուցանիշների վերաբերյալ տարանջատված տվյալների հասանելիությունը սահմանափակ է: Թեև հաղորդված դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալները հավաքվում և կենտրոնացվում են Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի միջոցով և մուտքագրվում են էլեկտրոնային համակարգ (Կառավարության 2019 թվականի թիվ 1381-Ն որոշում), այնուամենայնիվ, միշտ չէ, որ հնարավոր է հետևել, թե այդ դեպքերից քանիսի առնչությամբ է մեղադրանք առաջադրվել, դատավարություն իրականացվել և դատավճիռ կայացվել: Անհրաժեշտ է ունենալ առավել մանրամասն և գենդերային առումով զգայուն դատական վիճակագրություն՝ գնահատելու համար, թե արդյոք քննությունները հանգեցնում են իրական պատասխանատվության: Վիճակագրական տվյալների պատշաճ կերպ վերլուծման հետ կապված այս դժվարությունը հնարավոր է հաղթահարել նոր տվյալների շտեմարանի ներդրման միջոցով: Դրական զարգացում է այն, որ Քննչական կոմիտեում բարձր պաշտոններ զբաղեցնող կանանց համամասնության աննշան, սակայն կայուն աճ է արձանագրվել՝ 2021 թվականի 14%-ից (93 կին) հասնելով 2022 թվականին մինչև 14.9% (118 կին), իսկ 2023 թվականին՝ 16.7%-ի (130 կին):

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ թեև Հայաստանը ստեղծել է ընտանեկան բռնության արդյունավետ քննության և հետապնդման համար անհրաժեշտ ֆորմալ իրավական ուղիներ, այնուամենայնիվ, անհրաժեշտ են շարունակական ջանքեր՝ ապահովելու համար, որ այդ մեխանիզմները լինեն մատչելի, հետևողական և, ի վերջո, ունակ երաշխավորելու արդարադատության իրականացումը: Դրա շրջանակներում անհրաժեշտ է ինստիտուցիոնալացնել բազմամասնագիտական համագործակցությունը, ամրապնդել իրավասու մարմինների նախաձեռնությամբ իրականացվող *[ex officio]* ընթացակարգերը, կատարելագործել գործերի հետազոծման համակարգը և հաղթահարել մշակութային ու դատավարական այն խոչընդոտները, որոնք կարող են սահմանափակել բռնության ենթարկված անձանց՝ իրավական պաշտպանության դիմելու կամ այն շարունակելու կարողությունը:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Մշակել և ընդունել գենդերային հիմքով բռնության և ընտանեկան բռնության, այդ թվում՝ թվային միջավայրում գործադրվող բռնության գործերի պատշաճ և արդյունավետ քննության գործելակարգեր, այդ թվում՝ լավագույն գործելակերպերի վրա հիմնված ապացույցների հավաքագրման ու պահպանման մեխանիզմներ:	Բարձր

Դատապարտման ցուցանիշները

Դատապարտման ցուցանիշները հանդիսանում են ընտանեկան բռնության դեպքերին արձագանքելու հարցում արդարադատության համակարգի արդյունավետության և հուսալիության առանցքային ցուցիչը: Վերջինս ցույց է տալիս ոչ միայն քննչական և դատախազական մարմինների՝ գործերը հիմնավորելու կարողությունը, այլև ամբողջ համակարգի՝ բռնություն գործադրած անձանց պատասխանատվության ենթարկելու պատրաստակամությունը:

Հայաստանում ընտանեկան բռնության գործերով դատապարտման ցուցանիշների վերաբերյալ համապարփակ և տարանջատված տվյալները մնում են սահմանափակ և մասնատված, ինչը դժվարացնում է կատարման նկատմամբ մշտադիտարկումը և ազդեցության գնահատումը: 2024 թվականին ներդրված տվյալների հավաքագրման նոր համակարգը կարող է բարելավել այս իրավիճակը:

Ընտանեկան բռնության հաղորդված դեպքերի վերաբերյալ ոստիկանության վիճակագրական տվյալների հավաքագրումն իրականացվում է կենտրոնացված ձևով՝ Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի միջոցով, որտեղ տարածքային ստորաբաժանումները տեղեկատվություն են տրամադրում եռամսյակային հաշվետվությունների միջոցով՝ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ստորաբաժանումների կողմից ընտանեկան բռնության դեպքերով կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության ձևը սահմանելու մասին» Ոստիկանության պետի թիվ 22-Լ հրամանով սահմանված պահանջներին համահունչ: Այս տվյալները մուտքագրվում են «Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» Կառավարության (2019 թվականի) թիվ 1381-Ն որոշման համաձայն գործարկված էլեկտրոնային համակարգ: Թեև այս համակարգում արտացոլվում են դեպքերը, կիրառված պաշտպանության միջոցներն ու ներգրավված անձինք, այնուամենայնիվ, այն համակարգված ձևով չի կապում այդ մուտքագրումները քրեական արդարադատության գործընթացի արդյունքների հետ, մասնավորապես, թե արդյոք քննությունների արդյունքում առաջադրվել են մեղադրանքներ, հարուցվել են քրեական հետապնդումներ և, ի վերջո, կայացվել են մեղադրական դատավճիռներ ու կիրառվել պատասխանատվության միջոցներ:

Թեև էլեկտրոնային համակարգը նպաստել է տվյալների ստանդարտացմանը, այնուամենայնիվ, այն դեռևս չի ապահովում վերլուծական արդյունքներ, որոնք կարտացոլեն արդարադատության շղթայի արդյունքները: Հետևաբար, պետական և վերահսկողական մարմինները լիարժեք պատկերացում չունեն այն մասին, թե որքան արդյունավետ է քրեական արդարադատության համակարգը պայքարում ընտանեկան բռնության դեմ:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրման նորմատիվ իրավական կարգավորումների վերաբերյալ հետազոտության» (Ոսկանյան, 2024թ.) արդյունքները վկայում են այս բացի մասին: Հետազոտության մեջ Քաղաքացիական և քաղաքացիության վերաբերյալ միջազգային ուսումնասիրության և Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտի մեթոդաբանությունների կիրառմամբ հավաքված տվյալների համաձայն՝ 2023 թվականին ՀՀ քննչական կոմիտեի վարույթում նախաաձեռնվել է 1,848 քրեական վարույթ, որոնցից միայն 338-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ և 341 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան: Սա նշանակում է, որ գործերի մոտ 18%-ն ուղարկվել է դատարան՝ ընդգծելով քննված գործերի և դատարան փոխանցված գործերի թվի միջև էական տարբերությունը: Համեմատության համար հարկ է նշել, որ 2022 թվականին 126 անձի վերաբերյալ 122 գործ ուղարկվել է դատարան: Մեղադրական եզրակացությունների գերակշռող մասը վերաբերում է ֆիզիկական բռնությանը, մասնավորապես՝ ծեծի և մարմնական վնասվածքներ պատճառելու հոդվածներով նախատեսված արարքներին: Այս տվյալները վկայում են դատավարական բոլոր փուլերի իրականացման և գործերի կառուցման ռազմավարությունների կատարելագործման անհրաժեշտության մասին՝ քրեական գործերի վաղաժամ կարճումը կամ ավելի մեղմ պատժատեսակի նշանակումը կանխելու համար:

Արդարադատության համակարգի թափանցիկության բարձրացումը և գործերը՝ դեպքի վերաբերյալ հաղորդում ներկայացնելուց մինչև վերջնական դատական որոշման կայացումը հետագծելու հատուկ համակարգի մշակումը ոչ միայն կնպաստեն քաղաքականության առավել արդյունավետ մշակմանը, այլև կամրապնդեն հանրային վստահությունն արդարադատության համակարգի նկատմամբ: Միջազգային լավագույն գործելակերպերին համապատասխան՝ Հայաստանը պետք է բարելավի իր դատական վիճակագրությունը՝ ներառելով քրեական հետապնդումների, մեղադրական եզրակացությունների և դատավճիռների վերաբերյալ պարբերաբար հրապարակվող, տարանջատված տվյալները, ինչը հնարավորություն կտա շահագրգիռ կողմերին գնահատել առաջընթացը և բացահայտել ինստիտուցիոնալ բացերը:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Բարձրացնել թափանցիկությունը և մշակել գործերը՝ դեպքի վերաբերյալ հաղորդում ներկայացնելուց մինչև վերջնական դատական որոշման կայացումը հետագծելու հատուկ համակարգ:	Միջին
Պարբերաբար հրապարակել քրեական հետապնդումների, մեղադրական եզրակացությունների և դատավճիռների վերաբերյալ տարանջատված վիճակագրական տվյալները:	Միջին
Հետազոտել բռնության ենթարկված անձանց կողմից հաղորդում ներկայացնելու, ոստիկանության կողմից քննություն իրականացնելու և դատարանի կողմից վերջնական դատավճիռ կայացնելու փուլերի միջև ընկած ժամանակահատվածում գործերի կարճման հիմնական պատճառները՝ ապահովելու համար, որ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեպքերը հետապնդվեն համապարփակ կերպով:	Միջին

Ռիսկերի գնահատումը և ռիսկերի կառավարումը (Հոդված 51)

Հայաստանի ընտանեկան բռնության կանխարգելման շրջանակը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկերի գնահատմանն ու կառավարմանը՝ որպես բռնության ենթարկված անձանց շարունակական պաշտպանությունն ապահովելու և բռնության կրկնումը կանխելու կարևորագույն գործիքների:

Ռիսկերի գնահատումը

Իրավական հիմքը սահմանված է Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 13-րդ հոդվածում, որի համաձայն՝ իրավապահ և այլ իրավասու մարմինները պետք է գնահատեն ընտանեկան բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգը: Իրավապահ մարմինների կողմից հաղորդված դեպքին տրվող ցանկացած արձագանք և համապատասխան պաշտպանության միջոցների ընտրություն պետք է իրականացվեն ռիսկերի գնահատման հիման վրա:

Կառավարության 2025 թվականի փետրվարի 20-ի թիվ 181-Ն որոշմամբ սահմանվում է դեպքերի հայտնաբերման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ուղղորդման և ռիսկերի գնահատում անցկացնելու միասնական ու բազմաբնույթ ընթացակարգ: Որոշմամբ սահմանվում են պարտադիր ժամկետներ՝ 12 ժամ անհետաձգելի դեպքերի և 24 ժամ մնացած բոլոր դեպքերի համար, որոնց շրջանակներում պարտավոր են գործեն արագ արձագանքման ծառայության աշխատողները: Նույն որոշմամբ սահմանվում է ռիսկերի գնահատման ստանդարտացված մեթոդաբանություն, որը ներառում է ինչպես օբյեկտիվ ցուցանիշներ (օրինակ՝ անձի նկատմամբ

նախկինում կատարված բռնության և զենքի տիրապետման փաստ, սպառնալիքների իրականացման պատմություն, այնպես էլ սուբյեկտիվ չափանիշներ (օրինակ՝ տեսանելի վախ, հուզական անկայունություն կամ բռնության ենթարկված անձի մեկուսացում): Եթե ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը երեխա է կամ անգործունակ ճանաչված անձ, ապա դեպքի մասին պարտադիր տեղեկացվում է խնամակալության մարմինը, որը գնահատում է խնամքի կարիքներն ու հնարավոր այլընտրանքային կարգավորումները: Որոշմամբ սահմանվում է նաև հայտնաբերված ռիսկերի կառավարման հարցում իրավապահ մարմինների, սոցիալական պաշտպանության, կրթության և առողջապահության համակարգերի գործողությունների համակարգումը:

Առավել մանրամասն տեղեկություններ տրամադրվում են Ոստիկանության պետի 2024 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 88-Լ հրամանով, որը ֆորմալացնում է դեպքի վայրում անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչներն ու ընթացակարգը: Ոստիկանության ծառայողները պարտավոր են կիրառել կառուցվածքային հարցաթերթիկ, որը ներառում է վարքային, իրավիճակային և համատեքստային ռիսկի մի շարք գործոններ և փաստաթղթավորել, թե արդյոք առկա են առնվազն երեք ռիսկի ցուցանիշներ: Եթե այս շեմը բավարարվում է, ապա դեպքը համարվում է բարձր ռիսկային՝ հանգեցնելով անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու և հետագա մշտադիտարկման միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտության: Լավ իրականացման դեպքում այս գործիքները պետք է օգնեն ապահովել, որ ոստիկանության արձագանքը լինի ոչ թե կամայական, այլ հիմնավորված կառուցվածքային, ապացույցների վրա հիմնված այն մոտեցմամբ, որի հիմքում ընկած է բռնության ենթարկված անձի անվտանգությունը, և որն արդարացնում է կանխարգելիչ գործողությունների իրականացումը:

Ռիսկերի կառավարումը

Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի «Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելը» վերտառությամբ 11-րդ հոդվածով սահմանվում է շարունակական ռիսկերի կառավարման հիմնական մեխանիզմը: Սույն դրույթով սահմանվում է կանխարգելիչ հաշվառման համակարգ ինչպես այն անձանց համար, որոնց նկատմամբ կայացվել է նախագոյացման, անհետաձգելի միջամտության կամ դատարանի կողմից արձակված պաշտպանական որոշում, այնպես էլ ընտանեկան բռնության հետ կապված հանցանքի համար դատվածություն ունեցող չափահաս անձանց համար: Կանխարգելիչ հաշվառումը պատժի ձև չէ, այլ ռիսկերի մեղմման գործիք, որի նպատակն է մանրամասն մշտադիտարկում իրականացնել բարձր ռիսկի խմբում գտնվող անձանց նկատմամբ: Ցանկացած կանխարգելիչ միջոցառում ձեռնարկելուց հետո Ոստիկանության ծառայողը պետք է այս մասին տեղեկացնի իր վերադասին, ինչպես նաև աջակցության ծառայություններին և խնամակալության մարմիններին, երբ բռնության ենթարկված անչափահաս կամ անգործունակ անձ է՝ 7-րդ հոդվածի 5-րդ մասի, 7-րդ հոդվածի 9-րդ մասի և 7-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն: Բացի դրանից, Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 11-րդ հոդվածի և 2024 թվականի թիվ 91-Լ հրամանի համաձայն՝ բռնություն գործադրած անձը վերցվում է կանխարգելիչ հաշվառման, որի շրջանակներում հաշվառման վերցված անձի հետ անցկացվում է ամսական առնվազն մեկ հանդիպում և այցելություններ՝ մշտադիտարկման նպատակով: Այս աշխատանքներն օգնում են դիտարկել վարքային փոփոխությունները, դյուրացնում են ռեաբիլիտացման ծրագրեր ուղղորդումները և կանխում բռնության հետագա սրացումը:

Համաձայն Ոստիկանության պետի 2024 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 91-Լ հրամանի՝ կանխարգելիչ հաշվառում իրականացնելու համար պատասխանատու ոստիկանության ծառայողները պարտավոր են ամսական հանդիպումներ ունենալ ինչպես հաշվառված անձի, այնպես էլ բռնության ենթարկվածի հետ: Այդ հանդիպումների նպատակը վարքագծի մշտադիտարկումը, սպառնալիքի մակարդակի ցանկացած փոփոխության գնահատումը և բռնություն գործադրած անձի նկատմամբ սահմանված իրավական պարտավորությունների ամրապնդումն է: Եթե հաշվառման վերցված անձի նկատմամբ ընտանեկան բռնության վերջին արարքից հետո՝ մեկ տարվա ընթացքում չի կայացվել որևէ նոր պաշտպանական որոշում կամ համապատասխան հանցագործության համար մեղադրական դատավճիռ, նա կարող է հանվել հաշվառումից: Այնուամենայնիվ, այդ ժամանակահատվածում ծառայողները շարունակում են իրականացնել կանոնավոր մշտադիտարկում, ռիսկերի վերագնահատում և բացատրական աշխատանքներ, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում ուղղորդում ռեաբիլիտացման ծրագրերին :

2023 թվականի նոյեմբերի 17-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման և ֆինանսավորման, ինչպես նաև էլեկտրոնային հսկողության համակարգի տվյալների շտեմարանը վարելու, տվյալներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1986-Ն որոշումը: Էլեկտրոնային հսկողությունը պատշաճ իրականացվելու դեպքում կարող է նպաստել ռիսկերի կառավարմանը և պաշտպանական որոշումների արդյունավետության բարձրացմանը:

Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ Իրավասու մարմինների կողմից ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի և (կամ) ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածներին կամ ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածներին առնչվող հանցագործության դեպքերի վերաբերյալ ստացված մասնավոր կյանքի տվյալները գաղտնի են:

Յուրաքանչյուր դեպքը որպես մեկանգամյա իրադարձություն դիտարկելու փոխարեն, իրավական շրջանակը զարգացել է՝ ապահովելու շարունակական պաշտպանության մեխանիզմ՝ ուղղված երկարատև փնտրանքներին և կրկնազոր հացման կանխարգելմանը: Այս մոտեցումն առավել համահունչ է միջազգային չափանիշներին: Այս միջոցառումների իրականացման գործընթացը պետք է մշտադիտարկվի և այս համատեքստում կազմակերպվի վերապատրաստում՝ ապահովելու համար համապատասխան մասնագետների կողմից դրանց ճիշտ ընկալումն ու կիրառումը:

Արձանագրված է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Անհրաժեշտ է իրավական շրջանակի և գործելակարգերի ներդրման ուղղությամբ վերապատրաստում ու այդ գործընթացի մշտադիտարկում:	Բարձր

Արգելող անհետաձգելի կարգադրությունները (Հոդված 52)

Հայաստանում արգելող անհետաձգելի կարգադրությունները, որոնք հայաստանյան օրենսդրությամբ սահմանված են որպես «անհետաձգելի միջամտության որոշումներ», արձակվում են ոստիկանության կողմից՝ բռնություն գործադրած անձանց բռնության ենթարկված անձանցից անհապաղ առանձնացնելու համար՝ կանխելով անմիջականորեն սպառնացող վտանգն այն դեպքերում, երբ դատական պաշտպանությունը կարող է ուշանալ: Այս որոշումները Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված համակարգի մի մասն են, որը ներառում է նաև նախագուշացումը և դատարանի կողմից արձակված պաշտպանական որոշումները: Դրանք ունեն փոխլրացնող բնույթ, կարող են արձակվել անկախ հարուցված քրեական վարույթից, պահանջում են համաչափության և անհրաժեշտության վրա հիմնված պատճառաբանված որոշում, և որն առավել կարևոր է, չեն պահանջում բռնության ենթարկված անձի համաձայնությունը (5-րդ հոդվածի 2-րդ մաս): Ոստիկանությունը նախագուշացումը կիրառում է այն դեպքում, երբ ընտանեկան բռնության դեպքը հայտնաբերվել է առաջին անգամ, չկա անմիջականորեն սպառնացող վտանգ, իսկ անհետաձգելի միջամտության որոշումները կիրառվում են այն դեպքերում, երբ առկա են բռնության կրկնման հավաստի ռիսկեր:³²

7-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության իրավասու ծառայողը կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում, երբ առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի, այդ թվում՝ նախկինում կատարված բռնության փաստի մասին, կամ երբ ռիսկի այնպիսի գործոնները, ինչպիսիք են հետամտումը, վերահսկող վարքագիծը, զենքի տիրապետումը կամ պաշտպանության միջոցների նախկին խախտումները վկայում են բռնության կրկնման հավանականության մասին: Այս որոշումները, որոնք ուժի մեջ են մտնում անմիջապես, և դրանց գործողության ժամկետը քսանից քսանհինգ օր է, տրամադրվում է երկու կողմերին: Եթե բռնության ենթարկված անձը դիմում է դատարան պաշտպանական որոշման համար, ապա անհետաձգելի միջամտության որոշումը մնում է ուժի մեջ մինչև դատարանի կողմից որոշման կայացումը՝ ապահովելով, որ մինչ այդ բռնության ենթարկված անձը չմնա առանց պաշտպանության:

7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում են հնարավոր սահմանափակումները՝ ընտանեկան բռնություն գործադրած անձի անհապաղ հեռանալն ընտանեկան բռնության ենթարկվածի բնակության տարածքից (ոստիկանության ծառայողի ուղեկցությամբ անձնական իրերը վերցնելու համար մեկ անգամ վերադառնալու հնարավորությամբ), բռնության ենթարկվածին կոնկրետ վայրերում մոտենալու արգելքը, նվազագույն հեռավորության պահանջը, զենքի ժամանակավոր բռնագրավումը և բռնության ենթարկվածի կամ վերջինիս խնամքի տակ եղող անձանց հետ ցանկացած հաղորդակցության արգելքը: Ոստիկանությունը պարտավոր է ոչ միայն ապահովել բռնություն գործադրած անձի անհապաղ հեռանալը, այլև մնալ բնակության տարածքում մինչև նրա հեռանալը:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր (2020 թվականի ապրիլի 14-ի) ՍԴՈ-1522 որոշմամբ հաստատել է այս որոշումների, այդ թվում՝ վտարման համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը՝ պայմանով, որ դրանց իրականացումը համաչափ լինի ուրիշների կյանքի և առողջության պաշտպանության նպատակին և հաշվի առնի բռնություն գործադրած անձի բնակարանային ապահովման այլընտրանքային տարբերակները և բռնության ենթարկված անձի անվտանգությունը:

Եթե որոշումը կիրառվում է անչափահաս կամ անգործունակ ճանաչված անձի հետ համատեղ բնակվող միակ օրինական ներկայացուցչի նկատմամբ, ապա ծառայողը պարտավոր է անհապաղ տեղեկացնել խնամակալության և հոգաբարձության մարմնին, որպեսզի վերջիններս 24 ժամվա ընթացքում կազմակերպեն ժամանակավոր խնամքը (7-րդ հոդվածի 6-րդ մաս): Եթե բռնության ենթարկված անձը պետք է տեղափոխվի սպաստարան, ապա ոստիկանության ծառայողը չի հեռանում մինչև այդ անձը և նրա խնամքի տակ գտնվող անձինք կարողանան անվտանգ ձևով հավաքել իրենց իրերը և հեռանալ (7-րդ հոդվածի 8-րդ մաս):

32. Ոստիկանության կողմից հարցաթերթիկի պատասխան:

Ոստիկանության կողմից նախագգուշացում և անհետաձգելի միջամտության որոշումներ արձակելու ընթացակարգերը ստանդարտացվել են Ոստիկանության պետի (2024 թվականի դեկտեմբերի 4-ի) թիվ 24-Լ հրամանով: Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի (7-րդ հոդվածի 11-րդ մաս) համաձայն՝ անհետաձգելի միջամտության որոշումն ընտանեկան բռնություն գործադրած անձի կողմից կատարվելու նկատմամբ հսկողությունն իրականացնում է ոստիկանությունը, և որոշման պայմանների ցանկացած խախտում առաջացնում է իրավական հետևանքներ, այդ թվում՝ հնարավոր քրեական պատասխանատվություն կամ դատարանի կողմից պաշտպանական որոշման կայացման հիմք: Ոստիկանության պետի (2024 թվականի դեկտեմբերի 12-ի) թիվ 86-Լ հրամանով կարգավորվում են որոշումների պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն ու կատարումը՝ ներդնելով կատարման գործընթացը մշտադիտարկելու, սահմանափակումների շարունակական պահպանումը ստուգելու և ցանկացած խախտման արձագանքելու ընթացակարգեր:

Օրենքի 9-րդ հոդվածով կարգավորվում է անհետաձգելի միջամտության որոշումների և քրեական վարույթի փոխհարաբերությունը: Եթե գործը հանգեցնում է քրեական հետապնդման, և քննչական մարմինը կիրառում է կոնկրետ դատավարական միջոցներ, ինչպիսիք են կալանքը, դատարանի կողմից արձակված սահմանափակող որոշումները կամ վկաների պաշտպանության մեխանիզմները, ապա անհետաձգելի միջամտության որոշումը կարող է մասամբ կամ ամբողջությամբ կասեցվել այդ միջոցների գործողության ժամկետով: Այնուամենայնիվ, եթե կիրառված դատավարական միջոցների մեջ ռիսկի բոլոր գործոնները հաշվի առնված չեն, ապա անհետաձգելի միջամտության որոշումը կարող է զուգահեռաբար շարունակել գործել:

Անհետաձգելի միջամտության որոշումը կարող է բողոքարկվել ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում (Գլուխ 31.3, հոդված 222.11, որի համաձայն՝ դատարանը որոշումը կայացնում է 36 ժամվա ընթացքում, իսկ դատական ակտը կայացնում է 48 ժամվա ընթացքում), սակայն որոշման դեմ բողոք բերելը չի կասեցնում որոշման կատարումը (7-րդ հոդվածի 15-րդ մաս):

Օրենսդրության մեջ կատարվել են էական փոփոխություններ՝ ռիսկերի գնահատման և կառավարման համակարգ ներդնելու նպատակով, սակայն կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները հայտնում են դրա գործնական կիրառման հետ կապված դժվարությունների մասին: Առանցքային խնդիրը քրեական և քաղաքացիական արդարադատության համակարգերում ընտանեկան բռնությունը որպես լուրջ հանցանք չդիտարկելն է: Այս ընկալումը կարող է հանգեցնել մի իրավիճակի, երբ բռնություն գործադրած անձանց իրավունքները գերակայում են բռնություն վերապրածների անվտանգության և բարեկեցության նկատմամբ: Այս խնդիրը հատկապես ակնհայտ է, երբ կիրառվում է համաչափության թեստն այն դեպքերում, երբ բռնության ենթարկված անձին նկատմամբ ռիսկը թերագնահատվում է: Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները նշում են, որ «շատ հաճախ անհետաձգելի միջամտության որոշումը բռնություն գործադրած անձը բողոքարկում է դատարանում, և վերջինս այն բեկանում է՝ թողնելով բռնության ենթարկված անձին անպաշտպան»³³:

Անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր՝ ուսումնասիրելու համար այն պատճառները, թե ինչու են անհետաձգելի միջամտության որոշումները բեկանվում, և արդյոք այդ պայմաններում տեղի են ունենում բռնության հետագա դեպքեր: Միննույն ժամանակ, անհրաժեշտ է ապահովել, որ դատավորներն ու իրավական համակարգի մյուս դերակատարներն անցնեն պատշաճ վերապատրաստումներ՝ հասկանալու համար ընտանեկան բռնության դինամիկան, ուժի և վերահսկողության շրջափուլը, ինչպես նաև այն եղանակները, որոնցով բռնությունը կարող է ազդել ապացույցների ներկայացման վրա:

Արձանագրված է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Իրականացնել դատավորների և իրավական համակարգի մյուս դերակատարների վերապատրաստում՝ ապահովելու համար իրավական շրջանակի կիրարկումը՝ սահմանված նպատակին համապատասխան:	Բարձր
Հրավաքագրել անհետաձգելի միջամտության որոշումների վերաբերյալ տվյալներ, ուսումնասիրել դրանց կիրարկման պրակտիկան և դրանց խախտման դեպքերով հարուցված վարույթները՝ դրանց բեկանման պատճառներն ավելի լավ հասկանալու համար:	Միջին

Սահմանափակող կամ պաշտպանական որոշումները (Հոդված 53)

Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին ՀՀ օրենքը նախատեսում է պաշտպանական որոշումների կիրառումը (նման է սահմանափակող որոշումներին)՝ որպես մի համակարգի մաս, որը ներառում է նախագգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումներ (5-րդ հոդվածի 1-ին մաս): Դատարանի կողմից

33. Հարցաթերթիկի պատասխան

արձակված պաշտպանական որոշումների նպատակն է ապահովել բռնության ենթարկված անձի անվտանգությունը, կանխել կրկնագրհացումը և աջակցել երկարաժամկետ պաշտպանությանը:

Բռնության ենթարկված անձը կամ (նրա համաձայնությամբ) աջակցության կենտրոնը կարող է անկախ այլ ընթացակարգերից դիմել այս որոշումների համար (8-րդ հոդված): Եթե ընտանեկան բռնության ենթարկվածն անչափահաս կամ անգործունակ ճանաչված անձ է, ապա դրա համար կարող են դիմել նրա մերձավոր ազգականները, օրինական ներկայացուցիչները կամ խնամակալության մարմինները: Պաշտպանական որոշումները կարող են արձակվել անկախ հարուցված քրեական վարույթից կամ անհետաձգելի միջամտության որոշումներից կամ դրանց հետ միասին: Դատարանները պաշտպանական որոշումը կայացնում են չորսից տասներկու ամիս ժամկետով՝ վեց ամիս ժամկետով երկարաձգման հնարավորությամբ:

8-րդ հոդվածի 5-րդ մասում ներկայացված են հնարավոր սահմանափակումները՝ բռնություն գործադրած անձի հեռանալը համատեղ բնակելի տարածքից (հաշվի առնելով բռնության ենթարկված անձի ապաստարան տեղափոխվելու հնարավորությունը և բռնություն գործադրած անձի համար բնակության այլ վայրերի մատչելիությունը), բռնության ենթարկված անձի (այդ թվում՝ բռնության ենթարկված անձի խնամքի տակ եղող անձանց) կողմից հաճախակի գտնվելու վայրեր այցելելու արգելքը, սահմանված հեռավորության պահանջը, զենքի ի պահ հանձնումը, ֆինանսական պարտավորությունները (այլմենտային պարտավորությունների համար վճարման ենթակա գումարի չափով և անհետաձգելի ծախսերը), երեխաների հետ տեսակցությունների սահմանափակումը և բռնության ենթարկվածի կամ վերջինիս խնամքի տակ գտնվող անձանց հետ բոլոր տեսակի հաղորդակցությունների արգելքը: Բռնություն գործադրած անձը կարող է ընտանեկան բռնության ենթարկվածի բնակության վայրից իր իրերը վերցնել երկու ամիսը մեկ անգամ՝ ոստիկանության ծառայողի ուղեկցությամբ: Ձենքի ի պահ հանձնումը պետք է տեղի ունենա 10 ժամվա ընթացքում: Ռեաբիլիտացման ծրագրերին մասնակցությունը նույնպես կարող է պարտադիր լինել: Որոշման կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է ոստիկանությունը:

Պաշտպանական որոշումներն ուժի մեջ են մնում, քանի դեռ դրանց գործողությունը քրեական գործի հարուցման շրջանակներում չի կասեցվել կամ փոխարինվել պաշտպանության միջոցներով: 9-րդ հոդվածում նշվում է, որ եթե քրեական վարույթը հանգեցնում է կալանքը որպես խափանման միջոց ընտրմանը, բժշկական հաստատությունում հարկադրաբար պահելու մասին որոշման կայացմանը կամ վկաների պաշտպանության միջոցների կիրառմանը, ապա համապատասխան պաշտպանական որոշումների սահմանափակումները կասեցվում են: Այնուամենայնիվ, եթե քրեական միջոցառումներով չեն սահմանվում մոտենալու կամ հաղորդակցվելու սահմանափակումներ, ապա պաշտպանական կամ անհետաձգելի միջամտության որոշման համար կարող է դեռևս դիմում ներկայացվել, օրինակ՝ հաղորդակցությունը սահմանափակելու համար:

12-րդ հոդվածում նշվում է, որ անչափահաս կամ անգործունակ ճանաչված անձի նկատմամբ պաշտպանական որոշումներ չեն կարող կայացվել: Նման դեպքերում կիրառվում են այլընտրանքային պաշտպանության և արձագանքման միջոցներ, այդ թվում՝ ուղղորդում վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոններ կամ քաղաքացիական դատավարության ընթացակարգեր՝ համապատասխան օրենքներով, մասնավորապես՝ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (202-րդ հոդված) համաձայն՝ ընտանեկան բռնությունից պաշտպանական որոշումները քննվում են «հատուկ հայցային վարույթի կարգով» ընդունելով դրանց անհետաձգելիությունը: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով հայցվորներն ազատվում են դատական ծախսերից:

Քաղաքացիական դատավարության 27.1 գլխով սահմանվում են դատավարական երաշխիքներ, որոնք հնարավորություն են տալիս հայցադիմում ներկայացնել ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի բնակության վայրի կամ վերջինիս համաձայնությամբ աջակցության կենտրոնի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան (հոդված 234.1): Հայցադիմումը ներառում է կողմերի վերաբերյալ, ինչպես նաև սպառնացող վտանգի առկայությունը հիմնավորող տեղեկություններ և նախկինում կայացված միջամտության որոշումները (հոդված 234.2): Դատարանը հայցադիմումի վերաբերյալ որոշում է կայացնում առանց դատական նիստ հրավիրելու՝ հնգօրյա ժամկետում (հոդված 234.3), գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե *[ex officio]* և ձեռք է բերում տեղեկություններ, ինչպես նաև հանցակազմի հատկանիշներ հայտնաբերելիս դիմում է գլխավոր դատախազին: Արձակված որոշումներն ուժի մեջ են մտնում դրանց հրապարակման պահից, կարող են ներառել ժամանակավոր ապաստարանի տրամադրում, պարտավորեցնել բռնարարից հոգալ բժշկական ծախսերը և տրամադրվում են համապատասխան կառույցներին: Ոստիկանության կողմից որոշումների պահանջների կատարման նկատմամբ հսկողության ընթացակարգերը թարմացվել են (2024 թվականի դեկտեմբերի 12-ի) թիվ 86-Լ հրամանով:

Պաշտպանական որոշումները կարող են փոփոխվել կամ չեղյալ հայտարարվել խիստ պայմաններում, որոնք ուղղված են պաշտպանությունը դատավարական արդարության հետ հավասարակշռելուն:

Չնայած սույն դրույթներին՝ որոշումների կատարման գործընթացում խնդիրները մնում են չլուծված: Ոստիկանությունը հայտնել է պաշտպանական որոշումների խախտումների փաստով դատարան դիմելու հարցում դժվարությունների մասին: Այս մտահոգությունը հաստատում է նաև Կանանց իրավունքների կենտրոնը, որը որոշումների կատարումը

դիտարկում է որպես լուրջ խնդիր՝ նշելով, որ իրավական պարտավորությունները միշտ չէ, որ պատշաճ կերպ պահպանվում են ոստիկանության, դատարանների կամ սոցիալական ծառայությունների կողմից:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Ապահովել, որ Միջոցառումների ծրագրով նախատեսված՝ ոստիկանության ծառայողների, դատախազների և դատական իշխանության մարմինների համար վերապատրաստումն ընդգրկի թեմաներ, որոնք վերաբերում են պաշտպանական որոշումների խախտումներին արձագանքելու համապատասխան մեխանիզմներին:	Բարձր

Միակողմանի և ի պաշտոնե վարույթները (Հոդված 55)

Իրավապահ մարմինների ծառայողները լիազորված են գործել ի պաշտոնե *[ex officio]* իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում՝ ընտանեկան բռնության դեպքի մասին տեղեկատվություն ստանալուց հետո, այդ թվում՝ անհետաձգելի միջամտության որոշումների միջոցով (Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 7-րդ հոդված), անկախ այն հանգամանքից, թե բռնության ենթարկված անձը բողոք ներկայացրել է, թե ոչ: Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքը հստակորեն սահմանում է նաև, որ պաշտպանության միջոցները չեն կարող դադարեցվել քրեական գործ հարուցելու մասին ֆորմալ բողոքի բացակայության պատճառով:

Ընտանեկան բռնության գործերում Հայաստանի քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածը դատախազին լիազորում է *գործ հարուցել և հետապնդում իրականացնել ի պաշտոնե իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում* (այսինքն՝ հանրային մեղադրանքի կարգով): Սա ապահովում է, որ քրեական հետապնդումը կախված չլինի միայն բռնության ենթարկված անձի նախաձեռնությունից, ինչը հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով հարկադրանքի, կախվածության կամ վախի գործոնները, որոնք կարող են խոչընդոտել բռնության ենթարկված անձին ինքնուրույն արդարադատություն իրականացնելուն:

Ինչպես նշվել է վերևում, աջակցության կենտրոնները կամ օրինական ներկայացուցիչները կարող են միակողմանի *[ex parte]* վարույթում պաշտպանական որոշման համար դիմել դատարան, երբ դա անհրաժեշտ է անհապաղ և արդյունավետ պաշտպանություն ապահովելու համար: Անչափահասի կամ անգործունակ ճանաչված անձի դեպքերում դատարան կարող է դիմել մերձավոր ազգականները, օրինական ներկայացուցիչները կամ խնամակալության մարմինը՝ ապահովելով, որ վարույթն իրականացվի առանց անհարկի ձգձգումների կամ անկախ բռնության ենթարկված անձի կարողունակությունից կամ համաձայնությունից:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Ուսումնասիրել, թե արդյոք միակողմանի և ի պաշտոնե վերապահված լիազորություններն իրականացվում են գործնականում, հատկապես այն դեպքերում, երբ բռնության ենթարկվածը փորձում է հետ վերցնել իր բողոքը:	Ցածր

Բռնության ենթարկված անձի աջակցությունը վարույթներում (Հոդված 55)

Աջակցության կենտրոնները կարևոր դերակատարություն ունեն բռնության ենթարկվածներին իրենց իրավունքների մասին տեղեկացնելու և իրավական գործընթացներում նրանց օգնելու հարցում: Աջակցության կենտրոններն առաջարկում են անհատականացված աջակցություն, այդ թվում՝ ապահովում բռնության ենթարկվածի ուղեկցումը դատարան, մասնավոր կյանքի տվյալների գաղտնիությունը, ինչպես նաև հոգեբանական կամ սոցիալական ծառայությունների համակարգում: Օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ աջակցության կենտրոնները պարտավոր են հատկապես հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաներին կամ հատուկ կարիքներ ունեցող անձանց հասկանալի լեզվով և մատչելի եղանակով տրամադրել տեղեկություններ:

Բացի դրանից, անհրաժեշտության դեպքում, նախատեսված են հատուկ դատավարական կարգավորումներ, ինչպիսիք են դռնփակ դատական նիստեր անցկացնելու հնարավորությունը, հեռավար ցուցմունք տալու հնարավորությունը կամ առանձին սենյակում հարցաքննությունը՝ երկրորդային զոհականացումից խուսափելու համար: Երբ բռնության ենթարկվածը կամ վկան երեխա է, օրենքն առաջնահերթություն է տալիս երեխայի լավագույն շահերին, կանխելով դատական վարույթի ընթացքում հավելյալ հուզական վնաս պատճառելու հավանականությունը:

Այս երաշխիքների լիարժեք իրականացումը կախված է դրանց հետևողական կիրառությունից, գերատեսչությունների միջև ժամանակին իրականացվող համագործակցությունից, ինչպես նաև բռնության ենթարկվածների հատուկ կարիքների, այդ թվում՝ տրավմաների վերաբերյալ տեղեկացված մոտեցումների վերաբերյալ իրավական և սպասարկման ոլորտի անձնակազմի շարունակական վերապատրաստումից:

Արձանագրվել է էական առաջընթաց

Պաշտպանության միջոցները (Հոդված 56)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը և դրան հարակից իրավական ակտերը քրեական վարույթում ներգրավված անձանց համար նախատեսում են լրացուցիչ դատավարական երաշխիքներ, այդ թվում՝ դռնփակ դատական նիստեր անցկացնելու հնարավորություն, առանց բռնարարի հետ անմիջական առերեսման ցուցմունք տալու հնարավորություն, ինչպես նաև հատուկ պաշտպանության միջոցներ, ինչպիսիք են ինքնությունը թաքցնելը կամ տեղափոխումը: Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքը պարունակում է հատուկ դրույթներ՝ բռնության ենթարկված անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը և անձնական տվյալները պաշտպանելու համար: Սա հատկապես կարևոր է հետագա վնասը կամ վրեժխնդրությունը կանխելու համար: Ապաստարաններում և աջակցության կենտրոններում աշխատող մասնագետները, ինչպես նաև իրավապահ մարմինների ծառայողները պարտավոր են պահպանել գաղտնիության կանոնները՝ բռնության ենթարկված անձի գտնվելու վայրը կամ ինքնությունը բացահայտող տեղեկությունների բացահայտումից խուսափելու համար: Այս դրույթների արդյունավետությունը պահանջում է հետևողական և արհեստավարժ իրականացում բոլոր համապատասխան ոլորտներում:

Արձանագրվել է էական առաջընթաց

Իրավաբանական օգնությունը (Հոդված 57)

Հայաստանն ունի ընտանեկան բռնության ենթարկված անձանց իրավաբանական օգնության տրամադրումը կարգավորող ազգային օրենսդրական շրջանակ: Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասում հստակորեն նախատեսվում է, որ բռնություն վերապրածները կարող են դատական վարույթում դատական ներկայացուցչություն ստանալ, այդ թվում՝ հանրային պաշտպանի միջոցով:

Այս իրավունքը լրացուցիչ երաշխավորված է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով, որը հանրային պաշտպանությունը սահմանում է որպես կոնկրետ դեպքերում տրամադրվող անվճար իրավաբանական օգնության ձև: Նշված հոդվածի 5-րդ մասի 16-րդ կետը հստակ վերաբերում է ընտանեկան բռնության ենթարկված անձանց՝ այդպիսով ճանաչելով նրանց կարգավիճակը որպես խոցելի խումբ, որն իրավունք ունի օգտվելու այդ պաշտպանությունից: Այս դրույթի համաձայն իրավաբանական օգնությունը ներառում է՝

- ▶ խորհրդատվությունը և դատավարական փաստաթղթերի (օր.՝ բողոքների, միջնորդությունների) կազմումը.
- ▶ ներկայացուցչությունը՝ քրեական վարույթներով, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով:

Իրավաբանական ներկայացուցչությունը չի սահմանափակվում միայն քրեական գործերով: Բռնության ենթարկված անձինք, որոնք ցանկանում են դիմել պաշտպանական որոշումների համար՝ լինի դա անհետաձգելի, թե երկարաժամկետ, իրավունք ունեն օգտվելու ՀՀ հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրվող անվճար ներկայացուցչությունից՝ այդպիսով ապահովելով իրենց դատական պաշտպանությունից օգտվելու հնարավորությունն անկախ ֆինանսական միջոցներից:

Այնուամենայնիվ, կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները հայտնում են, որ բռնություն վերապրածներն արդարադատության հասանելիություն ապահովելու ընթացքում հաճախ բախվում են զգալի ֆինանսական բեռի: (Կանանց իրավունքների կենտրոնի պատասխանը հարցաթերթիկին)

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Ձեռնարկել միջոցներ՝ դատարան դիմելու գործընթացում կանանց համար առկա ցանկացած հավելյալ ֆինանսական խոչընդոտ վերացնելու համար:	Միջին

Գլուխ 7

Միգրացիան և ապաստանը

Կացության կարգավիճակը (Հոդված 59)

Կոնվենցիան ստորագրելիս Հայաստանը 59-րդ հոդվածի առնչությամբ վերապահում է արել: Վերապահումները վավեր են հինգ տարի ժամկետով, և այդ ժամկետը կարող է երկարաձգվել: 59-րդ հոդվածի համաձայն՝ պետությունները պետք է ապահովեն, որ կացության թույլտվությունը հասանելի լինի՝ ապահովելու համար, որ այն ընտանեկան բռնության ենթարկված անձինք, որոնց կացության կարգավիճակը կախված է ամուսինների կամ զուգրնկերների (դրանց՝ ներպետական օրենքով սահմանված իմաստով) կարգավիճակից, ամուսնալուծվելու կամ հարաբերությունը դադարելու դեպքում, և եթե առկա են առանձնակի բարդ հանգամանքներ, իրենց դիմումի հիման վրա ստանան կացության առանձին թույլտվություն՝ անկախ ամուսնության կամ հարաբերության տևողությունից: Սույն դրույթի նպատակն է ապահովել, որ ընտանեկան բռնության ենթարկված անձինք ստիպված կամ հարկադրված չլինեն շարունակել բնակվել իրենց բռնարարների հետ և բռնության ենթարկվեն միգրացիոն պատճառներով:

Գենդերային հիմքով ապաստան ստանալու հայցերը (Հոդված 60)

Ապաստանի հայցի վերաբերյալ որոշում կայացնելու գենդերագայուն ընթացակարգը

Հայաստանը «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի և «Փախստականների կարգավիճակի մասին» 1967 թվականի արձանագրության (այսուհետ՝ 1951 թվականի կոնվենցիա), ինչպես նաև մարդու իրավունքների համապատասխան միջազգային փաստաթղթերի կողմ պետություն է: Այդ փաստաթղթերի կիրառումն ապահովվում է «Փախստականների և ապաստանի մասին» 2008 թվականի թիվ ԼՕ-211-Ն ՀՀ օրենքով, որը համապատասխանում է միջազգային չափանիշներին: Օրենքը նախատեսում է փախստականի կարգավիճակի տրամադրում՝ 1951 թվականի կոնվենցիային համապատասխան: Բացի դրանից, ազգային իրավունքով փախստականի կարգավիճակ կարող է տրամադրվել նաև զինված հակամարտությունների, համատարած բռնության, մարդու իրավունքների զանգվածային խախտումների և այլ իրավիճակների հիմքով: Այն նախատեսում է նաև վերադարձելիությունից պաշտպանություն, երբ առկա է խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի ենթարկվելու վտանգ: Օրենքի համաձայն՝ զանգվածային ներհոսքի դեպքում կարող է կիրառվել ժամանակավոր պաշտպանության ռեժիմ: Վերջերս Հայաստանը կառավարել է էթնիկ հայ փախստականների լայնածավալ ներհոսք: «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 61-րդ և 62-րդ հոդվածների համաձայն՝ տեղահանված բնակչության գերակշիռ մեծամասնությունը փախստականի կարգավիճակ է ստացել ժամանակավոր պաշտպանության տակ վերցվելու միջոցով: Նրանցից որոշներն ունեն ՀՀ քաղաքացիություն, բնակվում են Հայաստանում որպես ՀՀ քաղաքացի, իսկ որոշները ստացել են ՀՀ քաղաքացիություն տեղահանվելուց հետո՝ դադարեցնելով իրենց փախստականի կարգավիճակը: Այս ներհոսքի համատեքստում լայնածավալ աշխատանքներ են իրականացվել թե՛ պետական մարմինների, թե՛ ՔՀԿ-ների կողմից՝ այդ փախստականների շրջանում գենդերային խնդիրները վերհանելու նպատակով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով իրավիճակի առանձնահատկությունը՝ պարտադիր չէ, որ դա ցույց տա կին ապաստան հայցողների և փախստականների ընդհանուր վիճակը:

Թեև ապաստանի տրամադրման վերաբերյալ որոշ տվյալներ առկա են, այնուամենայնիվ, դրանք, կարծես, գենդերային հիմքով տարանջատված չեն ըստ և ոչ էլ հնարավորություն են տալիս գնահատելու, թե արդյոք ապաստանը տրամադրվում է այդ հիմքով, թեև նշվում է, որ սոցիալական խմբի պատկանելությունը ներառված է ապաստանի տրամադրման հիմքերի մեջ:

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՄԱԿ ՓԳԸ) տվյալների համաձայն՝ կան որոշ անձի սեռով պայմանավորված առանձին գործելակերպեր: Դրանցից է հարցազրույցի ընթացքում ապաստան հայցողի նախընտրած սեռին լեզվին տիրապետող թարգմանչի և հարցազրույցավարի ներկայության ապահովման հնարավորությունը: Խոցելի իրավիճակներում գտնվող կանանց, մասնավորապես՝ երեխաներ կամ հաշմանդամություն ունեցողների, հղիների, միայնակ ծնողների, լուրջ հիվանդություններ կամ հոգեկան առողջության

խնդիրներ ունեցողների կամ խոշտանգումներ, մարդկանց թրաֆիքինգ կամ բռնության այլ ձևեր վերապրածների նկատմամբ արագացված ընթացակարգերը չեն կիրառվում: (Աղբյուր՝ ՄԱԿ ՓԳԸ-ի կայք, ամսաթիվ նշված չէ): Փաստաբանական ծառայություններն ապահովվում են ինչպես հանրային պաշտպանի միջոցով, այնպես էլ մասնավոր կարգով: ՄԱԿ ՓԳԸ-ի աշխատողը կարող է մասնակցել հարցազրույցին: Հարցազրույցը գաղտնի է: Եթե հայցը մերժվում է, ապա «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ապաստան հայցողներն ազատվում են բոլոր դատական ատյաններում իրենց դիմումի քննության համար պետական տուրք վճարելուց (2019 թվականին այն կազմել է 4,000 ՀՀ դրամ ՀՀ վարչական դատարանում, 10,000 ՀՀ դրամ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում և 20,000 ՀՀ դրամ ՀՀ վճռաբեկ դատարանում): «Սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ փախստականները ներառված են արտոնյալ խմբերի ցանկում, որոնց տրամադրվում է սոցիալական պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ՝ 20-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հայաստանն ունի գենդերային հիմքով բռնության դեպքերում միջամտության ստանդարտ աշխատակարգեր, որոնք հատուկ վերաբերում են փախստական ու ապաստան հայցող կանանց և մշակվել են Ղարաբաղի շրջափակումից հետո: Մինչ այդ, ՄԱԿ ՓԳԸ-ի կողմից ֆինանսավորվող և Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Սեռական և գենդերային հիմքով բռնության կանխարգելում և արձագանք» ծրագիրը հոգեբանական օգնություն էր ցուցաբերում այդ բռնության ենթարկված անձանց և անհրաժեշտության դեպքում ուղղորդում նրանց մասնագետների մոտ և այլ կառույցներ: Թվում է, թե որոշ վերապատրաստումներ և իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքներ իրականացվում են, սակայն անհրաժեշտ է ապահովել դրանց շարունակականությունը՝ հաշվի առնելով անձնակազմի հոսունությունն ու մյուս զարգացումները: Վերապատրաստման արդյունավետությունը կբարձրանա, եթե առկա լինեն գենդերային հարցերին առնչվող ուղեցույցներ և ստանդարտ աշխատակարգեր:

Թեև ապաստանի տրամադրման համակարգում կարելի է իրականացնել բարելավումներ, հատկապես՝ հստակորեն ապահովելով, որ գենդերային հիմքով հետապնդումը ճանաչվի որպես ապաստան հայցելու հիմք, հրապարակվեն գենդերային հիմքով հետապնդման վերաբերյալ ուղեցույցներ, պարունակելով ծագման երկրի գենդերագալստի նյութերին հղումներ, այնուամենայնիվ, փորձը ցույց է տալիս, որ փախստականի կարգավիճակի որոշման գործընթացում կիրառվում է ՄԱԿ ՓԳԸ-ի ուղեցույցը, ինչպես նաև վերապատրաստումներ են անցկացվել գենդերային հիմքով հետապնդման հիմքով ներկայացված հայցերի վերաբերյալ:

Արձանագրվել է հսկան առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Մշակել գենդերային հարցերին առնչվող ուղեցույցներ և ստանդարտ աշխատակարգեր՝ ապաստանի հայցերն արկայացնելու և դրանց վերաբերյալ որոշում կայացնելու գործընթացի համար:	Միջին
Ապահովել, որ ապաստանի վերաբերյալ տվյալները գենդերային հիմքով տարանջատված լինեն :	Միջին

Կացարանը

Հնարավոր է որ անձին տրամադրվի սենյակ Հատուկ կացարանում, եթե վերջիններիս կողմից դիմում է ներկայացվել և այնտեղ կա համապատասխան ազատ սենյակ: ՄԱԿ ՓԳԸ-ի տվյալների համաձայն՝ «Սենյակ հատկացնելիս կացարանի տնօրենի կողմից հաշվի կառնվեն այդ ընտանիքի անդամների թիվը, սեռը, տարիքը և այլ հանգամանքներ: Միևնույն ընտանիքին չպատկանող տարբեր սեռի անձինք միևնույն սենյակում չեն բնակեցվում»: Երբ Հատուկ կացարանում ազատ սենյակ չկա, ուղեգիր չի տրվում ապաստան հայցողին: Վերջինս, սակայն, իրավունք ունի դիմելու՝ դրամական օգնություն ստանալու համար՝ բնակարան վարձակալելու նպատակով: Օգնության հատկացումը որոշվում է սահմանված չափանիշների համաձայն՝ Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության և ՄԱԿ ՓԳԸ-ի աշխատակիցներից կազմված աշխատանքային խմբի կողմից: Դրամական օգնությունը տրամադրվում է սկզբում 3 ամիս ժամկետով, սակայն առավելագույնը 6 ամիս ժամկետով, որի ընթացքում պետք է ավարտվի ապաստանի դիմումի ուսումնասիրությունը: Եթե դիմումը բավարարվել է, ապա անձը կարող է դիմել հանրակացարանային սենյակ կամ սոցիալական տանը սենյակ ստանալու համար:

Թեև այս դրույթները գենդերագալստի մոտեցում են ապահովում ապաստան հայցողներին և նրանց ընտանիքներին կացարանով ապահովելու հարցում, այնուամենայնիվ գործնականում շարունակում են մնալ որոշ չլուծված խնդիրներ: Գործող կացարանը կարող է միաժամանակ տեղավորել միայն մոտ 50 մարդ, ինչը բավարար չէ: 2024 թվականին կառուցման փուլում էր գտնվում նոր ժամանակավոր տեղավորման կենտրոնը, սակայն քիչ հավանական է, որ այն ամբողջությամբ բավարարի առկա պահանջարկը: Ինչպես ՀՀ քաղաքացիները, այնպես էլ Հայաստանում բնակվող փախստականները բախվում են բնակվելու վայր գտնելու հարցում դժվարությունների՝ բարձր վարձավճարների, վատ պայմանների, անհրաժեշտ կահույքի կամ ենթակառուցվածքների բացակայության պատճառով, ինչը խորանում է նաև այն հանգամանքով, որ ապրուստի միջոցների բացակայությունը թույլ չի տալիս փախստականներին վճարել վարձավճարն ու կոմունալ ծախսերը:

Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս անդրադարձել է նաև սանիտարական պայմանների, սննդի ապահովման և այլ փաստաթղթավորված խնդիրներին: Բացի դրանից, մտահոգություններ են բարձրացվել կենտրոնից դուրս բնակվող անձանց տրամադրվող ոչ բավարար չափի դրամական օգնության վերաբերյալ: Առաջարկվող լուծումներից մեկն օրենքում փոփոխություններ կատարելն էր, որն ապաստան հայցողներին կտա աշխատելու հնարավորություն: Սա ողջունելի է, սակայն, կարող է բավարար չլինել կին ապաստան հայցողների՝ աշխատաշուկա մուտք գործելու հարցում ունեցած դժվարությունները լուծելու համար: **Հետևաբար, կարող է անհրաժեշտ լինի ձեռնարկել քայլեր՝ կին փախստականների հնարավորություններն ընդլայնելու համար, այդ թվում՝ լեզվի դասընթացների և այլ քայլերի միջոցով, որոնք կնպաստեն նրանց աշխատանք գտնելուն:**

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Շարունակել աշխատանքներ տանել ապաստան հայցող և փախստական կանանց համար կացարանի և զբաղվածության լուծումներ գտնելու ուղղությամբ:	Միջին

Արտաքսման արգելքը (Հոդված 61)

ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի առաջին մասում ամրագրված է *արտաքսման կամ հանձնման* ընդհանուր արգելքը: Թեև արտաքսման դրույթի վերաբերյալ գենդերահատուկ տեղեկություններ հասանելի չեն, այնուամենայնիվ, ինչպես նշվել է վերևում, գենդերային հիմքով բռնության, այդ թվում՝ մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց նկատմամբ չպետք է կիրառվեն արագացված ընթացակարգեր, ինչը գործնականում կարող է նպաստել *արտաքսումը* կանխելուն: Կրկին, կանանց համար տեղեկատվության և ընթացակարգերի պատշաճ հասանելիությունն ապահովող ստանդարտ աշխատակարգերի ընդունումը, որոնք հստակորեն սահմանում են, որ գենդերային հիմքով հետապնդումը կարող է լինել ապաստան հայցելու հիմք, ինչպես նաև ապահովում են, որ կանայք չդիտարկվեն միայն որպես ապաստանի հայց ներկայացրած իրենց տղամարդ ազգականների խնամքի տակ գտնվող անձինք, նույնպես կարող է ծառայել որպես լրացուցիչ պաշտպանության միջոց՝ արտաքսման կամ հանձնման ցանկացած ռիսկից խուսափելու նպատակով:

Արձանագրվել է էական առաջընթաց	
Միջոցառում	Գերակայություն
Մշակել գենդերային հարցերին առնչվող ուղեցույցներ՝ ապաստանի հայց ներկայացնելու և դրա վերաբերյալ որոշում կայացնելու գործընթացի համար՝ ներառելով արտաքսման և հանձնման արգելքի սկզբունքին վերաբերող դրույթներ:	Միջին

Վերապահումները

Հայաստանն իրավունք է վերապահել չկիրառելու Ստամբուլի կոնվենցիայի հետևյալ հոդվածների որոշ դրույթներ, մասնավորապես՝ 30-րդ հոդվածի 2-րդ կետը, 35-րդ հոդվածի համաձայն սահմանված ոչ մեծ ծանրության հանցանքների առնչությամբ 55-րդ հոդվածի 1-ին կետը, 37-րդ հոդվածի առնչությամբ 58-րդ հոդվածը, ինչպես նաև 59-րդ հոդվածը:

Եզրակացություն

Հայաստանը գտնվում է Ստամբուլի կոնվենցիայի վավերացման ճանապարհին՝ փոփոխություններ կատարելով օրենսդրության և քաղաքականության մեջ՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցում գենդերազգայուն մոտեցում ապահովելու նպատակով: Ինչպես նշվել է գեկույցի սկզբում, Հայաստանի ներպետական իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի տեքստը մինչև վավերացումը պետք է ներկայացվի Սահմանադրական դատարան: Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունը կարող է այս գործընթացում նպաստող գործոն լինել: Ավելին, 2019 թվականից ի վեր իրականացված օրենսդրության և քաղաքականության փոփոխությունները հասցեագրել են նախկինում բարձրացված առարկությունների զգալի մասը: Այնուամենայնիվ, դեռևս առկա են մի շարք ոլորտներ, որտեղ անհրաժեշտ է հստակ իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- i) բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի մշակում.
- ii) սեռական ոտնձգության հարցերով կենտրոնների ստեղծում.
- iii) օրենսդրական փոփոխությունների կատարում՝ կանանց նկատմամբ բռնության թվային հարթության համարժեք կարգավորումն ապահովելու համար, և
- iv) ազգային օգնության թեժ գծի ներդրում:

Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ նշված խնդիրները վերհանվել են և նախատեսված են գործող Գենդերային ռազմավարությամբ: Հավանաբար անհրաժեշտ կլինի իրականացնել նաև լրացուցիչ իրազեկման աշխատանքներ՝ ապահովելու համար բնակչության համաձայնությունը Կոնվենցիայի վավերացմանը, ինչը ևս նախատեսված է և գտնվում է իրագործման փուլում: Գործնականում չկա որևէ հստակ պատճառ, որը կխոչընդոտի Հայաստանի կողմից Կոնվենցիայի վավերացումը, ինչպես նաև դրա վավերացումից բխող ելակետային մշտադիտարկման ամբողջական գործընթացից և միջազգային համագործակցությունից օգտվելը:

Հղումներ

Ալմաջյան, Ս. Վ. (2024թ., դեկտեմբեր): Սեռական ոտնձգությունը և բռնաբարությունը Հայաստանում և Սփյուռքում. ինչպես են ամոթն ու տաբուներն ազդում արդարադատություն փնտրող՝ բռնություն վերապրածների վրա: Կոլումբիայի համալսարանի հումանիտար և բնական գիտությունների բարձրագույն դպրոց:

2023 թվականի տարեկան հաղորդումը Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին: (2024թ.): Աղբյուրը՝ <https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf>:

ԿնՆՎԿ: (2010թ.) Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ Կողմ պետությունների ստանձնած հիմնական պարտավորությունների վերաբերյալ թիվ 28 ընդհանուր առաջարկություն: Աղբյուրը՝ <https://digitallibrary.un.org/record/711350?ln=en&v=pdf>:

Եվրոպայի խորհուրդ: (2018թ.): «Կանանց նկատմամբ բռնության զոհերի աջակցության ծառայությունների քարտեզագրում՝ Ստամբուլի կոնվենցիայի չափանիշներին համապատասխան. մեթոդաբանություն և գործիքներ», Քելլի, պրոֆեսոր Լիզ: Աղբյուրը՝ <https://rm.coe.int/final-vaw-support-2019-eng-forms/168093b8b9>:

Եվրոպայի խորհուրդ: (2011թ.): Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, ԵԽՊԾ 210: Աղբյուրը՝ <https://rm.coe.int/168008482e>:

Եվրոպայի խորհուրդ: (2016թ.): Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրման և հետազոտությունների ապահովում. Ստամբուլի կոնվենցիայի 11-րդ հոդված, Ոսլբի, Սիլվիա: Աղբյուրը՝ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090001680640efc>:

Եվրոպայի խորհուրդ: (2020թ.): Ուղեցույց «Գեներային հավասարության և կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ Հայաստանի լրագրողների և լրատվամիջոցների աշխատակիցների համար», Բալաբանովա, Իլիանա, Կոչոյան, Անի: Աղբյուրը՝ <https://rm.coe.int/media-guideline-eng-final/1680a15260%2%A0>:

Եվրոպայի խորհուրդ: (2022ա): Կանանց և ընտանեկան բռնության դեմ միջոցների ոչ խտրական կիրառման ապահովումը. Ստամբուլի կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետ, Սոսա, Լորենա, Մեստրե Ի Մեստրե, Ռոբ Մ.: Աղբյուրը՝ <https://edoc.coe.int/en/violence-against-women/11029-ensuring-the-non-discriminatory-implementation-of-measures-against-women-and-domestic-violence-article-4-paragraph-3-of-the-istanbul-convention.html>:

Եվրոպայի խորհուրդ: (2022բ, դեկտեմբեր): Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի և վաղ միջամտության հարցերով տարածաշրջանային ուղեցույց. Արևելյան գործընկերության տարածաշրջան, Բելտուիչ, Սանդրա Յովանովիչ. Սքաիա, Մելիսսա Պետրանջելո, Վալլ, Բերտա:

Եվրոպայի խորհուրդ: (2023թ.): Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի քաղաքականությունների մշակման համար պատասխանատու համակարգող մարմինների ստեղծում. Ստամբուլի կոնվենցիայի 10-րդ հոդված, Անդրասեկ, Վալենտինա: Աղբյուրը՝ <https://rm.coe.int/setting-up-co-ordinating-bodies-responsible-for-policies-on-violence-a/1680add884>:

Եվրոպայի խորհուրդ: (2024ա): Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված, Բելտուիչ, Սանդրա Յովանովիչ, Վալլ, Բերտա, ՄըքՔարթան, Կիերան:

Եվրոպայի խորհուրդ: (2024բ): «Ոստիկանության արձագանքն ընտանեկան բռնությանը՝ ձեռնարկ ոստիկանության ծառայողների համար», Կանանց աջակցման կենտրոն, Հուսիեր Լ.: Աղբյուրը՝ <https://rm.coe.int/the-police-handbook-a6-eng/pdf/1680b2a464>:

Եվրոպայի խորհուրդ: (2024գ, դեկտեմբեր): «Ընտանեկան բռնության մասնագիտացված աջակցության ծառայությունները Հայաստանում. կարողությունների, որակի և շարունակական բարելավման ապահովում» զեկույց, Ջեյմս, Դիքի, Հովակիմյան, Գայանե: Եվրոպայի խորհուրդ:

Եվրոպայի խորհուրդ: (2024դ, հուլիս): Կարիքների գնահատման զեկույց Հայաստանում երեխաների պաշտպանության համակարգի ապահովման խնդիրները և բարեփոխման, այդ թվում՝ առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ, Ուրումովա, Իրինա, Ղազինյան, Սերգեյ և Մելքոնյան, Դավիթ: Աղբյուրը՝ <https://rm.coe.int/needs-assessment-report-eng-2024-final-with-disclaimer/native/1680b1a686>:

Սպահով անկյուն՝ բռնության ենթարկված երեխաների համար: (2023թ., հուլիսի 28): Աղբյուրը՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի կայք, մուտքի ամսաթիվ՝ 2025 թվականի մայիսի 5-ին՝ <https://www.unicef.org/armenia/en/stories/creating-safe-corners-child-victims-abuse>:

«Հավասարությունն այժմ և այլ կազմակերպություններ» ՀԿ (2024թ., օգոստոս): Հայաստանի վերաբերյալ տեղեկություններ՝ Երեխայի իրավունքների կոմիտեի 97-րդ նստաշրջանի ընթացքում դիտարկելու համար (2024 թվականի օգոստոսի 26-ից 2024 թվականի սեպտեմբերի 13): Աղբյուրը՝ https://equalitynow.storage.googleapis.com/wp-content/uploads/2024/10/28170818/Submission-for-Armenia_CRC-97th-Session_by-Equality-Now_SAC_WRC_Safe-YOU_as-submitted.pdf:

Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույց: (2011թ.): Աղբյուրը՝ <https://rm.coe.int/1680a48903>:

Ամբողջական ցանկ. Պայմանագրերի գրասենյակ (ամսաթիվը նշված չէ): Աղբյուրը՝ 2025 թվականի ապրիլի 10, 210-րդ պայմանագրի ստորագրությունների և վավերացումների աղյուսակից. <https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=signatures-by-treaty&treatynum=210>:

Հիմնարար իրավունքների գործակալություն: (2018թ.): *Ձեռնարկ խորականության դեմ եվրոպական իրավունքի վերաբերյալ*: Հիմնարար իրավունքների Եվրոպական միության գործակալություն, Եվրոպայի խորհուրդ:

Ղազարյան, Ս. (2021թ.): Հայաստանը և Ստամբուլի կոնվենցիայի դեմ էթնո-ազգայնական հարձակումները հաղթահարելու պայքարը: ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐԱՎԱՐԵՎՍՏՅԱՆ ԱՄՍԱԳԻՐ, *հատոր XXVII:1*, էջեր 167-186: Աղբյուրը՝ <https://www.swlaw.edu/sites/default/files/2021-03/Full%20issue.pdf>

ԳՐԵՎԻՈ: (2021թ.) 2021 թվականի հոկտեմբերի 20-ին ընդունված՝ Կանանց նկատմամբ բռնության թվային հարթության վերաբերյալ թիվ 1 առաջարկություն: Աղբյուրը՝ <https://rm.coe.int/grevio-rec-no-on-digital-violence-against-women/1680a49147>:

ԳՐԵՎԻՈ: (2022թ.): ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույցների միջանաժամկետ հորիզոնական ուսումնասիրություն:

Մաթոսյան, Մ., Գևորգյան Հ. և Զիլոզյան Ա. (2022թ.): «Սոցիալական աշխատողի պրակտիկայի ուղեցույց. Ընտանեկան բռնության մասին իրազեկվածության բարձրացում», Կանանց աջակցման կենտրոն, Երևան: Աղբյուրը՝ https://www.womensupportcenter.org/Social%20worker's%20practice%20guide%20made%20by%20WSC_for%20printing_ENG%20eef575104%20approved%20by%20EU.pdf:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով: (2019թ.): Ստամբուլի կոնվենցիա. զենդերային հիմքով բռնությանը վերջ դնելու հզոր գործիք: Աղբյուրը՝ <https://rm.coe.int/arm-2021-coe-istanbul-convention-handbook-for-parliamentarians-arm-081/1680a4cf8, a>:

Ներկայացվել է հատուկ խորհրդատվական կարգավիճակ ունեցող՝ «Փաստաբաններ հանուն մարդու իրավունքների» հասարակական կազմակերպության, «Մարդու իրավունքների հետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպության և «Կանանց ռեսուրսային կենտրոն Հայաստան» հասարակական կազմակերպության կողմից: (2020թ.): Հայաստանի վերաբերյալ շահագրգիռ կողմերի զեկույցը ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկման համար:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հարցերով կոմիտե (ԵԻԿ): (2024թ., սեպտեմբերի 13): *Եզրափակիչ դիտարկումներ Հայաստանի հինգերորդ և վեցերորդ համակցված պարբերական զեկույցների վերաբերյալ, CRC/C/ARM/CO/5-6*: Աղբյուրը՝ <https://www.refworld.org/policy/polrec/crc/2024/en/148966>:

ՄԱԲՀ (2023թ.): Գենդերային հավասարության հարցերում տղամարդկանց և տղաներին ներգրավելու ձեռնարկ: Ուելշ, Փատրիկ: ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ և Էկուիմունդո (Equimundo). առնականության և սոցիալական արդարության հարցերի կենտրոն:

ՄԱԲՀ (2024ա): Գենդերային հիմքով բռնության միջամտությունների ստանդարտ գործառական ընթացակարգեր, Հայաստան:

ՄԱԲՀ (2024բ): Մենք այստեղ ենք. Հայաստանում փախստականների շրջանում գենդերային բռնության որակական արագ գնահատում: Կիսիչ, Միա, ՄԱԲՀ:

ՄԱԲՀ-ի կայք: (Ամսաթիվը նշված չէ): *Help Հայաստան, Ապաստարանի ընթացակարգ*: Վերցվել է 2025 թվականի մայիսին, աղբյուրը՝ <https://help.unhcr.org/armenia/seeking-asylum-in-armenia/asylum-procedure/>:

Վենետիկի հանձնաժողով, Անաստաս և այլք (2019թ.): Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլի կոնվենցիա) վավերացման սահմանադրական հետևանքների վերաբերյալ եզրակացություն: Աղբյուրը՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2019\)018-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)018-e):

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է մայրցամաքում: Կազմակերպությանն անդամակցում է 46 պետություն, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE